

№16



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՓ
ՆՐՈՒՍԱՂԷՄԻ

ԾԶ ՏԱՐԻ



Զ-Է-Ը




1982



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
 ԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆ
 ՀԱՅՈՐ
 ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԾԶ ՏԵՐԻ



Գ. - Է. - Բ.

1982



ՄԻՈՒ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՒԱԿՄԼ - ԳՐԱԿՄԼ - ԲԱՆԱՍԻՐԱԿՄԼ

ՊԱՇՏՈՆԱԹԱՐԹ ԿՐՈՒՍԱԼԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԾԶ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1982

Յունիս - Յուլիս - Օգոստոս

Թիւ 6-7-8

1982

June - July - August

No. 6-7-8

S I O N

VOL. 56


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



199-98

St. James Press, Jerusalem



ՎԱՐՈՋԸ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ ՈՂՈՐՄՈՒԴԵԱՄԸ ԱՅ ԵՒ ԿԱՄՈՔԼ ԱՉՂԻՍ.
ԵՂԻՍԿՈՐՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՌՈՐԿՈՍ ԱՄԵԱՅԼ ՀԱՅՈՑ.
ԾԱՅՐԱՊԵՏ ԴԱՏՐԱՊ ԿԱՄԱՉԱԿԱՆ ՆԱԽՏԵԾՈՐ ԱՌՈՈՑ ԱՅՐԱՍԵԱԼ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱՌՈՐԿԵ ԷԶՄԱԾՈՒ

ՔՐԻՍՏՈՍԱԼԱՆԴԻ ՄԻՐՈՑ ՈՂՋՈՒՑ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻ-
ԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ ԹՈՒՐԿԻՈՑ, ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ԳԱՀԱՆԱՅԻՑ, ԿԵ-
ՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿԱՄԱՉԱԿԱՆ ԿԱՅՄԱԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՐԻՑ,
ԵՒ ՀԱՄԱՑՆ ՀԱԻԱՑԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ ՀԱՅՈՑ:

Բարեխնամողն Աստուած, Մեր Մայր Եկեղեցու բազմադարեան պատ-
մութեան ընթացում, մեր ազգին յաճախ է պարգեւել Ս. Հոգով ներշնչուած
եկեղեցական դէմքեր, որոնք լի երկնասուր շնորհներով, եռանդայորդ գործու-
նէութեամբ, նոր յոյսերով փառաւորել են մեր բազմադարեան Առաքելական
Եկեղեցու անդասանը:

Ինչպէս յայնմի է, ԺԸ. դարի առաջին կեսին, այդպիսի բազմաւոր
դէմքերից մին հանդիսացաւ Յովհաննէս Կոլոտ Արեւայիսկոպոս Բաղիբեցին,
որ, իբրեւ Կոստանդնուպոլսի Հայոց պատմական Աթոռի գահակալ, հոգի-
ների լուսաւորութեան լայն գործունէութիւն ծաւալեց, իր հիմնած բազմա-
թիւ դպրոցներով, տպարաններով ու գրական եւ կրթական բեղուն իրազոր-
ծումներով:

Այսօր, Մենք երջանիկ ենք յիշատակելու անունը եւ գործը նրա ամե-
նաւորհայի աւակեռ եւ նրա լուսաւորչական առաքելութիւնը շարունակող
լուսաբնակ Տ. Յակոբ Արեւայիսկոպոս Նալեանի, Պատրիարք Հայոց Կ.
Պոլսի, որի ծննդեան 275-ամեակը լրանում է այս օրի:

Տ. Յակոբ Արքեպիսկոպոս Նալեան երկու անգամ բազմել է Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռին՝ 1741-49 եւ ապա 1752-64 թթ., իսկ 1749-52 թթ. եղել է գահակալը Ս. Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռի: Այսպիսով, նա շուրջ 24 տարիներ շարունակ բախտորոշ դեր է կատարել Արեւմտահայոց հոգեւոր-կրթական, ու գրական վերածննդեան նախապարհի վրայ:

Մեծահամբաւ իր ուսուցչի օրինակով, Նալեան Պատրիարք եղել է եկեղեցական կեանքի կազմակերպիչ հզօր ոգի, բանիմաց փարոզիչ, մանկավարժ եւ մասեմագիր, հասցնելով ինքը եւս շնորհալի աշակերտներ, հոգեւոր գործիչներ, կրթական մշակներ:

Բարձր գնահատման արժանի հոգեւոյն Պատրիարքի դաւանաբանական, բարոյախօսական եւ գրական գործերը, որոնք իրենց արժէքը պահել են մինչեւ այսօր: Նալեան Պատրիարք առաջինը հանդիսացաւ, որ հմուտ ուսումնասիրութեամբ վերածնունդեց Ս. Գրիգոր Նարեկացու եւ Եզնիկ Կողբացու գրական-Աստուածաբանական մեծ ժառանգութիւնը: Նրա «Վէմ Հաւատոյ»-ն, «Զէմ Հոգեւոր»-ը, «Գիրք Աղօթից»-ը եւ այլ գործեր, մնայուն արժէքներ են մեր եկեղեցական մասեմագրութեան մէջ:

Մեր օրերի մեծանուն Պատրիարք՝ Մաղափա Օրմանեանի վկայութեամբ՝ «Շատ մեծ եղաւ Նալեանի արդիւնքը Հայ եկեղեցիի համար. իրաւամբ արժանի է, որ հրօսեցիք եւ Տաթեւացիէ ետքը՝ մեր ուղղափառ սուրբ եկեղեցւոյն բազմեալիս վարդապետներուն հետ յիշուի իր անունը»:

Այսպէս է, որ Յակոբ Նալեան Պատրիարք իր անձնուրաց կեանքով ու բազմադիրք գործունէութեամբ հանդիսանում է ԺԸ. դարի մեծագործ մեր Պատրիարքներից մէկը:

Մենք սիրով եւ խոր գոհունակութեամբ ենք ընդառաջում Ամենապատիւ Մեր Եղբօր՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Շնորհ Արքեպիսկոպոս Գալուստեանի 25 Մարտ 1981 թուակիր դիմումին եւ սոյն Մեր կոնգրակով հրաւիրում ենք Մեր Մայր եկեղեցին եւ համայն Մեր հաւատացեալ ժողովուրդը որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի, սոյն տարուայ աշնան արժանավայել կերպով տօնախմբելու պայծառ յիշատակը եւ անկորնչելի վատնակը Յակոբ Նալեան Սրբազան Պատրիարքի, նաեւ ջերմապէս աղօթելու նրա հոգու խաղաղութեան համար յաւերժութեան մէջ:

«Յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յեւս գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատացն» (Եբր. ԺԳ. 17): Ամէն:

(ԿՆԻՐ)



Մաղափա Օրմանեան
ՍԱՆՏԱԿՈՆՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ԵՒ ԿԱՏՈՒՆԻ
ՊԵՆՏԵՔՆԵ ԶԵՅՈՍ

Տօնաւ կոնգրակս ի 24 Յունիսի
1981 Փրկչական ամի,
եւ ի տուարիս Հայոց ԹՆԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Համար 1063

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՐԵՐ ՅԱԿՈՐ ՆԱԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ

Յակոբ Նալեան Պատրիարք ծնած է 1706ին, Ակնայ Զիմարայ գիւղը: Զաւակն է մահտեսի Պօղոս Նալօղլուի և մահտեսի Թամամի:

Ունեցած է քոյր մը և եղբայրներ: Փոքր տարիքէն որբացած է՝ կորսնցնելով իր մայրը: Մինչև 14 տարեկան կը մնայ իր ծննդավայրը, ուր ուշադրութիւն կը գրաւէ իր աւշիմութեամբ: Բարեկիրտ սաստայնակն մը հոգածու ձեռք կ'երկարէ Յակոբի, իր պաշապանութեան տակ առնելով ու հետաքրքրուելով անոր ուսումով, Միասին Պոլիս կ'երթան, ուր նախ կը յանձնուի Պաղտատար Դպիր անունով վարժապետի մը խնամքին: Լաւելի վերջ կը ժամէ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Յովհաննէս Կոլոտի հիմնած համրաւուար դպրանոցը:

Կոլոտ կ'ուզէր ծաղկեցնել այս դպրանոցը ժամանակին ոգիին ու բմբունմեքոսն համաձայն, դարգացած ու նուիրեալ կեկեղեցականներ պատրաստելու համար: Այդ երջմանիկ խումբէն կտրելի է նկատել Յակոբ Նալեանն ալ, որ Կոլոտի, Խարբեղցի Ղուկաս վարդապետի և Սեթոստացի Գասպար Դպրի նման վարժապետներու հսկողութեան տակ դարգացուց իր մտային կարողութիւնները:

1726ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի աւագանի անունը անփոփոխ պահելով: Իսկ 1728ին կը ստանայ վարդապետական գաւազան: Նոյն թուականին տպուած իր Կոլումբ Ընծայուքեան գրքին յիշատակարանին մէջ ջնորենայ ու բանասէր քացատրութիւնը գործածուած կը տեսնենք իր մասին: 1730ին էջմիածին կ'ուղեորի եպիսկոպոստանու համար: Յաջորդ տարին, Դպրատան իր ընկերներէն Սարգիս Վրդ. Կեսարիոյ Առաջնորդ կը կարգուի: Անոր հետ ինք ալ Կեսարիա կը մեկնի ու քանի մը ամիսներ իր հոգեւոր եղբոր կեկեղեցական ու վարչական աշխատութիւններուն օժանդակելէ վերջ Պոլիս կը վերադառնայ:

1732ին Երուսաղէմ կու գայ Պատրիարքին հրահանգով, ուր իր գերաւանջորդ բնաւորութեամբ ու անկեղծ նկարագրով ուշադրութիւնը կը գրաւէ Գրիգոր Շղթայակի Պատրիարքին ու կ'արժանանայ անոր անվերապահ համակրութեան: 1734ին Պարձեալ կու գայ Երուսաղէմ իր երեք ընկերներուն՝ Յովհաննէս, Պօղոս և Ղազար վարդապետներուն հետ, միխթարու համար Շղթայակիբը, որ չափազանց բնկնուած էր իր սիրելի Աթոռակալին և մտերիմ խորհրդակցանի: Հաննա վարդապետի վախճանումով, Երուսաղէմ գտնուած միջոցին Նալեանի Մայրաքոյն վարդապետութեան աստիճան կը շնորհուի Շղթայակիբի կողմէ՝ ի վարձ իր բոլորանուէր ծառայութիւններուն: Աւելի ուշ, Կոլոտի ալ հաճութեամբ, զինք կը նշանակէ Երուսաղէմի Միաբան և իրաւասու վարիչ՝ Ս. Աթոռին Պոլսոյ գործերուն:

Յաջորդ տարի առաջնորդ կ'ընտրուի էնկիւրիի (Անգարա) հայոց: Նոյն թուականներուն էնկիւրիի հայերը գրեթէ մեծամասնութեամբ Հռոմէականութիւնը ընդունած էին: Որքան որ Նալեանի նման խոնկ ու խաղաղարար հոգեւորականի մը ներկայութիւնը անհրաժեշտ էր հոն, Կոլոտ չ'ուզեր Նալեանի նման խոսափելիք ուժ մը իրմէ հեռու պահել, ու անոր փոխանորդը՝ Երուսաղէմի Միաբան Գաղտատացի Պետրոս վարդապետը կը զրկէ հոն:

1737ին Կոլոտի հրամանով Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը կ'երթայ, ստուգելու համար թէ Յովհաննէս Մկրտչի աշխնները իրապէս հոն կը գտնուին թէ ոչ, իր կատարած հետազոտութիւններով երևան կը հանէ հին կնիք մը այս պարագան հաստատող: Կնիք մըն ինք կը գործածէ և դրան վրայ զետեղել կու տայ վիճադիր և

անթուակիր արձանագրութիւն մը, որ ներկայիս կը գտնուի Պոլսոյ Գումգումուրի Մայր Եկեղեցիի բակը: Նախան իր խանդավառ և օգտաշատ գործունէութեամբ սկսած էր ուղեւորութեան զանազան և փայլիլ Պոլսոյ եկեղեցական դասուն մէջ, և երկու Պատրիարքներն ալ կը քաջալերէին զինք: 1740 ին նախ Շէթրայայի և ապա Կոլում իրեն կը վստահին Պատրիարքական Փոխտնորդի պաշտօնները: Կոլում Պատրիարք նոյնիսկ կը խորհէր հրաժարիլ իր պաշտօնէն և սպառիչ աշխատանքներէն և Երուսաղէմ հաստատուելով՝ առանձնանալ Ս. Յակոբի խաղաղ միջնորդին մէջ՝ հոգեւոր կենցաղի նուիրելով կեանքի մնացած իր օրերը: Նոյնը կը փափաքէր նաև Շէթրայայի և այս նպատակով 1727 ին, վանքին մէջ մասնաւոր բնակարան մը պատրաստել տուած էր իր սիրելի եղբոր՝ Յովհաննէս Կոլում Պատրիարքի համար: Այս փափաքը չ'իրականանար դժբախտաբար, որովհետև առաջի սև ամպեր անակնկալօրէն կու գան միապէս Պոլսոյ Պատրիարքական Աթոռը: 1741 Փետրուար 12 ին կը վախճանի Կոլումս իր անժամանակ Կոլումսը կը պատահի շրջանի մը մէջ, երբ ազգը գիւղ շատ բանի կ'աշխատէր իրմէ: Կոլում իր կենդանութիւնն նախատեսելով ու ներքնապէս զգալով իր մտաւորական մահը, կտակ մը պատրաստած էր, որով իրեն յաջորդ կը նշանակէր Նալեանը: Իր փափաքն էր հմուտ ու վստահիլ իր ձեռնասունը տեսնել Պոլսոյ Պատրիարքական Աթոռի վրայ: Համաձայն Կոլումի կտակին, ժողովուրդը և եկեղեցական դասը համախորհուրդ՝ Նալեան Յակոբը Պատրիարք կ'ընտրեն 1741 Փետրուար 15 ին: Նալեան սիրով կը ստանձնէ այս դժուար և պատասխանատու պաշտօնը, ընթանալով իր մեծանուն նախորդին լուսաւորիչէն:

Կոլումի սկսած կրթական աշխատանքները և մշակութային ձեռնարկները կը շարունակուին նոյն հոռուքով: Ծնորհիւ իր խոհմ ազիրին, վարչական և եկեղեցական գործերը կը ղեկավարուին ձեռնհասօրէն: Կրօնական ու գաւառական հորացրու նկատմամբ աւանդապաշտ ու ջերմ պաշտպան ըլլալով հանդերձ, երբեք չ'ուզէր որդեգրել խստամբար վարմանը մը՝ մասնաւորաբար անոնց հանդէպ, որոնք պանաղան պատրուակներով կամ օտար աղեղնութիւններու ենթակայ՝ կը հռաւանջայ անհրաժեշտ ձեռնարկներով: Այս ընթացքը պատճառ կ'ըլլայ որ խիստ քննադատութեան ենթակուի շատերու կողմէ, և թոյլ նկատուի իր հաշտարար աւ խոհմ նկարագիրը: Իր պատրիարքութեան շրջանին երկու անգամ՝ 1746 ին և 1747 ին, էջմիածնէն կու գան մտահոգիչ լուրեր և բողոքներ՝ օրուայ Կաթողիկոս Ղազար Զահեկեցիի գործունէութեան մասին: Նալեան էր խնդրուի անյապաղ միջամտութիւն և վճռական կարգադրութիւն՝ կանխելու համար յառաջ գալիք անհամաձայնութիւնները և խռովութիւնները: 1748 ին Մայր Եկեղեցիին մէջ կը զուգարուի Ազգային ժողով մը և կ'որոշուի երկու լիազօր վարդապետներ զրկել էջմիածին՝ բարեկարգելու համար Մայր Աթոռի գործերը և ի հարկին՝ Ղազար Զահեկեցիին յաջորդի մը ընտրութեան մասին մտածելու: Նալեան իր հեղինակուող անհաստատութեամբ ամէն մարդի մէջ կ'արձանագրէ յիշատակելի յաջողութիւններ և զնահատելի ծառայութիւններ, որոնք լուսաւոր էլ մը կը կազմեն իր կեանքին մէջ:

Նալեան Յակոբ Պատրիարք ունեցած է հակառակորդներ ալ, որոնք դժգոհ իր գործունէութենէն, 1749 Մարտ 26 ի Զատիկին, երբ հանդերձեալ էր Ս. Պատարագ մատուցանելու, անգիտակ մտքով մը մասնակցութեամբ ու ռաբիկաններու պաշտպանութեան ներքե, Մայր Եկեղեցի կը խուժեն և Պրոխորոն Սիլիստրեցի Երուսաղէմի Միտրան վարդապետ մը Պատրիարք կը նշանակեն: Այս ամօթալի դաւը, օրեր առաջ գաղտնիօրէն ծրագրուած ու կազմակերպուած էր կարգ մը ազգեցիկ ամիրաներու կողմէ, որոնք զանազան պատճառներով զառնեցած էին Նալեանէն, որ կ'ընդունէ կառութեան գծնդակ ու ծանրակշիռ ըլլալը, և նոր բարդութիւններու ծնունդ չտալու համար անմիջապէս կը հեռանայ եկեղեցիէն և կ'ապաստանի Եւստուֆեան գերդաստանի մէծ պապ՝ արքունի ժամագործապետ խոճա Եւստուֆեան բնակարանը: Այս պէտքով վերջ կը գտնէ Նալեանի պատրիարքութեան առաջին շրջանը՝ 1741-1749:

ս Սակայն Պրոխորոնի ապագան ու նենգամիտ ընթացքը շուտով արձագանք կը

Պատեն մայրաքաղաքին մէջ, յուզումի մասնակցով համայնքը: Ժողովուրդին կուտակուող դժգոհութիւնն ու զայրոյթը չ'ուշանար արժանի պատասխանը տալու անոր, որ հարկադրաբար հրաժարի իր բռնադատւած Աթոռէն, շարաթ մը միայն կրելով Պատրիարքական ասան: Պրոխորոն ճարանատ և ամօթահար խոյս կու տայ Պոլիսէն և կ'երթայ Սամատն: Այս ցուալի գէպէն ազդուած, Նալեան կ'ուզէ մեկուսանալ Ս. Գէորգ եկեղեցին և չի փափաքիր վերադառնալ իր Աթոռը: Ազգային Ժողովն ալ իր քուէները կը կեդրոնացնէ Մշոյ Ս. Կարապետ վանքի Անաշնորդ Մինաս Ակնեցիի վրայ: Երբ Պոլսոյ Պատրիարքական հարցը տապէսով իր լուծումը կը գտնէ, անսպասելի դոժ մը սակայն կը հասնի Երուսաղէմէն, վերստին սուգի մատնելով մայրաքաղաքի հայութիւնը: Գրիգոր Շղթայակիւր Պատրիարքը կը վախճանի: Նոր թեկնածու մը պէտք է, ըլլալու արժանաւոր յաջորդը Շղթայակիւրի: Ազգային Ժողովը 13 Ապրիլ 1749ին իր քուէները կը կեդրոնացնէ Յակոբ Նալեանի վրայ, որուն ընտրութիւնը գոհունակութեամբ կը գիտաւորուի վանքին մէջ ևս: Ընտրութենէն վեց ամիս վերջ կը հասնի Երուսաղէմ և 1750ին պաշտօնապէս կը ստանձնէ իր նոր պաշտօնը: 1752ին Երուսաղէմ ուխտի կու գայ Նալեանի վաղեմի մէկ մտերիմը՝ Պաղիր-կեանպաշը Ակնեցի Եսայակ ամիրան, որ վստակելի և ազդեցիկ դէմք մըն էր յաշտէրութեան: Նալեան, յարմար առիթով մը, ամիրային դառնօրէն կը գանգատի չըջապատէն ու կրած նեղութիւններէն և կը խնդրէ որ ամիրան ձեռով մը միջամտէ ու գինք դարձնալ Կ. Պոլսոյ Պատրիարք կարգէ: Ամիրան կը համոզուի Նալեանի անկեղծ արտայայտութենէն, և կը խոստանայ ամէն կերպով ընթացք տալ անոր խնդրանքին: ամիրան այնքան վստահ իր յաջողութեան՝ Երուսաղէմէն մեկնած ատեն Նալեանն ալ միտսին Պոլիս կը բերէ: Այդ շրջանին Պոլսոյ Պատրիարք էր Գէորգ Ղափանցին, որ յաջորդած էր Մինաս Ակնեցիին, այս վերջինին կաթողիկոսանալուն հետեանքով: Գէորգ Ղափանցին առանց դժուարութիւն յարուցանելու կը յօժարի հեռանալ իր պաշտօնէն, և 16 Մայիս 1752ին Նալեան Յակոբ վերստին կը ստանձնէ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը արքունի վաւարացումով: Հետեաբար, Նալեանի Երուսաղէմի պաշտօնավարութիւնը տեւած կ'ըլլայ երեք տարի, իսկ Աթոռին մէջ ապրած կ'ըլլայ միայն երկու տարի, առանց նշանակելի մեծ գործունէութիւն մը արձանագրելու:

1753 Մայիս 12ին կը վախճանի Մինաս Ակնեցի կաթողիկոսը: Էջմիածնի Միաբանները կը խնդրեն Յակոբ Նալեանէն որ յօժարակամ ընդունի Լուսաւորչի Աթոռը: Նալեան կը մերժէ իրեն մատուցուած առաջարկը և Ժողովը իր տեղ կ'ընտրէ Աղեքսանդր Բիւզանդացին, որ երկու տարի յետոյ կը վախճանի: Միաբանները անգամ մը ևս կը կրկնեն իրենց առաջարկը, և կը փափաքին Նալեանի նման փորձառու, ձեռնհաս և աւանդապա հոգեւորական մը տեսնել կաթողիկոսական Աթոռին վրայ: Նալեան դարձնալ կը մերժէ այս պատիւը, հաւանաբար առողջական պատճառներ նկատի առնելով: Բայց կը գլխաւորէ Մայր Եկեղեցւոյ մէջ դուժմարուած Ժողովը, ուր Սահակ Եպիսկոպոսը, կոչուած Առաքին, կ'ընտրուի կաթողիկոս:

Նալեանի կեանքը կը սկսէր իր մայրամուտին մօտենալ: Հանգստանալու և կաղերուրուելու համար 1764ի սկիզբները կը քաշուի Սկիւտարի Երուսաղէմատունը, զոր նորոգած էր 1746ին: Նալեան Պատրիարք իր վերջին Պատարագը կը մատուցանէ Մայր Եկեղեցւոյ մէջ նոյն տարւոյ Ապրիլի 11ին (Ս. Զատիկի օրը):

Նալեան Պատրիարքի մեծագոյն փափաքը իր կենդանութեան իրեն յաջորդ Պատրիարքը տեսնելն էր: Ի մտի ունէր արգէն Պրուսայի Առաջնորդ Սամուէլ Երզնկացին, որ թէև Ժողովէն ընտրուեցաւ, բայց մերժեց իրեն ընծայուած պատիւը: Նալեանի երկրորդ յարմարագոյն թեկնածուն Պոլիս նստող Երուսաղէմի փոխանորդ Գրիգոր Վրդ. Պատմաճեանն էր, որ ընտրուեցաւ 13 Մայիս 1764ին գումարուած Ժողովին կողմէ: Ներքնապէս զոն էր մեծանուն Պատրիարքը, և իր եկեղեցական սպաններէն մաս մը կը նուիրէ Մայր Աթոռին, միաբաններն ալ կը զրկէ Երուսաղէմ՝ Ս. Յակոբ և Մշոյ Ս. Կարապետ վանքը, մաս մըն ալ Գումդափարի Մայր Եկեղեցին:

Նալեան Պատրիարքի ծննդեան 275ամեակի առիթով, ոտորեւ կը իրաւասակեմք մեծագործ հոգեւորականի նամակներէն երկուքը, առնելով զանոնք Ս. Արքեպիսկոպոս Զեռագրաց Մատենադարանէն: Գրուած են տնոնք Մուսաղէմ եւ ուղղուած Պոլսահայ ազգեցիկ դէմքերու: ԽԱՐԻ.

ՀԱՅՍԻ

Ի սրբոյ Բաղաթա Մուսաղէմէ, եւ յամենից գերասուրբ ճեօրեւնական ճեղեպաց, եւ ի սոցիւն աւելածու ծառայէ ի Յէր Յակոբ մեղապարտ վարդապետէ, եւ ողորմութեամբն Աստուծոյ անարժան Պատրիարք եւ յԱրքեպիսկոպոսէ, յորմէ սիրով ողջունիւ, կարօթիւ, եւ օրհնութեամբ:

ԱՌՂԱՆԻՆԻՍԻՆ

Ծանիր, ականս արեւ, եւ սրտիս նեցուկ, ներկայ ժամանակիս գեղեցիկ Յօսէփ ամենարարեպաշտօն ճաղուպ աղայ, զի լսելով իմ զբարի յառաջդիմութիւն քո զօգնելու խղճայեաց զհեշտայի թուիլդ յալս արքունեաց, եւ յերիտասարդական հասակիդ, զխոհմական շարժմունս ծերունեաց, ո՛չ սակաւ ցնծամ ի հոգի եւ ի մարմին, միշտ զայդպէս, եւ այլ առաւել զկեալդ ախորժելով, որ բարեբունն Աստուած պահեսցէ զքեզ ի չար աշաց, յակնարատ մախացողացն նենգութեանց, եւ դարանակալութեանց, եւ արասցէ իբրեւ զծիթնի պտղայից, իբրեւ զորթ ողկուզաբեր, որպէս զհասկ ցորենոյ ճանաչաւոր, խելամուտ ի բանս, արգասաւոր ի գործս, հանճարեղ ի պատասխանիս, Աստուածահաճոյ ի գործս առաքինի յամենայն գնացս ընդ երկար ամօք ի կեանս, եւ անծախորդ ի բարեբարութիւնս: Իսկ եթէ նոճասարս բարձրութիւն հոգեւոր եւ քաղցրագոյն որդւոյդ, զտառապեալ հօրդ հարցանէ զորպիսութիւն, փառք Աստուծոյ, եմք ի ներքոյ դրոշակի հովանեացն նորա պահպանեալք, որ տայ զառ օրէկանն եւ ո՛չ կարօտ առնէ խնդրելոյ զվաղորդեանն. սակայն թէ ի կողմանէ սրբոյ տանն հոգւոյ քոյ հարցանես, ո՛չ սակաւ ներ ալեկոծութեան տարուբերի ի կեղեքմանէ պահանջողաց, որք տղրկապէս ծծեն եւ յազգեցեալք փսխեն, եւ կրկին ծծել սկսանին: Ուստի իբր լակով մեր ի ծայր բարձրագուն իմիր լերին, նկատելով ի խոր անդունդս որովայնից կլանողաց, սոսկամք եւ սարսափիմք եւ թէ առ ուր եզերելոց է վախճանն տարակուսիմք, միայն թէ յոյս մեր յԱստուած յաղօթս սրբոց, եւ ի բարեպաշտութեան ձերոյ օգնութիւն կախեալ կայ, որպէսզի ըստ Չորաբարելի ի դրան Կիրդի, եւ որպէս զԴանիէլ ի դրան Բաղդասարայ, եւ որպէս զՄուրթէ ի դրան Արտաշէսի կալով քո, օգնիցես տաճարին Աստուծոյ եւ հօտին Քրիստոսի, քանզի նախատունն Աստուծոյ, նկատելով ի բարեգոյն մարբուր խիղճ մտաց քոց կոչեաց զքեզ յառաջ որպէսզի ո՛չ միայն անուանի արասցէ զքեզ, եւ բարեհամբաւ, այլ զի եւ ըստ կարի բում օգնիցես սրբոց տեղեաց նորա որ յերուսաղէմ, եւ յայտուր, եւ մանաւանդ սրբոյ Աթոռոյս տանն հոգւոյ քոյ, ուրեմն զինչ եւ վայելէ բարի անուանդ եւ օգտի սրբոյ Աթոռոյս տանն հոգւոյ քոյ,

1764 Յունիս 19ին, վարդապետի Երկուշաբթի օրը, իր լրումին կը հասնի Նալեանի երկրաւոր կեանքը: Յաջորդ օրը, Մայր Եկեղեցիին մէջ, Գրիգոր Պատրիարքի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ 12 եպիսկոպոսներու, կը կատարուի Նալեանի յուղարկաւորութիւնը: Օձուժը կը կառարէ Բասենցի Յարութիւն Եպիսկոպոս, իսկ գաճաքականը կը խօսի Սարգիս Եպիսկոպոս: Սարաֆեան, Միծանուն Պատրիարքին աճիւններէ կամփոփուելի փանկալթի շայոց գերեզմանատունը: 1940ին իր տապանաքարը կը փոխադրուի Եփրատի գերեզմանատունը եւ կը զետեղուի հեղեղեցականաց շարքին: Այսպէսով, Նալեանի պատրիարքութեան երկրորդ շրջանը 4'ընդգրկէ 1752-1764 տարիները:

առյա, այնպէս արա՝ սիրելի որդեակ, որպէսզի ժամանակաւոր աշխատութեամբ զաւրիտեանականն ստանայցես զփառս յիշատակի, եւ նշանաւոր արասցես զընթացս կենցաղոյդ. եւ ասելս է վասն հնարելոյ զազատութիւն սրբոյ Աթոռոյս ի կերպաց, եւ յանագ տգրկաց, եւ թէ հարցանես, թէ՛ զցատոյն գանկատիս եւ զեղանակ սպեկանւոյն թարուցանես, նարն, եւ սպեղանին բազմիցս ասացաւ յինչն այդր, եւ ծաղր արարին զխորհուրդս մինչեւ որ հարէմի էին նազարէթ ոչ չլինին զվանքերն, բարձեմամբ լծոյն Դամասկոսի. դժուարին է հալ երկք վանիցն, զի մովպեան Դամասկոսի, միսէլլիմն նորա դատաւոր քաղաքիս, այսններն եւ առ ոտինքն, կամին յերկք վանիցս յագիլ, թող զյաւուրէ ծախսն. հէլէ ասեմ, թէ Լաթիլք թագաւորութեամբ, եւ Յոյնք բազմութեամբ ազգի, եւ կէլիլից կարեն ապրիլ, ապա մեր խղճալիքս զինչ արասցուք, ուրեմն եւ մեզ կուակ մի մեծ աղսյին նման պիտոյ է, զի նորա անուանեն, եւ զքոյն վախիցեն, եւ մեք շնչառիցեմք, զի այս ցաւոյս կեօրէ քան զայն այլ զօրեղ սպեղանի ո՛չ լինի, թէ կարեկի է գանց մի՝ առնէք եւ աղաղակես, մի՛ ումք ծաղր թուեսցի: Ո՛հ, Աստուած տալոր, որ զայր, եւ բարի ալօք տեսնէիր, իրաւի առանց մեր ասելոյն ողորմէիր, բայց ի ժամանակս փաշայի տէվրին լինէր, որ տեսանէիր թէ ինչ արիններ մեզ կլանել տային. այնքան առ այս: Յայսմ ամի թէ՛ արդեամբ եւ թէ բանիք քաղցրութեամբ լուսն բարեկամն մեր հաճի Իուսուֆ աղայն մեծ մխիթարութիւն եղեւ սրբոյ Աթոռոյս եւ մեղաւորիս, օրհնեալ լինին ինքն եւ այլքն ընդ նմա, որ եւ ողջունեալդ ի Նոգուլոյ Սրբոյ: Պատիշարք վարդապետ մեծապատիւ եղբօրս կողմանէ, ի մէջ մեր նշան ո՛չ գոյ ատելութեան, այլ միայն նազուքիդանեմք իրերաց, յիմս կողմանէ այնպէս աստուծով իցէ, եւ իւրն ըստ իս այնպէս իցէ, օրհնեալ լինիք որ զնազրութիւն յանձն առեալ էք, թէպէտ եւ դուք տէր սրբոյ տանաւ. սակայն մեր մտաց էիք միայն վասն տան սիւմիրին գան, պարտ էր սակաւ ինչ համարձակութիւն տալ վասն գործառնութեանց սրբոյ Աթոռոյս հաւաքման մեղրէ մոմին եւ յարգարումն ուխտաւորաց. իսկ ձերդ աստուածասիրութիւն բարւոք վճառեալ էր ըզտալիքն լուսեմամ նստիք, քոյց ոչ ասացեալ նմա, թէ ի՞նչ սրբազանդ, ըստ խրեղորոյ նորա թոյլ տուր նորայնոցն, ո՛չ որ ոչ ի վնաս իւր է, այլ մանաւանդ փառաց իւրոց, աստուծով ակն ունիմ, թէ ի գալ ամին այնպէս լինելոց է, եւ առնել տալոց էք, եւ թէ ոչ հա՛ որքան կարեմ կու քարշեմ, եւ երբ զօրոյնուս պօղարսէ, ես ինչ փախելուն ի գատ այլ ինչ ճար: Ո՛հ, մահտեսի աղայիս կողմանէ ալքերս շլացաւ վասն աւետեաց, թէ որպէս եղև հալիկն գերօրհնելոյն:

ՀԱՅՏԵՒ

Ի սուրբ Բաղաֆես Սրուսաղեմէ, եւ յամենից գերսուրբ եւ անգրագեղուն շնորհ աստուծոյ պապեւո՛ւմ լցեալ ճօրհնական ռեզուոց Քրիստոսի Աստուծոյ, եւ ի սուրբն անարժան ծառայի, եւ ողորմութեամբ նորա Արքեպիսկոպոսէ եւ Պատրիարքի ի Տէր Յակոբ մեղապարս վարդապետէ ժամանեալ հասցէ գիր սիրոյ, ողջունի եւ օրհնութեան, առ ի վերայ Աստուծով զօրացեալ, եւ բարեպաշտութեամբ ծաղկեալ, գերօրհնեցեալ պատուելի նազդեմեացդ, եւ ձերացդ ամենայն խնդալ միս ի Տէր անստու ուրախութեամբ, եւ աստուածահաճոյ անձն խորդ բարեբաւութեամբ եւ խոր խաղաղութեամբ. Ամէն:

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւ ընդ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան զրոյս ծանիր ալացս լոյս, եւ հոգւոյս ցանկալի աղայք, զի մահաբաւական գիր պատուելեացդ է հաս առ անարգս ամենայնի, եւ ծանեալ զմիտ ձեր խաղաղասիրացդ, եւ ունէր գիր ձեր գ խնդիր: Նախ զի զգրեանս

սիրոյ գրել հարկեալ էիք առ գերապատիւ Պատրիարք վարդապետն, երկրորդ թէ յանձնեցաք նմա զԻսկիտարու վանքն առ ի երբեմնապէս երթալ շնչառիլ: Երրորդ թէ ամ յամէ տալ նմա եւ յղել ընդ հրաւիրակին վեցակուսն քիսէ դրամ: Եւ դիտելով զանհաւաքանդութիւն բարուց մերոց, ի բաց ասելն մեր, խոստացեալ էիք ձեռն բարշել ի մէնդ: Դժանիցէ գիր աստուածսիրութեան ձեր, զի մնք ո՛չ այնքան հնազանդութեան նշան ցուցաք ձեզ զամս ութի եւ կէս, թէ եւ մանաւանդ ըստ առաքելոյն ի հօտէն խնդրի հնազանդութիւն առ հովիւն, եւ յորդոյն առ հայրն, բայց մնք զի քանկելով յօրհնելով հաճութիւն կամաց ձերոց ստորագրէաք զկամս մեր ի ներքոյ հրա մանաց ձերոց. ուրեմն ե՛րր զմեզ տեսիք անհնազանդ, որ առանց շօշափման նաւդին՝ մնայ, իէքտէն ձեռն բարշել ի մէջ խոստանայք ո՛վ աստուածասէրք, հետաւորութիւն սուրբ վայրացս կարծէի թէ զսէր ձեր ընդ մեզ մերձաւոր առնելոց է, եւ Աստուծով այնպէս է, սակայն իմ տմարդի անբաղդութիւն տակաւին զձեզ առաքելոցանէլ Լուի ի սիրոյ, զի թէպէտ եւ վասն իմ անարժանութեան արժանի էի լսելոյ փութով լզք սորշումն ձեռնի մերոյ յօգնութենէ, այլ ո՛չ հաւատայի թէ ձերդ աստուածասիրութիւնդ զանց առնէ զսիրով սրբոց տեղեացս, մանաւանդ տանի մերումս խակութեան եւ տհասութեան վասն սիրոյ սրբոյ Աթոռոյն ձերոյ: Սակայն զի ճշմարտիւ սիրով ըզմեզ հայր կոչեալ էիք, ուրեմն տանելոյ եմք եւ մնք ձերում տնաշինութեան: Եւ զի համահաճութեամբ ձերով առաք յանձին զլուծ ծառայութեան սրբոյ Աթոռոյս. ուրեմն իբրեւ տեսարցւ մերոց, այս ասելոց եմք յամենայն օրինաւոր հրամանս ձեր, թէ եւ զայն ուս գիտեմ, զի առ այս բազմիցս զօրինաւոր խնդիրս տարածեցիք, եւ ո՛չ երբէք ի բաց ասել նորա, ասացիք թէ կալ զմեզ հրաժարեալ: Բայց ես ընդ այն ուրախ եմ, զի պէթէքիք զձեզ առ մեզ, եւ զմեզ առ ձեզ դիտելով համարձակութեամբ գրեալ էիք զարժանն: Նախկինն է սիրոյ քարոզն ձեր առ մեզ, որք զսիրոյն ճաշակ տակաւին ո՛չ փորձ առեալք համարիմք: Երկրորդն է վանքն Իսկիտարու, զոր յանձնեալ էք ի վայելումն Մեծապատիւ եկեղեցի մերոյ հէնէմ շէն պահեսցէ, եւ ընդ երկար ամօք վայելեցէ զորդի սրբոյ Աթոռոյս, եւ ո՛չ որպէս զօտար, բայց սեփական միասնէ առնուս սրբոյ Աթոռոյս Յունաց եւ Լաթինացւոց, իբր զոչ ունեղ տեղի հիւր ընկալութեան միարանից սուրբ քաղաքիս ի մեծ քաղաքիդ: Իսկ առ երրորդ խնդիրն ձեր ասեմ, թէ ամենայն ինչ որ ըստ ոգի, զայ Աստուծով եւ պատշաճի ի կրօնացն ոչ վերջանամք, փրկաւան տեծենին քաղղըլ քրքրսն. միթէ ես կարացի եւ չէ ասացի. սակայն ձեր խոհեմութեան յայտնի է, որ թուով հարկելն թէ այսքան սակաւ մի մայր հօշոյն էր. ես զիս ո՛չ գիտեմ մալի տէր, այլ մատակարար եւ տնտես. յետոյ մի՛ լիցի թէ ասիցէք, սուր զհամար տնտեսութեանդ, զի վատնես զինչ Աստուծոյ եւ մեր. հէլպէթ սեղանոյն պաշտօնեայք ի սեղանոյն վայելելոց են Աստուծով: Գնալպտիւ եղբայր մեր որքան սրբութաց լինիցի, այնքան զկերն աճեցուցանէ, եւ մնք եւս Աստուծով զարժանն կու հաւասարեմք, միայն թէ՛ սրբոյ Աթոռոյս խարճիցն ճար մի հնարիցէք, զի տարւոյ վերայ ծախն կու բազմանայ, եւ վայ ինծ, եթէ բերեն նուազիցի, որ եւ նուազել կրեի, թէպէտ յայսմ ամի յօրհնեալ խոտաւորացն. շնորհակալ եմ յորշնարհին մինչեւ վախճանս, զի չափաւոր տօք զթուլամտութիւն մեր յանդիմանեցին, եւ մանաւանդ զհրօքհեցեալն յԱստուծոյ հաճի Իստուֆ աղայն թէ՛ տօք եւ թէ յիշատակօք, եւ թէ սեփական քաղցրաբան մխթարութեամբն. սիւն եւ նեցուկ եղեւ սրտից մերոց, եւ փոխանակ ձեր ամենեցուն զկարօտն մեր լցուցանէ. զամենից նմանապէս շնորհակալ եմ, եւ մանաւանդ զհարազատ եւ զհաւատարիմ ծայրադրէի գործակալաց սրբոյ Սթոռոյս, մինչեւ ցվերին չուլու միաբանսն, զի Աստուծով ամէնքն բարի եւ լաւք են, բաց յինէն, որ զլուխ մեղաւորաց եմ, զոր Աստուած եւ զիս աղօթիւք ձերովք քաւեսցէ ի մեղաց, եւ առաջի իւր եւ ձեր մի ամաչեցուցէ, ողջ լերուք ի պարծանս իմ:

Որ ի ուզը, նոյնեմբերի եւ զգիրս զրեցի իմով ձեռամբ, յԱստուածս վիր եւ Ստաբելական Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Յակոբոս, որ յերուսաղէմ. բաւ է.

Ամենայն ողջունողաց մերոց ողջոյն:



ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ՕՐՇՆՈՒԹԻՒՆ ԽԱՂՈՂԻ

«Պատկերա զՏէր ի բոլոյ արդար վասակոց»
(ՍՈՒԱԳ, Գ. 9):

ԱՂՁՆ ՈՒ ՏԵՂԸ

Վերափոխումը գլխավորն է Ս. Աստուածածնի հոթը տանիքէն: Եթե ալ տէրունի Տաղուար է: Այդ օր խաղողի օրհնութիւն կը կատարուի: Ուրեմն բացառիկն էր Աստուածածնի և Խաղողօրհնէքի կապը:

«Պատկերա զՏէր ի բոլոյ արդար վասակոց», կը պատկերէ իմաստունը:

Աստուածածինը կ'օրհնուի աւելի քան ութ տարբեր, ութ հերոս, ութ տնայ, մանաւանդ Վերափոխման տօնին:

Ս. Աստուածածնի տնայնոց լոճին տեղ Վանգնաճ ևն եկեղեցի և տաճար: Անոր տնայնոց կը կրեն տնայնաբ հաստատութիւններ՝ վանք, անապատ, կոթանոց, արքանոց, ծերանոց, հիւանդանոց, դարմանատուն, վարժարան և դպրանոց: Կանանց համար լոճին շատ սիրուած և տարածուած անուաններէն մէկը Մարիամ է:

Հաւատացեալները սովորաբար Աստուածածնի տնայնոց մաստղ կը զենուին, ողորմութիւն կը բաշխեն, մոճ կը վառեն, բարիք կը գործեն, աղօթք և ուխտ կ'ընեն:

Այս լոճին անոր համար որ, ինչպէս եկեղեցին կը հռչակէ, Աստուածածինը գերազանց արարած մըն է: Վեր, քարէր բոլոր սուրբերէն, վար և խոնարհ միայն Ամենասուրբ Երրորդութիւնէն: Ուստի ան իր սոսկական սուրբ մը չէ որ կը տօնուի, այլ իր Աստուածամայր՝ մայրը Տէր Բիսուսի Բիթատոսի կը փառաբանուի:

Աստուածածինը հզոր միջնորդ մըն է մեղքերէ սրբուելու և ազատ մնալու, կեանքի դժուարութիւնները լուծելու, առօրեայ վիշտերն ու տառապանքները մեղմելու, բաղձապատան այս կամ այն շնորհքին արժանանալու:

Ուստի հաւատացեալներ Աստուածածնի բարեխօսութեան կ'ապաւինին, անոր պաշտպանութիւնը կը խնդրեն իր գթութեան մայր, սրբութեան տաճար, յաջողութեան դուռ և համբայ:

Աստուածածինը կը գերազանց բոլոր կիները, բոլոր մայրերը: Ուստի իրաւամբ կը հանգիստանայ

Հրեշտակ ի մարդկան, մարմնացեալ փերովքի, երկնաւոր արքայունի՝, մարգարտեսիլ և ծիրանաղեաց հրեշտակաւորաց կոյս, կոյս և մայր, մայր և կոյս, աղա. խնի Քրիստոսի եւ բարեխօս աւետարհի՝:

ՎԵՐԱՓՈՒՄԻՄՆ

Երբ տնայ մը Աստուծոյ և մարդոց աչքին կ'օժտուի այս կարգի շնորհներով, դժուար է որ սովորական վախճան մը սկսենայ:

Ասկէ՝ Եկեղեցւոյ մէջ ծագումը Տիրամօր ննջումին և վերափոխման աւանդութեան, մասնաւորաբար Ե. Պարէն յիտոյ, Աստուածածնի եւ Աստուածամայր՝ Կոչմանի հաստատութեամբը երկուստեք Ս. Ժողովին (431), չհաշուել Տիրամայր Ս. Կոյսին իրապէս ձնողն ու մայրը ըլլալը Տէր Բիսուսին:

Ըստ Շարականի, երբ Տիրամայրը կը ննջէ մահուան քունով, առաքեալներն ու իւղաբեր կիները, հաւատացեալները բազմութեան հետ, վառուած լահիրով և անուշաբոյր խնկեղէններով կը հաւաքուին անոր գերեզմանին դուռը՝ Գիթսեմանի: Ամէնքը միասին սաղմոսով և օրհներգութեամբ, աղօթքով և արցունքով կը յայտեն իրենց սէրն ու յարգանքը: Ահա այդ միջոցին կը թուի թէ արարիչն Աստուած հրեղէններու բազմութեամբ կ'հրէ Տիրամօր գերեզմանին վրայ: Եւ Ս. Կոյսը աւագիղէն կառքով կը սլանայ վեր՝ օդին մէջ, կը համբարնայ երկինք և կը մտնէ եթերաշրջանի խորանը, շրջապատուած իմաստուն կոյսերով, վեցթեւ եան սերովբէներով և քերովբէներով: Ան երկինքի մէջ փառակից կը լինի Աստուածօրդուոյն:

Նարեկ, Բան 2: Շարական:

Շարական Վերափոխման Ս. Աստուածածնի — Վերափոխման Ս.

Աւանդաբար հասած Տիրամօր այս երանական վախճանն է որ կը կոչուի և կը տօնուի Վերափոխումն Ս. Աստուածածնի անուանով:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԽԱՂՈՂԻ

Աստուածածնի տօնին կը կատարուի աւանդական օրհնութիւնը խաղողի: Կարգը տեղին է:

Ձի տաննայն օտոբ բարիք ևւ ամենայն պարգեւէ կատարեալքի վերուս ևն իջեալք:

Աստուծոյ առած բարիքները անհամար են և պարգէները բազում: Մարդիկ կը վայելեն զանոնք. աւստի իբր նշանակ սիրոյ և երախտագիտութեան, սոգորաբար իրենց վաստակին առաջին բերքը — պտուղ, արմաթք, կենդանի, դրամ, զաւակ — ընծայ և պատարագ կը մատուցանեն Աստուծոյ:

Աբէլի ընտրեալ զոհը հաճոյ եղաւ Աստուծոյ:

Նոյնպէս եղան հայր Սրբահմինք՝ իսահակ որդին, Յովակիմին և Աննային՝ միամօր դուստրը Մարիամ, որ առնարին մէջ տաճարացաւ: Եւ Աստուած յանձին Յիսուս Որդիին տնոր մէջ տաղաւարեցաւ անհաղիլ անբաժան յղութեամբ: Ս. Կոյսը եղաւ Աստուածածին, Աստուածամայր, Տիրամայր:

Ս. Մարիամին Աստուծոյ մօտ գտած շնորհքով օրհնութեան կը փոխուին մեղքի հետեւանքով մարդոց արուած անէնքն ու զատապարտութիւնը:

Ուստի մենք, մեր գտած շնորհներուն և վայելած բարիքներուն փոխարէն, կը մղուինք արտայայտելու մեր սէրն ու երախտագիտութիւնը: Աստուծոյ կը նշխարենք մեր վաստակին երախայրթը՝ երկրի բերքին լաւագոյնը՝ խաղող և ցորեն, հունձքի և կութքի եղանակին սկիզբը:

Ս. Աստուածածին մարդոց ծնունդն իրեն Աստուծոյ ընծայութեամբ նուէրներուն և նուիրեալներուն մէջ ամենէն ընտրին է ու երեւելին:

Աստուծոյ համար անոր պէս գիւրեկան են երկրի բերքերէն ցորենն ու խաղողը, հացը և գինին: Մուրք Պատարագի:

Ուստի վերջին ընթրիքին մեր Տէրը հացն ու գինին կը նուիրագործէ օրհնութեամբ և կու տայ իր աշակերտներուն, նշանակ իր փրկարար մարմինն և արիւնին:

Առէ՛ք, կերա՛յք, այս է մարմին իմ...

Արբէ՛ք ի դմանե ամենեւին, զի այդ է արիւն իմ,

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏՈՐՈՒԳԻՒԹ

Շարականը այլաբանական գեղեցիկ պատկերներով կը բնորոշէ Աստուածածնի տեղը, գիւրքը և դերը: Յատկանշական են անոր սատորգելիները:

Աստուածածինը կը կոչուի անբաւալ ծաղիկ, անդրասպարս շաւարիչ, բանաւոր բարունակ, կեանքի ծառ:

Իսկ Աստուածածնի բերքը՝ Յիսուս Որդին կ'որակուի համեղաճաւակ պտուղ, անսպառ ողկոյց:

Ահա բնագիրը ձաւուէն.

Անբաւալ ծաղիկ, անդրասպարս շաւարիչ, վերաբուսեալ յարմաթոյն Յեսեայ. եօթնաբլեան ճերմաց հողոյն ընդունաւան. Աստուածածին եւ կոյս:

Համեղաճաւակ պտուղն բանաւոր բարունակ, յորմէ կրկնաւ մեզ ողկոյցն անբաւալ յուրախութիւն ճամկելոցն՝ ի ճաւաղիսն է ծաղոյն զիսութեանն:

Ակներ ևն և իրաւ վերեւ կատարուած նմանութիւնները:

Աստուածածինն է բանաւոր բարունակը որթատուիկի, ծառը կեանքի. Յիսուս Որդին է իր բերած անսպառ ողկոյցը խաղողի:

Ուստի շատ տեղին է և պատշաճ, որ բերքի հասունութեան այս շրջանին, երբ կը կատարուի Աստուածածնի վերափոխման տօնը, լինի նաեւ խաղողօրհնէքը, իբր նշանակ Աստուծոյ հանգէպ մեր սիրոյն և վայելած հոգեւոր ու մարմնաւոր բարիքներուն:

Հատ Շարականին, Տիրամայրը իր սրբակիցա Նուիրումով կը հանգիստայ Գերագոյն էին արքա, ծառ կենաց սնմանակն պսղոյն, օտարմակ կապի բանին, սափուր օսկի երկնային մանանային:

Հ Ո Գ Ե Կ Ա Լ Ո Ւ Ս Տ

«Եւ լցան ամենեքեան Հոգւով Սբարով»
(ԳՈՐԾՔ, Բ. 4):

Հոտ Հին Ուխտի, Պննակոստէն Զատկէն յիսուսն օր կտա կատարուելիք մեծ տօն մըն էր: Գլխաւոր նշանակութիւնը Սինէական Օրէնքի ստացման տօնն էր, որ կը կոչուէր նաեւ Տօն Երախայրեաց Հնձոց: Իսկ կտակարարորդութիւնն էր նոր հունձքին երախայրիքը Աստուծոյ Տաճարին նուիրել և զօհութիւն մատուցանել Ամենակալին:

Առաքեալներ, աշակերտներ և հաւատացեալներ Ս. Կոյսի գլխաւորութեամբ, թուով մօտաւորապէս 120 հոգի, հաւաքուած էին Սինի վերնատան մէջ, ուր Քրիստոս կատարած էր իր վերջին ընթրիքը և հաստատած Վարմնոյ և Արեան Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը:

Քրիստոսի խոստումին համաձայն, Մխիթարիչ Ս. Հոգին Աստուծոյ կողմէ պիտի զրկուէր առաքեալներուն, զանոնք աստուածային շնորհներով ամրապնդելու, զօրացնելու, քաջալերելու և լուսաւորելու:

Եկեղեցական արժանի երեք հրահալիքներ կը յիշէ Ղուկաս. —

Ա. — «Հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հոգմոյ»:

Բ. — «Բաժանեալ լիզուք իբրեւ ի հրոյ»:

Գ. — «Սկսան խօսել յայլ լիզուս»:

Ս. Կոյսին տրուած այս և նման ստորագելիներ, ինչպէս նաեւ անոր խաղողի բարունակին հանգիստութիւնը, սքանչելի այլաբանութեամբ կը պատկերացնեն Ս. Աստուածածնի զերն ու դէմքը փրկագործութեան տնօրինական ընթացքին մէջ:

Ուրեմն մինչ այլ, մասնաւորաբար Ս. Աստուածածնի վերափոխման տօնին, խաղողի օրհնութեամբ, Յովակիմի և Աննայի սրտաբուղիս նուիրաբերութեամբ և հաւաքով փառաբանենք զԱստուած, աղ-

երկինքէն եկած հնչիւնը միայն վերնատան մէջ և անոր տնօրինական շրջապատին զգալի էր և ոչ թէ քաղաքին մէջ: Փոթորիկ կոչուելու չափ սաստիկ եղած էր հովը, որովհետեւ Ղուկաս կը գրէ. «Ելից զամենայն տունն յորում նստէին» (Գործք, Բ. 2):

Երկրորդ հրահալիքին մէջ՝ իրեցած հրեզէն լիզուները անշուշտ փոքրիկ բոցեր էին, որովհետեւ անոնց չափին մօտին ոչինչ կ'ըսէ Ղուկաս, այլ միայն զանոնք լիզուներու նմանութեամբ կը նկարագրէ: Այս տօնը Նոր Ուխտի հաւաքման յիշատակը հղաւ և բանական հրախայրիքներ Ստուծոյ ընծայուեցան, Քրիստոնէական եկեղեցւոյ անդրանիկ քարոզիչները խօսեցան և մկրտուեցան Ս. Հոգիով:

Երրորդ հրահալը բոլորովին կը տարբերի միւս երկուքէն: Առաքեալներ և հաւատացեալներ Ս. Հոգիով լիցուելով՝ երկային նոր շնորհք մը ստացան, զօրացան և քաջալերուելով սկսան ուրիշ լիզուներ խօսիլ: Սնոնք ոչ թէ իրենց սեզած լիզուն կը խօսէին, այլ ներքին ներշնչման ազդեցութեամբ. «Երպէս և Հոգին տայր բարբառել նոցա» (Գործք, Բ. 4): Իրենց խօսածը պարզապէս օրհնութեան լիզուներ և փառաբանութիւն էր, ուղղուած Աստուծոյ, որովհետեւ կը խօսէին «Ջմեծածման Աստուծոյ»:

Առաքեալներուն տարբեր լիզուներով զԱստուած փառաբանելու տօնն, Երուսաղէմի մէջ քաղմաթիւ երկիրներէ եկած ուխտաւորներ, ճամբորդներ և գաղթա-

րէրը մեր վայելած բոլոր շնորհներուն, աղօթելով. —

Մայր սուրբ սեմնչելի լուսոյն ... Աղայեա վասն մեր գառ ի քեզ գաւազանցեալն Աստուած անցուցանել յերկր մերում ըզգաղցր բոխումն աղբերաց, գաւառ պողաբերութիւն բուսոց եւ ծնկոց, առ ի գուաքնալի լինել ամենայն հաւակաւոր պիտոյից միւրոց:

Ամեն: Լուս, Տէր, եւ ողորմես:

ԶԳՕՆ ԵՊՍ. ՏԷՐ - ՅԱԿՈԲԵԱՆ

կաններ կային: Ղեկավար տասնվեց երկիրներէ — քաղաքներէ և երկրամասէ — եկած գաղթականներ կը յիշէ, որոնք իրենց մայրենի լեզունով օրհնաբանութիւններ կը լսէին Գալիլիացի առաքելներու բերնէն: Ան կ'իշէ Պարթևք, Մարք, Իլամացիք, Միջագետք, Հրէաստան, Գոմիրք (Կապադովկիա), Պոնտոս, Ասիո, Փոնտիկ, Պամփիլիա, Եգիպտոս, Լիբիո, Կիւրէնէ, Հոմ, Կրետէ և Արաբիա:

Հոս կ'արժէ յիշել թէ Միջագետքի և Կապադովկիոյ մէջ և զանազակ երկրորդ Հայաստանն է և ոչ թէ Հրէաստանը: Երբեք միայն լեզուն լսելը հրաշայիք մը պիտի չըլլար, բայց Հայերէն լեզունով խօսիլը՝ իրապէս խօսուած միւս լեզուներուն նման Ս. Հոգիի ազդեցութեամբ պիտի ըլլար: Պատմականապէս ալ կը հաստատուի թէ այդ ժամանակ Հայաստանի մէջ Հրեայ գաղթականութիւն մը գոյութիւն ունեցած է և Պենտեկոստէի օրը միւս երկիրներուն կարգին Հայաստանէն ալ Երուսաղէմ եկած ուխտաւորներ կամ գաղթականներ կային:

Ափրիկեան Եկեղեցւոյ նշանաւոր Հայերէն Տերապուլիանոս և Օգոստինոս, որոնք Ս. Գրքի հնագոյն և խառնակ կոչուած թարգմանութիւնը գործածած են, այդ հաստատածը բացատրած տանք Հրէաստան անունին տեղը Հայաստան դրած են: Չենք գիտեր թէ ի՞նչ պատճառներով Ս. Գրքի սովորական թարգմանութեանց մէջ Հայաստան անունը Հրէաստանի փոխուած է:

Վերնատան մօտ հաւաքուած ժողովուրդէն շատեր՝ Հրեաներ և երկրւած հաւատարեակներ, կը դարձանային և կը սքանչանային առաքելներուն բերնէն իրենց մայրենի լեզուններով փառաբանութիւններ լսելով: Իսկ ժամանք ալ ծաղրի-

ւով կը խնդային առաքելներուն վրայ՝ խորհելով որ անոնք գիշերով հարբած էին:

Առաքելներ չկրցան հանդուրժել այս ծանր նախադէպին և Պետրոս իր ընկերներուն անունով և իր առաջին նշանաւոր ոտնաճառութեամբ ժողովուրդին լուսաբանութիւններ տուաւ: Կերպելով այն կարծիքը թէ անոնք գիշերով էին:

Ապա Յովէլ մարգարէի գուշակութիւնը (Ք. 28-31) յիշեց և շեշտեց թէ Աստուծոյ այդ մեծ և երեւելի օրուան խոստումն որ որ կը կատարուէր այդ օր, Պետրոս իր խօսքը շարունակելով ըստ թէ Հրեաներ և իրենց իշխանաւորները Քրիստոսը մատնեցին հեթանոսներուն ձեռքը: Ան խաչուեցաւ, թաղուեցաւ և երրորդ օրը Աստուած յարոյց զԱյն մեռելներէ Դաւիթ մարգարէի խօսքը (Սաղ. ԺԵ. 8-11), զայն Քրիստոսով կատարուած համարելով:

Ժողովուրդը խորապէս ազդուելով Պետրոսի անդրանիկ առաքելական քարոզչութենէն, կը հարցնէ թէ ի՞նչ պէտք է ընէ վերկուելու համար: Պետրոս զգլուժ և մկրտութիւն կը պահանջէ բոլորէն, որպէնզի անոնք ևս Աստուծոյ Ս. Հոգւոյն շնորհներուն արժանանալով: Նոր Ուխտին ուշակերտէին: Ան կը յորդորէ նաեւ զառուելի և հեռանալ Յիսուսը անորդող ու սպաննող ժողովուրդէն: «Ապրեցուք յազդէ խոտորելոյ յայտնանէ» (Գործ. Բ. 40):

Այդ օր մօտ երեք հազար հոգի գտնուեց Օծեալ Մեծիա Քրիստոսը որպէս խոստացուած Փրկիչը, կը մկրտուին և վերնատան մէջ հաստատուած Քրիստոսնէական առաջին Եկեղեցւոյ անդրանիկ համայնքը կը կազմեն:

Հովիվուօ, Գալիլիա.

ՍԻՓԱՆ ՎՐԴ. ՄԵՍԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

295. ՇՆՈՐՀՔ ԵՒ ՓԱՆՈՔ. — Վաստակի առարկաները նախընթաց արժանեաց իբրև վարձք շնորհուած պարգևներն են, Այդ պարգևները կրկին են, շնորհք և փառք: Շնորհքը թէև նորանոր արդիւնքներ յառաջ բերելու զօրութիւնն է, բայց նոյն ատեն վարձք է վաստակի, իսկ վարձքը փառքն է, որ երանութեանց վայելքն է: Բայց մարդը ըստ արժանեաց չէ որ արժանի կ'ըլլայ առաջին ներգործական շնորհաց, զի առաջին ներգործական շնորհէն առաջ որեւէ վաստակ գոյութիւն ունեցած չէ իր մէջ, բայց առաջին արքարար շնորհքը կրնայ ունենալ եթէ ոչ ըստ արժանեաց բայց գէթ ըստ պատշաճից վաստակ, և այն՝ ըստ հաստատուն և անխափան պտտաճից, որուն հետեւեալքը աներկուանալի է: Իսկ արքարար շնորհաց յաւելումն ալ կրնայ ունենալ ըստ արժանեաց արդիւնք: Գալով փառքին՝ ան. երկրայն է և հաստատուն թէ փառքը մարդուն վաստակներուն ի վարձ կը արուի՝ իր արժանիքին համար, թէև արժանեաց չափէն գերիվեր է շատ, ու առիկու կը հասկցուի այն վկայութիւններէն, զորս յառաջ բերինք մարդկային արդեանց ճշմարտութիւնը հաստատելու համար:

296. ԵՐԻՔ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳՈՐԾՈՂԻՆ ՎԵՒՄԱՐԻՄԱՄԱՐ. — Փոքր ի շատէ բացատրենք նոս. այն պայմանները, որոնք կուրեն որ երբեք մարդը կարենայ ինքզինքին համար ըարիք մթնրել և ըստ արժանեաց վաստակի արդիւնք պատրաստել: Ատոր համար, նախ գործողին վերաբերմամբ երեք պայմաններ կան, առաջին՝ գործողը ի կեանս ըլլայ, ըստ Ս. Գրոց կեանքը աշխարհաբերն կը կոչուի ճանապարհ ու կենդանի մարդիկ կը կոչուին ճանապարհորդներ: Քրիստոս կ'ըսէր. «Գայ գիշեր, յարած ոչ սք կարէ

գործել» (Յովն. Թ. 4), ու Պօղոս կ'աղ. Գարարէր. «Մինչդեռ ժամանակ ի ձեռք է, գործեսցուք զարարիս» (Գաղա. Զ. 10): Երկրորդ՝ արքարար շնորհաց վիճակի մէջ ըլլայ, որ է ըսել՝ Աստուծոյ հետ հոգեւոր միաւորութեան մէջ, համաձայն Քրիստոսի խօսքին. «Որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ յարիւն, նոյնպէս և դուք եթէ ոչ յիս հաստատեալ իցէք» (Յովն. Ժ. 4): Երրորդ՝ որ գործը կատարած ըլլայ ուղիղ մտք, ինչպէս յայտնի է իմաստասիրական տեսութեանէն իսկ, թէ գործը գերանակոյն գործ լինելէ առաջ պէտք է իսկապէս լինի գործ բանական և ազատ:

297. ԶՈՐԱ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳՈՐԾԻՆ ՎԵՒՄԱՐԻՄԱՄԱՐ. — Իսկ գործին համար չորս են պայմանները, նախ որ գործը ազատ ըլլայ, երկրորդ՝ որ գործը պարկեշտ ըլլայ, երրորդ՝ որ շնորհալի կերպով կատարուած ըլլայ, չորրորդ՝ որ գերանական գործ ըլլայ: Այս պայմանները պէտք չունին Ս. Գրոց վկայութիւններով հաստատուելու, որովհետեւ արամաբանական հետեւութիւններն են նոյնապարգեշալ սկզբունքներում: Իսկ հաստատող Աստուծոյ վերաբերմամբ միակ պայմանն մը կայ. ընդունելութիւն և խոստում, եթէ խնդիրը ըստ պատշաճից վաստակի մասին է՝ ոյն ատեն աստուածային խոստումները կը կատարուին իբրև արդարութեան բացառական սկզբունքներ: Այսքանը ըստ արժանեաց վաստակից համար. սակայն ըստ պատշաճից վաստակներն ալ պէտք է ճշտանան նմանօրինակ հանգամանքներով, միայն թէ՛ այս պտտազային ներքին պայմաններ չեն պահանջուիր, այլ միայն Քրիստոսի հաստատուն խոստումներէն յառաջ եկած արտաքին պայմաններ:

298. ԳՈՐԾԻՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԺԵՐԸ ՍԻՆԵՆՈՐ ԶԱՆԴԱՄԱՐՆԵՐՆԵՐ. — Կը հարցնեն ոմանք թէ արդեօք էական և անհրաժեշտ է սիրոյ սկզբունքով գործելու պայմանը, թէ բաւական է գործել որեւէ ուրիշ սկզբունքով: — Զինք կրնար անշուշտ ըսել թէ անհրաժեշտ է սիրոյ սկզբունքը, որովհետեւ ուրիշ սկզբունքներէ

յառաջ եկած բարի գործերն ալ ըստ ինքեան բարի են միշտ, և հետեւաբար ըստ արժանեաց վաստակ կամ արդիւնք ունին։ Իսկ վաստակին չափը կը հաստատուի այն բոլոր հանգամանքներէն, որոնք կ'աւելցնեն գործերուն ներքին արժէքը։ Աստիք են, 1) Գործող ենթակայն, եթէ ըլլալն այնպիսի ձիրքերով զարդարուած, որոնք կը բարձրացնեն իր գիժքը ինչպէս արդարեւ մեղաւորին հանդէպ։ 2) Գործին էութիւնը, որ սիրոյ սկզբունքին մէջ կը կայանայ այնպէս որ ի սիրոյ կատարուած գործ մը միշտ աւելի կ'արժէքան երկիրդէն կատարուածը։ 3) Գործին տեսակը, այսինքն թէ գործուած ո՞ր գործն է առաքինական, որովհետեւ հաւատքով կ'ըստ գործը միշտ աւելի կ'արժէքան աշխուհարարութեամբ ելովոր, ու սիրով յաջողած հաւատքը աւելի կ'արժէքան պարզ հաւատքը։ 4) Գործին բացարձակ քանակը, զոր օրինակ եթէ գործը բազմապէս կատարուի, կամ եթէ միեւնոյն գործին հանդէպ միշտ աւելի եռանդ ցուցուի։ 5) Գործին յարաբերական քանակը, որ գործին քանակին բաղդատութիւնն է գործողին կարողութեան և զօրութեան հետ, զոր օրինակ՝ ուրի կ'ընդ երկու լուծոյն որոշուածութիւնը։ 6) Գործին անողութիւնը, զի տարբեր է բարի գործի մէջ աւելի կամ նուազ մնալը, և նեղութեան և հալածանքի աւելի կամ նուազ ժամանակ համբերելը։ 7) Գործին սաստկութիւնը, որովհետեւ բարոյական գործերն ալ իրենց մէջ ունին նմանօրինակ սաստկութիւն մը՝ ներքին ծանրութեան մէջ անկող, առանց ստկայն արտաքին հանգամանքներու մէջ անկող։ 8) Հեղափոխական աւելի անձը, որովհետեւ մարդու մը համար իրական արժանիք է՝ գործի մը ձեռնարկելէ վերջ սչ միայն

յարառեալը անոր մէջ, այլ և իր արդիւնքները հեղափոխականութիւնը, ապառառ առկա յառաջդիմելով իր ձեռնարկած պարագայումին մէջ։ Այսպիսիներոն և փառքը՝ ըստ բանից առաքեալին. «Ճանապարհք արդարեւ իբրեւ զոյս ծագին, առաջնորդեն և լուսաւորեն, միշտ ահա լուսաւորեցէն» (Առակք, Դ. 18)։

299. ՇՆՈՐՀԱՅ ՎԱՌԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝
ԸՍՏ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱՅԻՆՈՅ. — Շնորհաց մասին այս վարդապետութիւնը, և իբր ի տեղեկութիւն յառաջ բերուած միւս կէտերէ բաւական բացայայտ խօսքերով ցուցուած են Շնորհալի ընդհանրականին մէջ, ուր կ'ըսուի. «Ձոր օրինակ ապարանք հիմարք միայն չեն բաւական ի լինել ի բնականութիւն մարդկան, այլ պէտք ունին ձեռնարկ և այլոց շինուածոց, նոյնպէս և հաւատքով միայն՝ և առանց գործոց ոչ ոք կարէ զանձն իւր չի նկատուար Աստուծոյ, և որպէս զլուսն՝ առանց անձին յարմարութեան ոչ կարէ կրել կենդանութիւն, և ոչ անձն առանց գլխոյ, նոյնպէս և հաւատ առանց գործոց և գործք առանց հաւատոյ մեռել են երկրորդին ըստ առաքելոյ։ Վասն որոյ աղաչեմ զամենեւեանդ զի ընդ հաւատաւոր ճշմարտութեան, զոր ընկալալք ի ծննդնէ աւագանին և ունիք հաստատութեամբ, յարմարեցէ և զգործս արդարութեան, զի մի՛ միով աշօք միայն լուսաւորեցէ զանձին, այլ երկոքումդ պայծառաւնայցէ, Եւ մի՛ վատահաւայք ի սնտոյ յայն անմտաց, որք ասեմ թէ բաւական է հաւատոցն միայն ճշմարտութիւն քրիստոնէին՝ փրկիլ ի տանջանաց և արժանաւորիլ արքայութեան» (Ընդհանրական, ապ. Երուսաղէմ, էջ 13-14)։

Յ Ա Ղ Ա Գ Ս

Խ Ո Ր Հ Ր Դ Ո Յ

300. ԲԱՌԻՆ ԶԱՆԱԶԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ. — Խորհուրդք բառն ալ քրիստոնէական դաւանութեան մէջ նոր և յատուկ նշանակութիւն մը ունեցաւ, երբ գործածուեցաւ իբրեւ ընդհանուր անուն՝ ցուցնելու համար այնպիսի գործողութիւններ, որոնց կից կ'ընթանայ երկնային շնորհքը

ըստ ուղղափառ վարդապետութեան։ Աւելորդ կը նկատենք հետախուզել թէ որչափ և ինչպիսի՞ ուրիշ նշանակութիւններ ունի այդ բառը մեր լեզուին մէջ, որոնք բազմաթիւ են արդարեւ նիւթերուն զանազանութեան համեմատ։ Դաւանական լեզուին մէջ ալ կրկին իմաստ ունի ա-

նիկա, որովհետև կը ցուցնէ աչ միայն շնորհաց ուրաւաքին նշանը, այլ նաեւ Աստուծոյ և իր գործերուն վերաբերեալ անհաս ճշմարտութիւններ, որոնց մասին խօսեալները տեսական աստուածաբանութեան ուսման մասին մէջ, իսկ այս երկրորդ մասին մէջ զայն կ'առնենք իբրեւ նշան շնորհաց, ու այս նմանակոչութիւնը մեր մէջ մասն է հետեւողութեամբ յունականին, մինչդեռ լատինները ճշմարտութեան համար յունարէն *mysterum* բառը աւելին, իսկ նշաններուն համար կը գործածեն *sacramentum* անունը, իբրեւ գործ սուրբ կամ նուիրեալութիւն, և որով, ըստ հեթանոսական սովորութեան, կը կոչուէին բոլոր այն նիւթական և գործնական իրերը, որոնք նուիրականութիւն կը զգենաւին կրօնական սրբութեամբ:

301. ԽՈՐՀԱՆՈՒՄ ԵՒ ԵԿԵՂԵՍՈՅ. — Քրիստոնէական Եկեղեցւոյ խորհուրդը կը սահմանուի, ըստ Լիւթերի (+ 1623). Արաբողոքութիւն արտաքին, Աստուծոյ հաստատուած, մարդոց սրբութիւն տալու համար տեսակետով մը, և հոգիներու սրբութիւն նշանակելու համար, իսկ ըստ Թոմասի Ագուինսոյ, Անշան սուրբ իրի մը, որուն համեմատ կը սրբացնէ մարդերը: Բայց աւելի սովորաբար կը սահմանուի նշան զգալի և տեսական, Քրիստոսէ հաստատուած, որ ունի գործութիւն ներգործելու և նշանակելու Սրբութիւն, կամ աւելի համառոտաբար, Արարչական նշան շնորհաց, Քրիստոսէ հաստատուած: Այս բացատրութիւնները, որոնք քիչ կը բացատրուին իւրմէ, կը ցուցնեն թէ խորհուրդին էություն համար կը պատկերացնէ որ ըլլայ, ու նշան, որ է ըսել թէ իր էությունը կը գտնուի իր մէջէն աւելի՝ ցուցաւած իրի մէջ, Բ. զգալի, ոչ թէ իմանալի, այլ զգայարաններու առկ ինկող նշան մը, Գ. տեսական, ոչ թէ առօրինայ գործութեամբ, այլ մնայուն և յարմար մը քրիստոնէական կրօնի աւողակութեան տեսակետով, Դ. Քրիստոսէ հաստատուած, որովհետև ուրիշ ոչ ոք, նոյնիսկ Եկեղեցին չի կրնար յանձնէ իբրեւ յանձնել հաստատել խորհուրդ մը, Ե. որ ռանի գործութիւն, որովհետև խորհուրդին ազդ

զեցութիւնը գործուածին գործէն է և ոչ թէ գործողին գործէն, Զ. սրբութիւն ներգործող և նշանակող, որովհետև աստուածայն նշանը կը լինի շնորհաց միջնորդ, և այդ կերպով նոյնիսկ կը ցուցնէ թէ շնորհքն ալ կատարեալ է:

302. ԽՈՐՀԱՆՈՒՄ ԵՒ ԵԿԵՂԵՍՈՅ. — Խորհուրդ ներք կը զանազանուին խորհրդականներէն (*sacramentalia*), որոնք Եկեղեցիին հաստատուած նշաններ են, ներգործելու և ցուցնելու համար հոգեւոր արդիւնք մը, բայց Քրիստոսէ հաստատուած չեն անոնք, և աստուածային շնորհն ալ հաստատուած է կից չ'ընթանար գործողին գործէն ելած նշանին հետ, Ու այս երկու գլխաւոր հանգամանքներն են որ կ'որոշեն, այսինքն կը գտնազանն խորհրդականները խորհուրդներէն, իբր օրինակ կարելի է յառաջ բերել մկրտութեան ջուրը և խաչաւառային կամ ջրօրնէքին ջուրը, Առաջինը նշան մըն է Քրիստոսէ հաստատուած, որուն շնորհը հաստատուել է գործաւելի գործէն, իսկ երկրորդը հաստատուած է Եկեղեցիին միայն, ու իր շնորհքը պատահական է գործողին գործին համեմատ: Խորհրդականներէն աւելի խոնարհագոյն աստիճանի վրայ կան ուրիշ զգալի և բարեպաշտական նշաններ, զորս իւրաքանչիւր կը կ'ընէ ըստ իր ներքին զգացումին, հետեւելով սովորական կարծեալ կամ իր եռանդին բերումին համեմատ աւելցնելով: Ասոնք նոյնիսկ խորհրդականներուն կարգը չեն գտնուիր, այլ կը մնան լոկ իբրեւ անհատական գործեր, որոնք գործողին արժանիքին համեմատ իր վրայ կը հրաւիրեն աստուծոյին շնորհքը, բայց իրենց մէջ աչինչ կայ հաստատուել գործողին գործին կամ Քրիստոսի բացայայտ կամքին: Բարեպաշտականներուն՝ խորհրդականներուն՝ խորհուրդներէն այդ եռաստիճան արարելութիւնը ճշգրիտ կերպով կը բացատրէ ինքնին թէ ինչ է Եկեղեցւոյ խորհուրդներուն իսկութիւնը:


303. ԶԼԿԱՆԿԱՆՈՒՄ ԵՒ ԵԿԵՂԵՍՈՅ. — Եկեղեցւոյ խորհուրդներուն շուրջ գտնական խնդիրները ոչ ծագեցան արեւմտաքի մէջ, այսինքն Բողոքականութեան հետ միայն:

Նորադադները շուրջացան խորհուրդներու գոյութիւնը, բայց անոնց գոյութեան և թիւին մասին յայտնեցին տալիս ի կարծիքներ, որոնք չէին համաձայն անոնց մասին եկեղեցւոյ ցայն վայր ունեցած համոզումին: Լուսեր կ'ըսէր թէ խորհուրդները Աստուածային խոստմանց նշաններ կամ կնիքներ են, հաւատք արթնցնելու և ժողաց թողութիւն ստանալու համար Գրիստոսի միջոցաւ: Կալվին խորհուրդները կը կոչէր Աստուածային շնորհաց նշաններ, որոնք ընտելային մէջ վստահութիւն կը շինեն Գրիստոսի հաւատքին և խոստումներուն մասին: Չաւինկլ կ'աւելցնէր թէ խորհուրդները նշաններ են, որոնցմով մարդ եկեղեցւոյ առջև կը հաստատէ Գրիստոսի հեռեղ կամ զինուոր լինելը, և որոնք եկեղեցիին հաւատարմ կու տան մէկու մը հաւատքին մասին, աւելի քան զոր մէկը կրնայ առ իր մասին: Կրկնակնունքները խորհուրդները կը կարծեն շնորհաց

կեանքի այլաբանական նշաններ: Ս. Կինեանք և իրենց համախոհները կ'ըսեն թէ խորհուրդները արտաքին սին տրորողութիւններ են, որոնցմով քրիստոնեաները կը զանազանուին ուրիշ կրօններու հետեղներէն: Ըստ Գուէյքերիերու, խորհուրդները հոգեւորական գործեր են՝ ներքին արդիւնք երկնային լոյսին: Կան ալ որոնք խորհուրդները կը համարին խորհրդաւոր նշաններ, Աստուծոյ մարդաց հետ միաւորութեան: Եւս քալուր բացատրութիւնները թէ և իրարմէ տարբեր, բայց համաձայն են ուրանալու համար խորհուրդին իսկական պայմանները՝ ուղիղ դաւանութեան համեմատ, ու հեռացնելով շնորհաց ներգործութիւնը և նշանակութիւնը գործելուն զործէն ըստ կամաց Գրիստոսի, կը թողուն միայն սին տրորողութիւն մը կամ լոկ արտաքին նշաններ՝ հաւատք արթնցնելու կամ հաւատացեալները ճանշնալու համար:

(Շառաւիղի 30)

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՂՍ. ՕՐԾԱՆԵԱՆ



Եթէ մարդիկ հաւաքէին
Ոսախօսներն այս աշխարհին,
Եւ ուզէին կախել զանոնք,
Վստահ եմ թէ երկրի վրայ
Անկարելի պիտի ըլլար
Ճարել այնքան ծառ ու գերան
Գործածելու անոնց համար
Իրեւ օդակ ու կախաղան:

Թիւր աս է այդ վատերոն,
Տկարներուն անբարեխիղմ:
Եթէ անոնք վերածուէին
Անճրեղներու կաքիլներուն,
Պիտի ըլլար քակիզ մը նոր
Մեր օրերու ջրհեղեղին:

ԵԶՈՎՊՈՍ



Վ Ի Շ Տ Ն Է Ն Ո Ր Է Ն

Վիւսն է նորէն,
Դեղին ժպիսն իւր շուրթերուն,
Մազիկներն իւր խրած ուժգին
Հէք իմ սրտին:

Վիւսն է նորէն,
Տապարն ուղղած արմասներուն
Թոյլ, ազազուն իմ հաւաստին:
Իւր բազուկով գերահօր
Խիւլ փորձող
Ծիլը կանաչ իմ երազին:

Վիւսն է նորէն,
Բազմածանիք,
Իւր խոցերով խորակնիւ.
Բիրս, անզիջող,
Հին թեւածի, անգութ ոտիս,
Եռանդ, կորով,
Սեղծագործ ամէն ալիւ
Պամբեցնող:

Վիւսն է նորէն,
Ողնուկո՛ւրը մեր այս կեանքին,
Չայն ճաք պահող հուրը ներքին,
Ոռանց որուն,
Շէնքը փարթամ մեր օրերուն,
Ձերթ պարկ պարապ,
Ինք իւր վրայ կը կծկուի ու կը փլի:

Վիւսն է նորէն,
Անբեկ օրէնք ճիւղերքին,
Ձի գիրն է մեր ճակատին
Մեր հացն ուտել
Համուլն աղի մեր ֆրսիներին:

Ի՞նչ է կեանքը առանց վիւսի,
Իմաստազերծ, միապաղաղ,

20 Ն,

(Հ. Բ. Ը. Մ. ի մեծ ընտանիքի

բոլոր անդամներուն)

(75ամեակի առիթով)

Արեւելեան կողմն աշխարհի
 Ծնար դուն օր մը բերկրալի,
 Զուրերուն մօտ Մայր Նեղոսի:
 Սասար հղար ամէն հայու
 Կարիքներուն ծովածաւալ,
 Եւ Միութեան խորհրդանիշ
 Զիրար սեղմող ձեռքեր երկու,
 Բառեր երեք՝ «Եղբայր եմք մենք»:
 Այդ օրերուն ժողովուրդը
 Կ'ապրէր դեռ իր հողին վրայ,
 Իրար խառնած ճագնապ, կսկիծ:
 Սակայն պահը կը հասուննար
 Մեծ Ոսոխի սալաքանդներուն,
 Եւ Ապրիլեան օր մը խաղաղ
 Քեցց ճարաւ տունը հայուն՝
 Ուշադրեցին չորս ծագերուն...:
 Դուն օգնութեան եկար նորէն
 Բեկորներուն մեր ցիրուցան:
 Վերածնունդ Հայրենիքին
 Բացիր նոյնպէս ձեռքդ բարի,
 — Նոր օրերու Ռամադանի, —
 Մշուշներուն մէջ տառապող

Մեռել սպասող պարապ դագաղ,
 Անլեռ ցամաք, անալիք ծով ու անաղ
 Ունծուիս կրակ, ձորձ հնամառ: [հաւ,

Վիշքը կայ միշտ,
 Բայց անոր դէմ ե՞րբ է որ մենք
 Սերը դնել պիտի գիտնանք
 Մեր սրտերուն իբրեւ վաղանք:

Գ. ՀԱՐՏԱՐ

Բեկորներուն մեք Սփիւռֆի,
 Բերիք բարիք եւ օրհնութիւն
 Արեւելէն ընկն արեւմոսէ:
 Բազմացոյցիք դուն դպրոցներ,
 Եկեղեցի, ակումբ, մամուլ,
 Որ չձուլուէր հայը կրկին
 Ճերմակ ջարդէն անեղածին...:
 Սասարեցիք դուն տակաւին
 Գրին, գրչին, մեակոյթին,
 Նկարիչին, երաժիշտին,
 Ինչպէս Նեղոսն Եգիպտոսի,
 Որու ավին օր մը ծընար
 Իբր սփոխանք մայրագործով
 Ժողովուրդին մեր տարագիր:
 Կը քալես արդ հակասաբաց,
 Հաստատակամ ու ապահով,
 Ու հովերուն, խորակներուն
 Դէմ միշտ կ'ըլլաս բումբ անխռով:
 Քեզ կը մաղթեմ նոր երթ բարի,
 Միշտ դէպի վեր, դ՛պի յառաջ,
 Նոր դասիններ յաջողութեան,
 Աղամանդեայ յոբելանիդ
 Առջեւն կեցած եւ ծնրապիր:

ՆԱԶԱՐԷԹ Պ. ԶԱՓԱՏԱՐԵԱՆ

Աղեֆանդրիա, Եգիպտոս

Մայիս 1981





ԼՈՐԻՏ ՊԱՅՏՐԵՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԵԶ

Անգլիացի համբաւաւոր բոլորաբան Լորա Պայրըն ծնած է Լոնտոն՝ 1788 ին, Ուենչեստը և շատ արկածալից կեանք մը, իր գործերն ալ, որոնցմէ մաս մը հայերէնի թարգմանուած է, մեծ մասամբ այդ կեանքին ցոլացումներն են: Սպանիաւած է 1824 ին Միսալոնիկի մէջ, ուր գտնուած էր Յուդայական տնկարանի համար կառուցուած:

Պայրըն Անգլիական Գրականութեան մեծ սգոյն փառքերէն մէկն է: Ասանք մը այցելած է Վենետիկ, Միլիթարեանց վանքը, և բաւական ժամանակ հոն մնալով, սարկած է հայ լեզուն, որուն համար մասնաւոր աէր մը ունէր:

Յայտնի է թէ Լորա Պայրըն մեծապէս օգտուած է Արեւելքի մէջ իր կատարած համարադասութիւններէն, որոնց վրայ հայաւորներն գրած է: Այստեղ կ'ուզիմ յիշել իր կեանքին այն քանի մը դիմերը, որոնք մասնաւորաբար մեզ՝ Հայերուս կը հետաքրքրեն:

Լորա Պայրըն Վենետիկ եղած ժամանակ երկու տարիէն աւելի (1816-1818) շարունակաբար Սուրբ Ղազարի վանքը կ'երթար, մեր լեզուն ուսումնասիրելու և սորվելու համար: Գրիթէ քիչերուն ծանօթ է գտնուէ Պայրընի անմիջական օգնութեամբ հրատարակուած Անգլերէն-Հայերէն և Հայերէն-Անգլերէն քերականութիւնները: Նոյնը յատկանշական է նաև Անգլերէն-Հայերէն և Հայերէն-Անգլերէն առաջին անգամ հրատարակուած բառարաններէ համար:

Բարեկամի մը ուղղուած իր մէկ նամակին մէջ, Լորա Պայրըն հետեւեալը կը գրէ հայ լեզուն նկատմամբ. «Սկիզբ և կը շարունակեմ հայ լեզուն ուսումը հայոց վանքին մէջ, ուր կ'երթամ դառ առնել ուսումնական վանական մը: Ես այդ արեւելեան մողովուորներն դրականութեան ու սովորութիւններուն մասին քաղած եմ

շատ եղական և օգտակար տեղեկութիւններ: Լեզուն դժուարին կը գտնեմ, բայց աչ տնայադիւրս:

Ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ թէ Վենետիկ հասնելուն՝ ծանր զբաղում մը կը փնտռէր, իր միտքը բանի մը վրայ կեդրոնացնելու պէտքը կը տեսնէր: Ուստի կ'ընտրէ հայերէնի ուսումը: Լորա Պայրըն մեր լեզունի դժուարութիւնը իր Անգլիացի բարեկամին հետեւեալով համար կ'աւելցնէ թէ «երկուորեակ» է հայերէնը, դրական և բացակայան: Սրանից կը յայտնուի որ Անգլիացի բանաստեղծն ալ իր կարգին «քաջեր» է ինչ որ մեզմէ շատ բուն հակառակորդն է եղած դպրոցի մէջ. — սորվիլ զբաղար և աշխարհորար: Կոսկած չկա՞ որ, միջավայրին բերմանըով, աւելի շատ առաջինը սորվեցաւ Պայրըն:

Պարզ է թէ Պայրըն բնականաւ չարաշարուած էր մեր լեզունին ուսումնասիրութեամբ: Իր ձեռնարկին դժուարութիւնը իր մէկ ազգակցին յայտնելու համար հետեւեալ պատմութիւնը կ'ընէ. — «Սրանից շուրջ տարի առաջ (1812), Ֆրանսացիք Հայերէնի ֆոնէտիքութիւն մը հաստատեցին Փարիզի Արեւելեան կենդանի Լեզուներու Դպրոցին մէջ: Երկուշարթի աւաւած մը, քանի չափ աշակերտներ կը ներկայանան հոն, ազնիւ ետանդով և անդադարելի աշխատասիրութեամբ լեզուած կտրովմիտ երիտասարդներ, որոնք քաջութեամբ կը յարասեան միջև Լինգւարթի, բայց այնուհետին քառնվեցիրորդ տառին հասնելուն՝ տասնհինգ փոխուած կու տան: Աւելու իմ Անգլիացի բանաստեղծը այդ Ֆրանսացիներէն ունի յաժառանգաւոր մէկն էր: Նոյն ժամանակ ինքն ալ բնական սիրու հասցուցած էր և տեղ մը «լրբուհներ Ուսմէրը» մը կը կոչէ մեր լեզունին բնական հարուստ այնուհետ:

Երեւակայեցեք «Մանֆրէտ»ի հեղինակը, որ ամէն առաւօտ կ'օնօնաւ նստած, Սուրբ Ղազարի վանքը կ'երթար հայերէն սորվելու, և այնտեղի Միսալոնիկներուն փոխադարձաբար Անգլերէն սորվեցնելու: Ս. Ղազարի վանքին և Միսալոնիկներուն մասին մեծ գովեստով խոսած է Լորա Պայրըն իր շատ մը նամակներուն մէջ, քանի մը պարբերութիւններ հոս կրնամ

մէջը բերել անոնցմէ. — զվենեաթիկ գտնելու միջոցիս, ամէն ճամբորդի պէս իմ ուղևորութիւնս գրուեց Ս. Ղազարի վանքը, որ միացուցած է վանական հաստատութեանց բոլոր առաւելութիւնները, առանց անոնց թերութիւններուն: Կարգաւորելով իր բոլոր նամակներուն մէջ: Կատարելութիւնը, անկեղծ և անսակարկ բարեպաշտութիւնը, ազնւոտութիւնը, հանգաբարութիւնը և ճաշարութիւնը կը ծառայեն հաւատացնելու ոչ խորհրդաբան թէ նայնիսկ այս կեանքին մէջ կոյ ուրիշ և լուսագոյն կեանք մը: Լորտ Պայրըն հայերու մասին կը խօսի գրիթէ իր բոլոր նամակներուն մէջ: Կը յիշէ Յարութիւն վարդապետ Աւգրեանը, որուն տեղ մը չիմ հայրս՝ անունը կառայ, Այնքան սերտ կապով զօգուած էին իրարու:

ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ



Ստորեւ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք նոյն: Եւ Լորտ Պայրընի ազգայնական ստեղծագործութիւններէն: Կտորը առնուած է մեծանուն հեղինակի "Child Harold's Pilgrimage" հատորէն:

Անպատկառ ըլլաւ ինձ՝ բնակատեղ, Աղուո՛ր հոգի մը ինձի ծառայե՛ր, Եւ ես, մտւումով ողջ մարդկային ցեղն, Չափելով ո՛ք, զայն ուզեի սիրել: Ձեր ազնւացնող շարժման մէջ, քաղեր, Վեհացած կը զլտմ — միքէ կառու յե՞ք Շնորհել զայն ինձի — սխալ եմ կրնամբեր Թէ կը բնակիմ անոնք օստ ուրեք, Բայց ուզիւ քանոնց հետ կարենանք խօսիլ մեզ:



ԵՍ ՊԱՇՏԵՑԻ

Պաշտեցի ես քեզ, Եկեղեցի եմ Հայկական. փոքր ազգի մը նուիրական Եկեղեցին ես դուն: Տկար և անպաշտպան՝ յաղթեցիր միշտ թշնամին հաւատաբեկ անասուն: Տարածեցիր թեհեղ ժողովուր. Գիշ վրայ, հաւատացեալներդ կանչեցիր միշտ քեզի, մխթարեցիր, քաջախիսեցիր զանոնք և զօրացած զրկեցիր զանոնք աշխարհ, պայքարելու և կանգուն մնալու համար:

Սիրեցի ես աննաւական ուղի: Ապրեցայ, շնչեցի և հառակ առի կամարներուց տակ: Երուսաղէմի Ս. Հրեշտակապետաց փոքրիկ եկեղեցիին մէջ յաճախ մասնակցեցայ արարողութիւններու: Ս. Յակոբեանց հոյակապ աւանդին մէջ լսեցի միշտ մեր սրբազան հայերու քարոզները, որոնք ներշնչեցին և խանդավառեցին զիս: Մայրս միշտ ըսած է ինձի թէ Ս. Յակոբայ զաւակն եմ ես. ծնողքս զիս նուիրած էին Ս. Գլխապրին և զիս առած էին իրմէ: Ինչ հրաշայի հաւատք, որ արժանապատեց մնաց իմ մէջ, և կեանքի փոթորիկներուն մէջ Ս. Գլխապրի զօրաւոր քաղաքներուն ապաստանած՝ ապանով մնացի:

Կանգ առէք մի քիչ մեր Եկեղեցիին տուփ. յիշեցէք վայրկեան մը իր արևուն աղայքսները, իր սրբազան զահար, և հիացէք Աստուծոյ ոյժին վրայ, որ զայն պահած է մեր տառապնալ ազգին համար, որպէսզի անոր հաւատքի կոնքիւղ չմարի:

Ան տառաւորայն լուսադոյն նուէքն է մեզի: Պահենք և սիրենք զայն, նուիրուենք անոր, բոլորունք անոր չուրջ և խոստանանք հայ ապրիլ և հայ միաշին:

Լ. ՎԻՍՏՈՆ

Կ. ՄԻՀՐԱՆԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԵՊՍ. ՆԵՏՐԱՐԵՆՑ

(1430? - շ. 1500)

Թակոր Եպս. Նեաբարենց ծանօթ է իբրև Արծկեցի, Որդին էր Ներսէս քահանայի և Խաթուն-Մելիքի, Ունէր երեք եղբայրներ և երկու քոյրեր, Արծկէի կողուց վանքի միաբանութեան անդամակցած էր, Իբրև արեղայ կը յիշուի 1452 ին, երբ իր գրեկ տուած Աւետարանը կը նուիրէ Աղթամարայ Աթոռին. — Լ. Ս. Խաչիկեան, Յիշատ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 32:

Ան գիտէր գրչուութիւն արուեստը, և կատարած է ընդօրինակութիւններ. կըրնանք յիշել հետեւեալները.

1. — Գոննիլիւբ, տէր Յովանէսի համար. — Զեռ. Ս. Թ. թիւ 278:

2. — Աւետարան, օրինակած է 1464 ին, Արծկէ քաղաքին մէջ. Գոննիլիւբ խաթունի փափաքով. — Լ. Ս. Խաչիկեան, Յիշատ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 261:

3. — Աւետարան, օրինակած է 1467 ին, Արծկէի մէջ. — Յիշատ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, թիւ 331:

4. — Գոննիւրան, աւարտած է 1491 ին, որ կիսատ մնացած էր իր եղբոր՝ Գրիշ Դազար քահանայի վաղածամ մահուամբ. — Զեռ. Երևանի, թիւ 5438:

5. — Աւետարան, օրինակած է 1499 ին, մասնակցութեամբ Զաքարայ Կարի. Մովսէսի որդի Ստեփանոսի համար. — Զեռ. Երևանի, թիւ 8761:

Թակոր Եպս. Արծկեցի գրած է նաև քանի մը տաղեր և դանձեր, որոնք թէև զօրաւոր ներշնչութիւն մը ծնունդը չեն, այնուհանդերձ համանման գրութեանց կարգին մտած են Տաղարաններու և Գանձարաններու մէջ, Ատոնցմէ կրնանք յիշել հետեւեալները.

1. — Տաղ Ս. Նսանին Արծկոյ. — Սքանչելի տաւրը նըշանըդ պատուեալ... Գրած է իր եղբոր՝ Դազար քահանայի (+ Ն. Բ. 1491) խնդրանքով. — Զեռ. Ս. Թ. թիւ

1249, 135, 1193, 1521. 2009, Հմմտ. Աւետարան, 1895, էջ 127:

2. — Գոննիւրան սխնդրագործ Ս. Նսանին Արծկոյ. — Թիսուս Գրիստոս արքայ համայնից... — Զեռ. Ս. Թ. թիւ 135, թղ. 435բ1-437ա1: Նոյնը իբրև Գոննիւրան արքայի համայնից սկզբնաւորութեամբ, և շօշափելի տարբերութիւններով. — Տեռ Զեռ. Ս. Թ. թիւ 2009, էջ ՆՄԴ: Այլուր կը սկսի Կենդանաբար Որդիդ Միածին բառերով, որ երբորդ տունին սկզբնաւորն է. — Տեռ Զեռ. Ս. Թ. թիւ 1521, թղ. 342. թիւ 1249, թղ. 515:

3. — Տաղ ի վերայ Աստուածացւոյ. — Գորուն է բացուեր... — Զեռ. Ս. Թ. թիւ 1417, էջ 307-310. թիւ 2323, թղ. 134ա. — Հմմտ. Կոստանեան, Միշն. Տաղեր, պրակ Բ., էջ 19-21:

4. — Տաղ Անդու. — Իսկ մեծ Մարիամ Մազազանացին... — Զեռ. Ս. Թ. թիւ 278, էջ 556-557:

5. — Տաղ Ս. Գեորգի. — ՅԱստուծոյ ընտելցոր... Գրած է Մովսէս խնդրանքով, Այդ թուականներուն ծանօթ տնձ մըն էր Մովսէս Բն. Արծկեցի. — Զեռ. Ս. Թ. թիւ 135. թղ. 430բ-431ա. թիւ 1249, թղ. 519-520. թիւ 1193, ձև. թիւ 1417, Ղ. թիւ 1521, թղ. 338-340. թիւ 2009, ձև:

6. — Տաղ Աւետարանի յաւուր Յարութեան... Մայրանուն՝ Թակոր մեղաւորն ապեւ է. — Զեռ. Ս. Թ. թիւ 1249, թղ. 242բ-244ա թիւ 135, Ղ. թիւ 1193, էջ 403. թիւ 1521, թղ. 176-177:

7. — Տաղ ի վերայ Ստեփանի Յանուարոյն. — Ականջ դրէք եղբարք բանին պատուակոն... — Զեռ. Ս. Թ. թիւ 1455, թղ. 260ա: Տեռ Յուրակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ե. Հատար, 1971, էջ 148-151:

8. — Տաղ Ս. Խաչին... վասն սխնդրագործ Ս. Նսանին Արծկէի քաղաքի. — Խաչն եղիցի մեզ պահպան, այլմահուէ մինչ ի վախճան. խաչ ուրացողքն կուրանան, հուստացեալք ուրախանան... — Քէշիշեան, Յուրակ Զեռ. Զմմառի, 1964, թիւ 82, էջ 155 (82):

Ն. ԱՐԲ. ԵՈՎԱԿԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԶԵՄԵՐՈՒՄ

Զ Մ Ի Ի Ռ Ն Ի Ռ Ց Ա Ղ Է Տ Ի Ն Շ ՈՒ Ր Զ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Համայնակույ ահաւոր հրդեհը. — Սեպտեմբեր 13, Զորքաշարթի կէտօրէն առաջ, Հայոց թաղին մէջ երեցած թուրք մուսուլմանները բարձրաձայն կ'աղաղակէին հայ տուններու մէջ ալքատցող թուրքերուն որ փութով գուրտ ելին տուններէն և հեռուան Հայոց թաղէն: Այս աղաւաղաբանութեան նշանակութիւնը հասկցուցեցաւ կէտօրին, երբ թուրքերու հեռանալէն ետք հրդեհի օկզբնաւորութիւնը երեցաւ Հայոց թաղին մէջ: Այս անգամ ալ հրշէջ խուճրը հասաւ, առանց սակայն Անգլիացի նաւազներու ընկերակցութեան, որսւած ըլլալով որ Անգլիացի ծովակալը իր բաւարար նաւազները քաշած էր ցամաքէն: Հրդեհը այս անգամ կը յամառէր մարիլ, ընդհակառակը հեռանալէ կը ծաւալէր և մեծ համեմատութիւններ կ'առնէր: Հրշէջ խուճիկն ջրանքերը կը չէզոքացուէին թուրքերու կողմէ ջրհանկիրներուն վրայ բացուած կրակով: Թուրք կառավարութիւնը հայոց վերադարձի ուղիով է այս հրացանակազութիւնը, որ կը կատարուէր հայոց եկեղեցիէն, երբ կ'այրէր Մամուր հետ տալաններ: Ասոր խնդրութիւնը ըլլալով կը հաստատուի անով որ օր մը առաջ եկեղեցին հայերէ պարպուած և թուրքերէ գրաւուած էր: Հրդեհ մըն ալ ծայր կուտար շուկայէն: Բռնկած կ'այրէին յսնաց Այի Յարկիտ եկեղեցիին շուրջը գտնուող մեծ վաճառատունները, որոնք արդէն բոլորովին կողպաւորուած էին: Երկու հսկայ սոյն հրդեհներուն երրորդ մըն ալ աւելցունել ուղեցին թուրքեր, բռնկեցնելով թաղաւանէ թաղի մուտքին վրայ գտնուող շէնքերը: Բռնկած այս մասին վրայ դէմ առ դէմ կը գտնուէին երկու մեծ վարժարաններ: Հռիփսիմեան հայ ազգական վարժարանը և Ամերիկեան ազգական վարժարանը:

Դան: Այս երկու վարժարաններուն մէջ հազարաւոր յոյներ և հայեր ապաստանած էին: Կուժանին նպատակն էր այրել այս երկու վարժարանները, մէջի ժողովուրդն ալ միասին: Ամերիկեան վարժարանի վարչ ժուհիներ և հոն գտնուող Ամերիկեան նաւազներ, որոնք որոշակի կը տեսնէին խուճանին և զինուորներուն արարքները, ծանուցին վտանգին ծանրութիւնը հրամանատար ուղային, որ հրամայեց վարժարանին դուռը բանալ և ժողովուրդը դուրս հանել և առաջնորդել քարափ: Ամերիկեան վարժարանին հետեւեցան Հռիփսիմեան վարժարանի մէջ ապաստանող հերոզնուհիներ: Հրձիգներ չէին բաւականաւոր շուկայի, հայնոցի և Թալախանէի հերոզններով, այլ իրենց կարգին ուղի միջոց ի գործ կը դնէին հրդեհը արծարծելու և ճիւղաւորելու, և վերջապէս հասցնելու այն հեռաւոր թաղերը, ուր օտար հաստատութիւններուն մէջ պահուած կային մեծ թիւով հայեր և յոյներ: Կրակը արծարծելու համար հրդեհուեցան հարիւրաւոր տուններ, պիլլիլմով օծուեցան հազարաւոր շէնքեր, այնպէս որ մինչև առաւ արդէն իսկ մոխրակոյտի վերածուած էին 50,000 եւալի շէնքեր, որոնց մէջ կը գտնուէին 21 եկեղեցի, 32 վարժարան, 5 հիւպատոսարան, 7 իլլալ, 5 գրամատուն, 5 հիւանդանոց և այլ կարեւոր շէնքեր: Եկատելի պարագայ մըն է որ թուրք կառավարութիւնը մասնաւոր հազածութիւն փոխ առաւ կարգ մը շէնքերու համար և հրդեհէն փրկեց գանձը, զոր օրինակ՝ Բրէտի Լիօնէի և Յուսեպ աղագոյի դրամատունները, Կիֆրէի գրասենեակները և իտալական վարժարանը, մինչև դեռ անոնց շուրջ պահուած մեծ ու փոքր շէնքեր մօխրի վերածուեցան:

Ջաւհուրեյի գիշերը. — Անաւոր հրդեհի տրչաւանքին առջև ինկող բոլոր տունները և օտար հաստատութիւնները պորպուռեցան: Ժողովուրդը ստիպուած էր զուրա գալ և դիմել դէպի քարափ, որ այդ գիշեր կը ներկայացնէր դժոխային ահաւորոն մը: Շուտօրէն հաստատութիւնը հոն վեր վար կը վազէր: Երբ հրդեհը քարափին մօտեցաւ, ժողովուրդին վիճակը շատ աւելի աղիւստի դարձաւ: Ստատոսփաւոր ժողովուրդը առաջ չէր կրնար երթալ, որովհետեւ ալեկոծեալ ծով մը կար, ետ ալ չէր կրնար դառնալ, որովհետեւ անաւոր հրդեհ կար. իսկ հրկու կողմերէն դաժան խուժանին և զինուորին սուխները կային. կողոպուտ, խռատեցում, լուսանք և քանակածութիւն անպակաս էին: Դժբախտ և զարհուրեալ ժողովուրդը մէկ կողմ կը նետէր իր հետ բերած մեծ ու փոքր ծրարները, որոնցմէ շատերուն մէջ թոնկադին իրեղէններ պակաս էին, և կ'աշխատէր միայն ինքզինքը ազատել այդ գիշեր: Հոն քարափին վրայ շատեր կոթուածահար եղան, նոյնքան ալ իրենք զիրենք ծով նետողներ: Քիչ չէր թիւը այն հայրերուն, որոնք նախ իրենց մանուկներն ու կիներ և ազա ինքզինքներն ծով նետեցին: Վարժ լուղորդ եղող երիտասարդներ կրցած հասնել ծինէր մարտանաւը, և կառնեցան անոնց օսնդուխներուն, և սակայն յաճախ մերժուեցան ընդունուիլ: Այլ կրնաք երեւակայիլ այդպիսեաց վիճակը: Իրենց արգիները կորոնցուցած մայրերուն լաւատառ աղաղակները, անսուաղ մանուկներու ճիչերը, օտարափաւոր ժողովուրդին վայնասունէն կազմուած եղերեքգութիւնը արտեր բղբեռնելու առաքինանին էր հասած: Դժոխային այս եղիւնին առջև թուրքերու անգթութիւնն ու Եւրոպացիներու ազատարարութեան անբաւարար միջոցները իրար հետ կը մրցէին: Թուրք ձիւաւոր զինուորներ երբեմն այնքան արագ կը վազցնէին իրենց ձիերը, որ տակէ յառաջ կու գար հրճըտուք և շատեր ծով կը թափէին: Յաճախ հրացանաձգութիւն կը կատարուէր, պարզապէս ժողովուրդը լեղատառաւ ընկու և զայն խուճապի մատակնու համար: Այդ գիշեր օտար նաւազներ հազիւ կրցան նաւ փոխադրել իրենց հպատակները և պաշտ-

պանեալները: Առանց հետ կրցան ազատուիլ նաեւ կարգ մը հայեր և յոյներ, արաքայ կարգի դժուարութիւններով և մեծամեծ առաւպաքներով:

Ջերմալիալուրի միջոց ևս գերեմարութիւն. — Սեպտ. 14, Հինգշաբթի առաւուր, իրգիրի ծովածոցը կը պարզէր նաւաբեկութեան մը յաջորդող վիճակը: Բազմութիւ դիակներ կը տատանէին ալիքներու վրայ, յաճախ քաջափին զարնուելով և դարձեալ հեռանալով: Շատ մը նաւակներ կը նշմարուէին ջուրին վրայ, անոնցմէ շատերը անդիկ: Այդ նաւակներուն մէջ լեցուած անթի ժողովուրդը կէս գիշերէն ի վեր խաղալիք եղած էր ալիքներուն: Քարափին երկու ծայրերը դանուող մաս մը չէնքերէ դատ, անոր ամբողջ երկայնքին վրայ եղող չէնքերը իրենց վերջին ճարձատեմին մէջ էին: Քարափին հրդեհէ գերծ վերջաւորութեանց վրայ սփռուած, տարածուած ու ինկած էր գիշերուան տառապանքներէն յոգնած ու պարտաւոր ժողովուրդը, գիշատիչ գազաններու ճանկը ինկածի երեսոյթով և սարսափահար: Կարգը եկած էր ձերբալիութիւններուն, որոնք պիտի յանգէին գերիվարութեան: Քէմալական զինուորներ և նախկին փոլիսներ, ըստին ալ դժոխային երեսոյթով և փայտով, կը թափանցէին խեղճ ժողովուրդին մէջ և կը ձերբակալէին այրերը: 14-70 տարեկան այրերով լեցուեցան զօրանոցի ամէն յարկաբաժինները:

Ջերմալուռածներէն անոնք որ հայ էին, ճամբան կ'ենթարկուէին յարձակումներ և խուճանին կողմէ հարուածներ կը կրէին: Լուստուրը, կողպուտը և ծեծը կը շարունակուէր զօրանոցին մէջ, յոյներու և հայերու վրայ հաւասարապէս: Զօրանոց տարուած կային նաեւ մաս մը կիներ և ուղիներ: Հոն համախմբուած այրերը առանց համուելու և արձանագրուելու կը յանձնուէին զինուորներու, տարուելու համար իռնար Պաշին իւրաքանչիւր անգամ 3-5 հազար հոգի ճամբայ կը հանուէին: Զինուորները կը ստիպէին գերիները վազել իրենց ձիերու գետցքով, շարունակ հարուածելով դառնալ: Տաճանիկ այս ճամբորդութիւնը չկրնալով շարունակել, մարող և ինկող

գերինները կը սաւեանահարուէին: Այս կերպով մինչև Բուհար Պաշի, իբր 2 ու կէս ժամուան ճամբայ, մէկ քաաքը կը պոկւէր կարաւանէն: Ճամբու ընթացքին տեսեալ մը միայն դադար կը տրուէր, այն ալ ոչ թէ գերինները հասցնեցնելու, այլ զանոնք կողոպտելու և անոնց վրայ մեղացածներն ալ առնելու համար: Անյուր չարչարանքներով Բուհար Պաշի տարաւորներուն մէջէն շատեր ալ յանձնուեցան: Գերիացի թուրքերուն, գոյացում տալու համար անոնց տերապարտութեան ծարուսին: Բուհար Պաշի երեք օր շարունակ գերի փոխադրուեցաւ: Հոն կայան դարձած էր գերիններու: Իզմիրէն եկած հրամանի մը վրայ ծերիբը ետ վերադարձուցան, իսկ միւսները աւելի ներսերը քշուեցան:

Գէորգիականաց ձևքը ինկզոյ գերիններու թիւը այսպէսով կը հասնէր 70-80 հազարի: Հրդեհին յաջորդող առաջին օրերուն, կրնարեալ գերեվարուեցան ղէպի Պալզովա, Մէրսինի և այլուր, պարզապէս կողոպտուելու և գէշ վերաբերման քի ենթարկուելու համար:

Հոգեւոյս Ելբորս՝ Տ. Խրիստոսովնովն անապոլսիբլը. — Սկստ. Ծ, Շարաթ, Բէմայականներու յաղթական մուտքին տաթիւ, Տ. Խրիստոսովնովն, իր հետ ունենալով երկու յոյն երեւիներ՝ Պ. Պ. Զիւրիվճիօղլու և Կալեանօղլու, ժամը 4ին կը ներկայանայ Էնդհանուր Հրամանատար Նուրէտտին Փաշային և անոր բարի գալուստ կը ժողթէ: Փաշան կը յանձնարարէ Մետրապօլիտին խրատել յոյն ժողովուրդը որպէսզի 1) ղէպքեր սենցորդներ կառավարութեան յանձնեն զանոնք, 2) փախըտական զինուորներ յանձնուին զօրանոց և 3) բնաւ երկիւղ չուսնեայ ժողովուրդը և իր գործերով զբաղուի ըստ առաջնոյն: Խրիստոսովնովն Սրբազան հաւատքներ ընծայելով և շնորհակալութիւն յայտնելով կը մեկնէ և առաջին առթիւ իսկ կը ձեռնարկէ հրահանգներուն գործադրութեան: Մետրապօլիտին վերադարձէն երկու ժամ վերջը սակայն քանի մը զինուորներ և փոխներ կը ներկայանան Սրբազանին և կը հրահարեն զինքը կրկին ներկայանալ Նուրէտտին Փաշայի նոր հրահանգներու համար: Սրբազանը

նոյն երեւելիները հետ առած, ժամը 8ին կրկին կ'երթայ կառավարական ապարանքը, ուր թուրք խուժանք խանուած էր: Կ'ըսուի թէ Նուրէտտին Փաշա իր ներկայութեան կ'ընդունի Սրբազանը և իր հետեւողները, և բացառութիւն կ'ուզէ Սրբազանէն յոյն տիրապետութեան շրջանին իբր թէ կարգ մը չարքներ թուրքերուն հասցուեցած ըլլալուն: Խրիստոսովնովն Սրբազան թէ կ'ուզէ ինքզինքը տարադարձեցնել, սակայն կը գեկուցուի իրեն թէ մինչև քննութեան տարատու մը պիտի ըստարկուի և ըստ այնմ կը յանձնարարէ պաշտօնեաներուն կապեալ առաջնորդել զինք բանտ: Սրբազանը թէ կը խնդրէ որ մինչև բանտ առաջնորդուիլը պաշտպան զինուորներ տրամադրուին խուժանին յարձակման չհնարակուելու համար, և թէ կը արամադրուին զինուորներն որոնք անձը պաշտպանելու համար, բայց հազիւ պալատէն դուրս ելած, խուժանը կատաղութեան նոպայով կը յարձակի Սրբազանին և անոր հետեւող երկու երեւելիներուն վրայ և կը սկսի քաշկուռել զանոնք ղէպի Պաշ-Օթուրաք: Մինչև հոն գործուած սոսկալի յարձակումներուն և տրուած հարուածներուն հետեւեցով, արդէն իսկ կ'իսմառ վիճակ մը ստացած էր Մետրապօլիտը և անկարող էր քաշելու: Խուժանը ղէպի Իքի Զէմէլի թաղը կ'առաջնորդէ իր երեք զօհները և հոն գոփային այլազան չարչարանքներով կը ըզբէ զանոնք գիշատիչ գաղտնի պէս:

Մեր ուղարկումը պարագաներ. — Գէորգիական բանակին իզմիր յաղթական մուտքը գործիչին սկսեալ մինչև յաջորդ օրը՝ Կիրակի, Ս. Ստեփանոսի և մանաւանդ իմ բնակարանին՝ Առաջնորդարանին վրայ թուրք խուժանին և անկանոն զինուորները և հացանաձգութիւնները խորհիլ տուին ինձի թէ Առաջնորդարանը թողլով ուրիշ տեղ մը ապաստանիլու և անկէ ալ որեւէ միջոց գտնելով Նուրէտտին Փաշային ներկայանալու և ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը և բարեհաղակմութիւնը հայցելու աւելի ճիշդ պիտի ըլլար: Այդ իսկ խորհուրդով, Կիրակի առաւօտ ժամը 8.30ին, երբ կատաղի անկանոն զինուորներ և սատակ թուրքեր Առաջնորդարանի

հանդիպակաց խոսակցիները բանալով և թալլելով զբաղուած էին, հրաշիւք իմն դուրս նետուեցայ Առաջնորդութանն, ինծի հետեորդ ունենալով գործակատար, քարաուղար և բարապան։ Առաջնորդութանի գումարն սկսեալ դէպի կայսրան երկարող ճամբուն վրայ, ինչպէս նաև դէպի Այա Ծոթինի երկարող Մէզալէս Տալէրնէս փողոցին վրայ իւրաքանչիւր քալալու փոխին սպանեալ քրիստոնեայ մը ինկած կը տեսնէինք։ Իմ հետեորդներովս հասայ Պր. Փիէր Սիսլեանի տունը։ Պր. Սիսլեան, որ կաթողիկէ հասարակութեան ազգայեան էր, ինծի եղաւ լաւ խօսքերակից մը, միջոց մը գտնելու համար Նուրէտին փաշային երթալու։ Ինք անձամբ քնաց առժամեայ զինուորական վայի կարգուած իզգէտան փաշայի և անոր յայտնեց մեր այցելութեան փափաքը, աւելցնելով որ տիրող շփոթ իրիտակէն զգուշանալով իր հրամանին կը սպասէր։ Փաշան իր գահուսկով ինչը յայտնելով մեր հասցէն կ'ողզէ և կը հաւատարմէ թէ յարմար դատած պահուն լուր պիտի զրկէ։ Երկուշաբթի և երեքշաբթի մնացինք սպասողական դիրքի մէջ։ Այդ օրերուն, ըլլայ Հայնոցէն հասած անաւոր ջարդի լուրերը և ըլլայ Սրիսոսթանոս Սրբազանի մահուան գոյժը զիս և Պր. Սիսլեանը մատնեց օտակալի մտաւանդութեան։ Զորեքշաբթի. Սեպտ. 13, շատ աւելի վրդոված վիճակ մը ունէինք, քանի որ մէկ կողմէն խուժանք և զինուորներ մեր գտնուած կողմերը ևս միարժուի սկսած էին. իսկ միւս կողմէն Հայնոցէն ու շուկայէն ծագած հրդեհները մեր կողմերուն ևս կը սպառնային։ Նոյն օրը երեկոյեան ժամը 7ին, Պր. Սիսլեանը ամենամեծ զոհողութեամբ և արիւթեամբ առաջնորդեց զիս Լազարիսաներու Սաքրէ Բէթր վարժարանը, ուր նոյն միաբանութեան վերահսկողը և բոլոր հայրերը ցոյց առին ինձ հանդէպ մեծ յարգանք և ընդունելութիւն, և տեսնելով իմ յուզումաւից վիճակ, ամէն ջանք ի գործ դրին հանգարանցնելու համար զիս, հաւաստելով թէ միշտ և վերջ պիտի չթողէին զիս և պիտի պաշտպանէին անձս ամէն վտանգի դէմ։ Համայնակուել հրդեհը սկսաւ սպառնալ Սաքրէ Բէթր վարժարանին ևս և

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԵՐԴՐՈՒՏԻ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Եղբորուսի Ս. Թովհանուս վանքը կը գտնուէր Տարսն, Մշոյ դաշտի հարաւ արեւմտեան ժառին մէջ, Սիմ լեռան անտառախիտ լանջին։ Ունէր երկու եկեղեցիներ, Ս. Թովհանէս Մկրտիչ և Ս. Ստեփանոս Նախավայ։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Եղբորուսի վանքին առաջնորդներէն կը յիշուին հետեւեալները.

1. — Թովհանէս Արքեպս. 1460-1477,
2. — Թովսէփ Արքեպս. 1492,
3. — Պարսոս Եպս. 1497,
4. — Թովսէս արքեպիսկոպոս, 1503,
5. — Գրիգոր Եպս. Մեղի, 1634-49?

ՄԵՈՒԿԱԿԱՆ. — Եղբորուսի Ս. Թովհանուս վանքին մշակութային աշխատանքներէն ծանօթ են քանի մը դրիչներ, զորս կը ներկայացնենք ստորեւ ըստ ժամանակագրական կարգի.

Ա. — Ստեփանոս Կրօնաւոր, 1459-1497, որդի Թովհանէսի և Հիւրիքայի,

Լազարիոս Հայրեր ստիպուեցան թողուլ զայն, ու զիս ևս իրենց հետ առած ամենամեծ դժուարութեանց ընդդիմակալելէ և խուժանի յարձակումներէն զիս փրկելէ յետոյ գիշերուան ժամը 3ին հազիւ կրօնացանք ինքզինքնիս փոխադրել Էսկաթ Բինէ Փրանսական մարտանուէր, ուր մնացինք երեք օր և վայելցնինք բարեկացականութիւնը Փրանսական ֆոնտիլ Պր. Կրէյնէի, ինչպէս և Մօսկէնիօր Վալլէ-կոյի և Լազարիոս միաբանութեան վերահսկողին և նոյն միաբանութեան հայրերուն, որոնց բոլորին կը պարտիմ իմ կեանքը և զորս նուիրած եմ ծառայելու ազգիս և Եկեղեցւոյս։

ՆԵՒՈՒՆԵՐ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

13 Հոկտ. 1923, Արեւի
(Վերջ՝ 2)

առաջին Յովնանէս, Կիրակոս և Պետրոս կուսակիցն արեղաներաւ. եղած է արդիւնաշատ աշխատարժը. Օրինակած է.

1. — Աւեսարան, 1459 ին. — Յուցակ Ձեռ. Վասպուրականի, Ե. Լայոյան, էջ 431.

2. — Աւեսարան, 1463 ին, Յովնանէս արեղայի պատուէրով. — Յիշատակարանք Ժե. Դարի, Բ. Մասն, Թիւ 236.

3. — Դանձարան, 1466 ին. — Յիշատ. Դարի, Բ. Մասն, Թիւ 315.

4. — Մեկնութիւն Տումարի՝ Յակոբ Ղրիմեղայ, 1467 ին: Ստացող՝ Դաւիթ արեղայ. — Յիշատ. Դարի, Բ. Մասն, Թիւ 334: Ձեռագիր Երևանի, Թիւ 9222.

5. — Շարսիկոց, 1477 ին: Ստացող՝ Դաւիթ արեղայ. — Յիշատ. Դարի, Բ. Մասն, Թիւ 534.

6. — Աւեսարան, 1490 ին, Խոնւ Ամնատինի պատուէրով. — Յիշատ. Դարի, Գ. Մասն, Թիւ 207: Ձեռ. Երևանի, Թիւ 4766.

7. — Աւեսարան, 1497 ին, Ստացող՝ Աստուածատուր արեղայ. — Յիշատ. Դարի, Գ. Մասն, Թիւ 340: Ձեռ. Նոր Ջուղայի, Թիւ 79.

8. — Աւեսարան. — Յուցակ Ձեռ. Մշոյ, էջ 83, Թիւ 4 (94):

Բ. — Գրիգոր Գրիլ, 1460 ին օրինակած է մէկ Յայտաւուր. — Յիշատ. Դարի, Բ. Թիւ 288: Յուցակ Ձեռ. Մշոյ, էջ 120, Թիւ 29.

Գ. — Յոնանէս Գրիլ, օրինակած է 1488 ին մէկ Ժամագիր, չի վայելում Արարանի եպիսկոպոսին. — Յիշատ. Դարի, Գ., Թիւ 641: Ձեռ. Զմատի (Անտանի), Թիւ 587.

Դ. — Կոստանդ Գրիլ, 1492 ին օրինակած է մէկ Աւեսարան: Ստացող՝ Յովնանէս քահանայ. — Յուցակ Ձեռ. Մշոյ, էջ 46, Թիւ 51.

Ե. — Ստեփանոս Գրիլ, որդի Յովնանէսի, 1503 ին օրինակած է մէկ Աւեսարան: Մաղկոզ և Կազմող՝ Արիստակէս վարդապետ, Ստացող՝ Յովնանէս արեղայ, որդի Յովնանի. — Յուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 619.

Զ. — Ղուկաս արեղայ, 1627 ին օրինակած է մէկ Ժողովածու (= Պատարագամատոյց). — Յիշատ. Ժե. Դարի, Բ. Հատար, Թիւ 375: Ձեռ. Երևանի, Թիւ 3189.

Եղբորատի առաջնորդներէն Մշոցի Գրիգոր եպիսկոպոսի կնանքին և գործունէութեան մասին կ'արժէ արձանագրել հետեւեալ տեղեկութիւնները.

Ան ծնած է Մուշ, ԺԶ. դարու վերջերէ մօտաւորապէս: Որդին էր Թաթուլի և Խանուի, Երիտասարդ տարիքին աւստանացած է և ձեռնադրուած քահանայ, Կինը՝ Ռեհան և երկու որդիները վախճանած են 1627 ին: Հետեւաբար դացած է Բաղէշ, աշակերտած Ղուկիկցի Հայրապետ վարդապետին, որմէ ստացած է վարդապետական գաւազան: Ապա էջմիածին երթալով եպիսկոպոս օծուած է՝ իբր առաջնորդ Եղբորատի վանքին (1634):

Իր առաջնորդութեան շրջանին նորոգած է վանքը և կարգ մը նուէրներով ճոխացուցած: Ատոնց մէջ էր (մասնակի) Աստուածաշունչը, զոր գրել տուած էր իր աշակերտութեան շրջանին (1627) և ծաղկել տուած է 1649 ին (Ձեռ. Երևանի, Թիւ 146):

Գրիգոր եպիսկոպոս վանքին մէջ դպրոց ալ բացած է և ունեցած է աշակերտներ: Միաբանութեան անդամներուն կարգին կը գտնուէին Մարտիրոս վարդապետ, Սուքիաս եպիսկոպոս և Գրիգոր Էջմիածնի.

Ն. ԱՐԲ. ԵՌՎԱԿԱՆ

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԴՍԻԱՆԱՆՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քիչ են անսփռ, որոնք գիտեն թե Հայերը առաջին անգամ եղած են Քրիստոնեությունը իբրեւ պետական կրօն ընդունող, իսկ առեւելքից են անսփռ, որոնք գիտեն թե Հայոց Եկեղեցին Ուղղափառություն տեսակետին նոյն գեանի վրայ կը կենայ Յոյն Եկեղեցիին նեւ, Տրամաթիւն է հաստատել թէ Կիպրացի ժողովուրդին որոշ դատակարգ մը տակաւին չէ ըմբռնած այս իրողութիւնը և նախապաշարուած է Հայոց դէմ: Համակրանքը, զոր կը տածեմ Կիպրոսի նամաքաղաքացի Յոյն ժողովուրդին՝ դիւ կը մղէ լուսարանելու կարգ մը կէտեր պատմականորէն հաստատուած իրողութիւններու շուրջ:

Նախ քան Հայոց Եկեղեցւոյ ուղղափառութիւնը հաստատող իրողութիւններու մասնաշաղկապը, նորից կը տեսնենք ամփոփ կերպով ներկայացնել դաւանաբանական այն կէտերը, որոնցմով ան կը գաղափարէ իր քոյր Եկեղեցիներէն:

Հանրայայտ իրողութիւն է թէ Քրիստոնէական Եկեղեցին բաժնուած է երկու գլխաւոր թեւերու — Արեւելեան և Արեւմտեան: Յոյն, Հայ, Ասորի, Քաղղէական, Ղպտի, Հայկ, Հայկ, Ռուս, Սերպ Ռուս, Պոլսկար և վարցական Եկեղեցիներ կը կազմեն Արեւելեան ընտանիքը, մինչ կաթոլիկ և բողոքական Եկեղեցիները կը հանդիսանան արեւմտեան Արեւմտեան թեւին:

Դաւանական մանր տարբերութիւններ չորս ստորաբաժանումներ կ'առաջացնեն Արեւելեան թեւին մէջ: Ասորական և Քաղղէական Եկեղեցիները կը կոչուին Նեստորական: Ասորի Յակոբեաններ, Ղպտիներ և Հայկերներ Եւաքեան Միաբաններ են: Օրթոդոքս պիտակուած Եկեղեցիներ — Յոյն, Ռուս, Սերպ, Ռուս, Պոլսկար — (ինչպէս նաեւ կաթոլիկներ) կը ճանչցուին որպէս Երկաբաններ: Մինչ Հայոց Եկեղեցին կառուած կը մնայ

Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի Հայրապետէն բանաձեւուած Ուղղափառ վարդապետութեան, Կ'արժէ յիշել թէ այս էր դաւանութիւնը, զոր կ'ընդունէր Քրիստոնէական Մի և Ընդհանրական Եկեղեցին, նախ քան գումարումը Քաղկեդոնի ժողովին:

Հայոց Եկեղեցին ընդունած և անփոփոխ պահած է Տիեզերական առաջին երեք ժողովներու — Նիկիոյ (325), Կ. Պոլսոյ (381) և Եփեսոսի (431) — որոշումները: Յոյներ և կաթոլիկներ չորս այլ ժողովներ գումարում են: Հետագային, կաթոլիկներ այդ թիւը բարձրացուցած են 21-ի: Անկլիքան Եկեղեցին Յոյներու նման հօթ Տիեզերական ժողովներ կ'ընդունի:

Տիեզերական առաջին երեք ժողովները քննարկեցին քրիստոնէական հիմնական հաւատալիքներու հետ առնչուած հարցեր, ինչպիսին են Երրորդութեան գաղափարը, Մարդեղութեան խորհուրդը և հոգեւորութեան փրկութեան հարցը, և առին համապատասխան որոշումներ: Մնացեալ ժողովները չզբաղեցան սակայն Քրիստոնէական կրօնի հաւատալիքներով և սկզբունքներով, այլ քննութեան նիւթ ըրին աթոռներու գերազանցութեան և այլ մանր ու երկրորդական հարցեր, որով զուրկ մնացին Տիեզերական համագումարէ: Եւ առաջին անգամ որոշումները չընդունուեցան բոլոր Եկեղեցիներու կողմէ:

Քրիստոնէական Ս. Եկեղեցւոյ Միութիւնը խախտեցաւ 451-ին, Քաղկեդոնի ժողովին գումարումով: Յոյներ և Լատիններ ընդունեցին քրիստոնէական մաքուր սկզբունքները խաթարող ահաւորութիւններ:

Հայոց Եկեղեցին կ'ընդունի թէ առաւածալին և մարդկային բնութիւնները Քրիստոս առած էր իր վրայ ճանչփոթ միաբնութեամբ: Քաղկեդոնի ժողովը թէեւ հաստատեց միաբնութիւնը Քրիստոսի:

տեսի զոյգ բնութիւններուն, սակայն ընդունելիք թէ այդ բնութիւններէն իւրաքանչիւրը հնթակայ է իր սեփական կամքին և ունի իր առանձնաշարժութիւնը:

Բացի այս կէտէն, չկան ուշադրաւ տարբերութիւններ Հայ և Յոյն Եկեղեցիներուն միջև: Տարբերութիւնները տակի են անշուշտ մեր և Կաթողիկ Եկեղեցիներուն միջև: Արշևիք գէթ անոնցմէ երկուքը: 1) Կաթողիկ Եկեղեցին կ'ընդունի թէ Ս. Զովին կը բղխի Ճի Զօրէ և յՈրդւոյ, մինչ մենք և Յոյներ կ'ընդունինք Ճիդիստիս ի Զօրէ՝ բանաձևը: 2) Կաթողիկներ կը գտնանին թէ մօռէն հոգին կ'ենթարկուի մասնաւոր դատաստանի մը սորշիւու համար իր երթալիք տեղը — որբերութիւն՝ եթէ արդարէն, դժոխք՝ եթէ մահացու մեղք գործած է, իսկ քուսարան՝ եթէ թեթեւ է կշիռը իր գործած մեղքերուն: Հայք և Յոյնք կը մերժեն այս տեսակէտը, նկատելով զայն հակառակ Տիեզերական առաջին երեք ժողովներու որոշմաներուն:

Հետևեալ կէտերուն մէջ Հայ և Յոյն Եկեղեցիներն նոյն դաւանանքը ունին. —

ա) Երկուքն ալ կ'ընդունին Աթանասեան բանաձևը Նիկիական Հանգանակին:

բ) Կ'ընդունին եօթը Խորհուրդները Ս. Եկեղեցւոյ:

գ) Երկուքն ալ կը նշողին Արիօսը, Մակեդոնը, Պոզոս Սամասացին և այլ հերետիկոսներ:

Վերոյիշեալ կէտերը կը ջրին տեսակէտը անոնց՝ որոնք կատարածի տակ կ'առնեն Հայց. Եկեղեցւոյ ուղղափառութիւնը: Մենք հաւատարիմ հետեօրդներն ենք Ս. Կիւրիզ Աղեքսանդրացի Հայրապետի դաւանանքին, զոր ընդունած են ոչ միայն երեք՝ այլ եօթ Տիեզերական ժողովները:

Վերոյիշեալ իրողութիւնները, երկու Եկեղեցիները իբրեւ ժողովուրդ, չեն ազդել իր հետեւող մանր տարբերութիւններէն, ժամասացական և ասանցուցային կալուածներու մէջ յառաջ եկած. —

ա) Մենք կ'երգենք. ՎՊուրբ Աստուած, տուրք և հօր, տուրք և անձան, որ խաչեցաք վասն մեր (կամ այլ փոփոխակ մը, քստ պաշտածի), սործմեա մեղք: Յոյներ կը զեղչեն փոփոխելի մասը և ՎՊուրբ. և

անմահէն հոգ ուղղակի կ'անցնին քոյր-մեա մեղքին:

բ) Հայց. Եկեղեցին Քրիստոսի Սուրբ Մննդեան և Մկրտութեան յիշատակները կը տեսնամբէ միասին Յունուարի 6ին, Անուանակոչութիւնը՝ նոյն ամսոյ 13ին, ի տակար քառասորեայ ընծայումը կամ Տեսանընդառաջը՝ Փետրուարի 14ին, իսկ Ս. Կոյսի Աւետումը՝ Ապրիլի 7ին, մինչդեռ Յոյն Եկեղեցին Ս. Մնննդը կը տօնէ Դեկտ. 25ին, Անուանակոչութիւնը՝ Տոբեմուարի, Տեսանընդառաջը՝ Փետր. 2ին, իսկ Աւետումը՝ Մարտի 25ին: Նոյնն է գրութիւնը Քրիստոնէական այլ Եկեղեցիներուն մէջ եւս:

գ) Հայց. Եկեղեցին Ս. Պատարագի համար կը գործածէ տնիմոր հաց և անապակ դինի, մինչդեռ Յոյներ կը գործածեն խմորեալ հաց և ջրախառն դինի:

դ) Ս. Զատիկի ճրագալոյցի երկուցեան, մեր Եկեղեցին կ'արտօնէ ճաշակումը հակելթի, ձուկի և կաթնեղէններու, մինչ Յոյներ մեղեղններու հետ վերոյիշեալները ճաշակել կը սկսին Զատիկ առաւօտուն:

Յոյն Եկեղեցին կ'ընդունի մեր Եկեղեցւոյ առաքելականութիւնը. ընդունած ըլլալով Թագէտ և Բարթողիմէոս առաքեալներու Հայաստան քարոզած ըլլալու տեսողութիւնը:

Կ'որժէ նաեւ յիշել այն պարագան թէ մինչդեռ Քրիստոնէութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչի և Տրդատ Թագաւորի կողմէ պետական կրօնք հռչակուեցաւ Հայաստանի մէջ 301ին, Մեծն Կոստանդիանոս 12 տարիներ հաքն էր միայն որ Քրիստոնէութիւնը պետականացուց Հռովմէական կալուածութեան մէջ: Յոյներն ու Լատիններն ևս կ'ընդունին Գրիգոր Լուսաւորչի իբրեւ սուրբ և անոր յիշատակը կը կատարեն ամէն տարի Սեպտ. 30ին:

1172-1179 թուականներուն միջև, Հայ և Յոյն Եկեղեցիներու միութիւնը վերականգնուեալ շարժում մը ծաւալեցաւ: Բիւզանդիոյ Մանուէլ կայսրը, Պուրջ Յոյն Սրբաւոյց Միքայէլ Պատրիարքը, ինչպէս նաեւ Սիւրգի անդամ քսան բարձրաստիճան հոգևորականներ նմակ մը զրկեցին Հայոց Կաթողիկոս Նիքիտէ Շնորհալիի, ներկայացնելով առաջարկներ երկու Եկեղեցիներու միութեան: Այդ

նամակին մէջ Յոյն եկեղեցին պաշտօնապէս կը ճանչնար Հայոց եկեղեցոյ ուղղափառութիւնը: Չկայ մեր եկեղեցւոյ ուղղափառութիւնը հաստատող ասկէ աւելի հզօր ապացոյց: Հաւանաբար իրականութիւն դառնար բաղձացուած միութիւնը, եթէ վրայ չհասնէին անժամանակ մահերը Մանուէլ կոյսեր և Շնորհալի Հայրապետի:

Յոյն և Հայ ժողովուրդներու միջև բարեկամութիւնը իր սկիզբը կ'առնէ այն ժոռթ դարերէն, երբ Քրիստոնէութիւնը կը հալածուէր Պարսիկներու, Արաբներու և Թաթարներու կողմէ: Այս բարեկամութիւնը մօրապնդուած է շաղախութեամբ այն արիւնին, զոր թափած են երկու ժողովուրդներն այ, Քրիստոնէութեան ցանց բարձր ու պայծառ պահելու Արեւիքի մէջ: Տասնեակ հազարներով Յայնք և Հայք մարտիրոսացան, պաշտպանելու համար Խաչին կրօնը հեթանոսական խաւարին և մահիկին կարժառութեան դէմ:

Քաղաքական մարզի մէջ ևս զօրացան բարեկամական կապերը երկու ժողովուրդներու միջև, հայազգի քանի մը կայսրերու Բիւզանդիոնի դէմ բարձրացուելով: Այդ շրջանին էր որ կայսրութիւնը ապրեցաւ իր փռութիւնը օրերը և ընդարձակեց իր տիրապետութեան սահմանները, յարգանք պարտադրելով Ս. Խաչին հանգէպ բարբարոս ու հեթանոս ժողովուրդներու մօտ: Լեւոն Ե., Լեւոն Զ. իմաստուն, կոստանդին Գորգիբոնէնէթուս, Յովհաննէս Զմէկիկ, Բարսեղ Բ Պուլկարօթնուսուս և ուրիշներ ծանօթ են յայրգուած անուններ են Բիւզանդական կայսրութեան պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղողին:

1908ի Թրքական Սահմանադրութեան հաստատումէն կարճ ժամանակ մը յետոյ, Պոլսոյ Յոյն Օրթոտոքս Պատրիարքարանը հրահանգեց Օսմանեան կայսրութեան մէջ գտնուող Յունական բոլոր եկեղեցիներու փակումը, առ ի բողոք թրքական պետութեան իրենց կրօնական իրաւունքներուն դէմ կատարած անօրինականութիւններուն: Բողոքը տեւեց 15 օր: Այդ շրջանին Յունաց բոլոր պատկաններն ու յուղարկատարութիւնները կատարուեցան մեր եկեղեցիներուն մէջ: Այդպէս ըրինք, ընդառաջելով Յունաց Պատրիարքի խնդրանքին:

Հոս գոհունակութեամբ պէտք է նշել թէ Մանուէլ կոյսեր և Միքայէլ Պատրիարքի օրով ծայր տուած բարեկամական ոգին շարունակուեցաւ յետագայ դարերուն ևս, ժամանաւորաբար Յունաստանի և Միւրիոյ մէջ, աւ յունական եկեղեցիներու ղռները միշտ ալ բաց եղած են, արտօնելով որ Հայեր իրենց ուրոյն ծէսով Պատարագ մատուցանեն հոն, այն քաղաքներուն մէջ անշուշտ ուր գոյութիւն չունին հայկական եկեղեցի, կիպրոս հայ ներկայ հոգևորականներէն Տ. Խորէն Քինյ: Դուրիկանն քանիցս պատարագած է արտասահմանի յունական եկեղեցիներուն մէջ: Հայեր շատ անգամ իրենց մկրտութիւնն ու պտակը կատարած են անդկան յոյն եկեղեցիներու մէջ: Յուսէ ևս կայն հաստատել թէ ներկայ գոյութեամբ կիպրոսի մէջ քիչ մը տարբեր է ու առօրինակ: Մինչ կարգ մը դիւղերու մէջ բաց են յունական եկեղեցիներու ղռները մեր ծիսակատարութիւններուն համար, փակ են անոնք ուրիշ դիւղերու մէջ:

Այս ախտը երեսօթին դիմաց, չենք կրնար մինք՝ հայեր վիրաւորուած չզգալ մեր արժանապատուութիւնը, մանաւանդ երբ խնդրոյ առարկայ կ'ըլլայ մեր եկեղեցւոյ ուղղափառութիւնը: Ժամանակն է որ կղզիին Յունական հոգևոր իշխանութիւնը, առաջնորդուած քրիստոնէական լայնախոս և եղբայրական ոգիով, ձեռք առնէ դրական միջոցներ, զարմանալու համար ստեղծուած անբաժնի վիճակը:

Մեզի կը մնայ մաղթել և աղօթել որ Յոյն և Հայ եկեղեցիներու հոգևոր բարձրագոյն իշխանաւորները ուշ կամ կանախ իրար մօտ գան, վերստին ձեռք առնելու համար Մանուէլի, Միքայէլի և Նիքիտի ձեռնած թելը, անով մարտնչելու համար եղբայրական կապը Քրիստոնէական եկեղեցւոյ հնագոյն երկու սրէներուն միջև:

ՆՇԱՆ ԱՐԱԴԵԱՆ

Նիկոսիա, Կիպրոս

Աճցիքեհեկ քրդմ. Գ. Ժ.



ՆՈՐԻՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Այժմ հարց է առաջանում. ե՞րբ կա-
րող էր կազմուած լինել հայկական այս
խմբագրութիւնը: Եթէ, ինչպէս մասնա-
գէտներն են⁶² ապացուցում, Ագոթան-
գեղոսի Պատմութեան մեզ հասած խմբա-
գրութիւնը Մեարոյ Մաշտոցի կամ նրա
աշակերտներից մէկի ձեռքով է կատար-
ուած. Ե. զարի առաջին կէտին, ուր
այս խմբագրութիւնը աւելի ուշ է կազ-
մաւորուել՝ Ե. զարի երկրորդ կէտին,
485 թ. յետոյ, առում ենք այդպէս՝ նկատի
ռենհանրով ասորերէն բնագրի մէջ պա-
պանուած վերջին տեղեկութիւնները:
Նախ ծանօթանանք այդ վկայութիւննե-
րին. ահա այդ հատուածը. «297. Ձենոն
կայսեր ժամանակ մի բարեպաշտ արեղայ
(abila — արիւն) կար Ամրա անունով: Մի
տեսիլքով նրան առեւ, և որ զնա Դա-
րանալիոս (Դարանաղի)⁶³, այն լերան
վրայ, որն այնտեղ է գտնուում, 298. Այն-
տեղ գտիր այն քաղաքը, ուր լոյսի ճա-
ռագայթներ կան, հանիր այնտեղից հայ
Դրիգորի մարմինը, այն վերցրու ու առւր
Եկէլիս (Եկեղեցու) գաւառը⁶⁴, նրան թա-

գիր այնտեղ է վրան էլ եկեղեցի կառու-
ցիր: 299. Դրանից յետոյ երբ նա գնաց
այնտեղ ու գտաւ (մարմինը)», այն մեծ
պատուով տեղափոխեց Թորգոսն⁶⁵, և դրա
համար մարդը Հայաստանը շատ ուրա-
խացաւ, և նրան թաղեցին իր որդիների
կողքին, որոնք այնտեղ էին թաղուած,
և նրանց վրայ մի հոյակապ եկեղեցի կա-
ռուցեցին⁶⁶, Մեր օրակարգային Աղբիւրները
Հայ եկեղեցու մասին առաւելու տեղե-
կեան մէջ մանրամասն կանգ ենք առել
այդ հարցերի վրայ և՛ ցոյց տալով թէ
ինչպէս Ձենոն կայսեր ժամանակ (477-
491 թթ.) յայտնաբերուած Գրիգոր Լու-
սաւորչի նշխարների գիւղը և այդ առի-
թով կազմակերպուած ասանխմբութիւն-
ները, հանգիստութիւնները, նրա նշխար-
ների տեղափոխումը ու դրանց վրայ հո-
յակապ եկեղեցու կառուցումը և նրան
արպէս Թաղէոս Առաքելի զործի շարու-
նակողի մեծարումը ձգտում էր մարա-
պիդիւ Հայ եկեղեցու աճող հեղինակու-
թիւնը և որպէս առաքելական եկեղեցի,
նրա ունեցած նշանակութիւնը բարձրաց-
նել Արարի ինքնուրուշ և երկրից դուրս:

Այսպէս, ասորերէն այս համառոտ
բնագրի յայտնաբերումը ոչ միայն նոր
լոյս է սփռում Ագոթանգեղոսի Պատմու-
թեան մեզ հասած հայերէն մի երկրորդ
խմբագրութեան մասին, այլ նաեւ փորա-
տում է մասնագէտների կասկածը և հաս-

⁶² Տես Ա. Տէր-Ղեւոնդեան, «Ագոթանգեղոսի
Արարական Նոր Խմբագրութիւնը», Երևան,
1968, էջ 11:

⁶³ «Բարձր Հայքի 1-ին գաւառը, 3400 քա-
ռակաւոր կրօնէստ տարածութեամբ այն առի-
կեանորոն էր Ալիւն՝ Եփրատ գետի մէջ ափին,
և նրան կցուած կամայն՝ նոյն գետի ձախ ա-
փին, որտեղ գտնուում էին Արշակունի թագա-
ւորների տոհմական դամբարանները: Արին
նախաքրիստոնէական Հայաստանի կրօնական
կենտրոնն էր: այնտեղ էր գտնուում Արամազդի
մեհեանը: Այս գաւառում էին գտնուում Թոր-
գոս, Մանայ այլ վայրերը և Սեպուհ լեռը:»,
Տես Ա. Տերման, Հայաստանը, էջ 49:

Արշակունիների տոհմական դամբարանը
հանրապետական Դարանաղիում Գրիգոր Լուսա-
ւորչի նշխարների տեղափոխութիւնը պատա-
հական չէր, որովհետեւ մեզ հասած ասորերէն
խմբագրութեան մէջ Գրիգոր Լուսաւորչի «այր»
Անակը ներկայացուած է որպէս հայոց Խոս-
րով թագաւորի եղբայրը, այսինքն քրիստո-
նէութիւն ընդունած Տրդատ Գ.ի հորեղբայրը:
Տես Van Esbroeck, La résumé, p. 294.

⁶⁴ «Բարձր Հայքի 4-րդ գաւառը, այժմեան
Երզնկայի շրջանը՝ յունարէն՝ Ἀρλίσση, լատ.
Acliseneae: Այս գաւառը կոչու. էլ է նաև Անա-
տական (յունարէն՝ Ἀνατολὴς Χώρας), երկա կամ
երեզ (այժմ՝ երզնկա) առանձն գտնուող Անտի-
հիւրի հռչակաւոր տաճարի առանձնով: Անտի-
հիւրիանկների Ալիլսեմն ընդգրկուած էր նաև
Դարանաղի գաւառը: Այս գաւառումն էին,
բացի Երիզայից, Շուվնա (Տրւշե, Ճիւլի) քա-
ղաքը և Թիլի աւանը: Եկեղեցու գաւառի տա-
րածութիւնն է շուրջ 2250 քառակուսի կիլո-
մետր: Տես Ա. Տերման, Հայաստանը, էջ 51:

⁶⁵ Այժմ էլ նոյն անունով գիւղը՝ նայն
տեղում, էջ 53:

⁶⁶ M. van Esbroeck, Le résumé, pp. 356-357.

առաւում, որ Գրիգոր Լուսաւորիչը փաստորէն եղել է Թադէոս առաքեալի գործի շարունակողն ու ամուր հիմքերի վրայ դնողը:

Հետաքրքրական է, որ Ասորի, Յակոբկեան Եկեղեցու նշանաւոր պատրիարքներից՝ Միքայէլ Ասորի (1168-1199 թթ.) իր ժամանակագրութեան մէջ վկայում է. որ քորոզելու համար Հայաստան է եկել Աղգա առաքեալի աշակերտ՝ Ագգան. ահա թէ ինչ է գրել նա. «Ագգան քորոզեց Բէյթ Մոփանէյում (Մոփքում), Բէյթ Աղգանէյում (Արղնում)»⁶¹ և Արաաքին (Ուրարիտա) Հայաստանում. հետագայում նրա աղգերը ջախջախեցին և նա վախճանուեց»⁶²:

Նոյն պատժիչը, որը իր ժամանակի շառաւիղային եկեղեցական գործիչներից ու զարգացած անձնաւորութիւններից էր և եկեղեցական միութիւնը վերահաստատելու նպատակով, ինչպէս յետոյ կը տեսնենք, բանակցութիւններ մէջ է եղել Հայոց կաթողիկոսի ու Բիւզանդական կայսրի հետ, վկայում է նաև, որ Հայաստանում քորոզել է Բարթողիմէոս առաքեալը. ահա նրա վկայութիւնը. «Բարթողիմէոսը Ղանդոր»⁶³ գիւղից էր: Նա երեք տարուայ ընթացքում քորոզեց Հայաստանում, ապա Հերոստու»⁶⁴ Թա-

գաւորը նրան խաչել տուեց. նրան Թադեոսն այն եկեղեցում, որը նա կառուցել էր այս վայրում»⁶⁵:

Մինչ Բարթողիմէոս առաքեալին անցնել ժանթանոնք նաև ասորական վաղադոյն շրջանին պատկանող աղբիւրներից «Վարդապետութիւն Առաքելոցն աշնունով մեզ հասած մի աշխատութեան»⁶⁶, Այն զեռ շատ վաղ դարերից որպէս «առաքելական կանոններ» մի հաւաքածոյ, Գրիգորանէական Եկեղեցիների մէջ բարձր հեղինակութիւն է ունեցել և որպէս այդպիսին մտել է կանոն գրքի մէջ: Ահա Գրիգորանէական Եկեղեցու համար նման արժէք ներկայացնող այդ երկում ևս վկայութիւն կայ այն մասին, որ Աղգա կամ Թադէոս առաքեալը և նրա աշակերտ՝ Ագգան ոչ միայն Սեւեհիայում, Հայաստանում, այլ նաև արևելեան բազում երկրներում քորոզել և դործել են. ահա այդ հաստատելի թարգմանութիւնը. «Եւգեսիան ու ամբողջ շրջակայքը, որոնք նրա բաւար (չորս) կողմերում են, և Մոփքը, և Ղարորը (Արվաստան՝ Մծբինը իր շրջակայքով), և Միջագետքի սահմանների վրայ գտնուող բաւար երկրները քանանայական ձեռնադրութեան (կախկոպսութեան) իրաւունքը ստացան Աղգա առաքեալից, որը եօթանասուներկու առաքեալներից մէկն էր»⁶⁷: Այստեղ Ագգան ներկայացուած է որպէս ամբողջ Արևելքի առաքեալը: Իսկ շարունակութեան մէջ հետեւալն ենք կարդում. «Պարսկաստանը, ամբողջ Աթուրիան (Ասորիստանը), Հայաստանը, Մեդիան և Բարելոնի չորս կողմը երկրները՝ Խուստանը (Beit Huza-ye), Գիլանը մինչև հնդկիկների սահմանները, և նոյնիսկ Գոգ և Մագոգ երկիրն ու նրա շրջակայքը, (քանանայական ձեռնադրութեան իրաւունքը՝ կախկոպսութեան) Աղգա առաքեալի աշակերտ՝ խոյրաբար Ագգայից են ստացել»⁶⁸:

⁶¹ Մէլանեաց բղիշխութեան առաջին դաւառը, 3575 քառ. կլմ. տարածութեամբ: Անտիկ աղբիւրներում յայտնի է իբրև (բառը անբնութիւն) և մէկ անգամ յիշատակում է Եղիշէի մօտ՝ Արգնաղիւն ձեռք: Այս դաւառը ոչ ոքում կոչուել է Արգիթ՝ համանուն Արգան կենտրոնով, այժմ Թարգան կամ Զուլ վայր: Մի այլ տեղ (Ալշիսարացոյց, էջ 37), Աղմն դաւառը կոչուած է Աղմնիկ հայոց, որ է Արմն: Այս դաւառը հզուել է հայաւորից գէպի Միշն. աշխարհը տանող ճանապարհը Զորապահակով (կամ Տաւրոյ-բերան, այժմ Բիթլիսի լեռնանցք): Աղմն դաւառը Աղմնից րոլիսիւրեան կենտրոն էր: Տես Ս. Տրեման, Հայաստ., էջ 34:

⁶² Michel le Syrien, Chronique, t. I, Paris, 1963,

⁶³ Հրէաստանի գիւղերից: [p. 149.

⁶⁴ Ասորական քնադրում այս անունը կարծես սկզբում եղել է շերտուէ, հետագայում ինչ-որ ձեւք աւելացրել է նաև ւո: տառը և այն դարձրել շերտուէս կամ շերտովգէտ, ենթադրելով որ աշնունայն այն շերտովգէտ աշնունն է: Տես Michel le Syrien, Chronique, t. IV, p. 92: Ասորական այլ քնադրութեամբ այս անունը

գրւում է նաև հետեւեալ ձեւերով. «Rustni Hə rostni». տես Budge, The Book of the Bees, p. 106.՝

⁶⁵ Նոյն տեղում:

⁶⁶ W. Cureton, Ancient Syriac Documents, The Doctrine of Apostles, p. 34.

⁶⁷ Նոյն տեղում:

⁶⁸ Նոյն տեղում:

Հետաքրքրական է, որ «Վարդապետություն» Առաքելությունը հայկական հին թարգմանությունների, որը վերնագրում է «Սահմանք և կանոնք զոր եղին աշակերտքն Գրիստոսի եկեղեցւոյ արքայ յեղիքանայոյ Տեսուն», համապատասխան հաստատում է հետեւեալն է գրուած. «Թ. ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Ուրհայ և ամենայն քաղաքն որ շուրջ զնոյմաւ, Մծփին և Արար և սահմանակիցք Միջագետաց, Հայք և ամենայն հիւսիս և հարաւ՝ ի Թագէէ առաքելոյ, որ է մի յերկոտասան առաքելոցն շինեաց անդ եկեղեցի և աշակերտեաց զամենայն կողմանն զայնոսիկ, և կարգեաց ի նոսա քահանայս և պաշտանեայս»:

«Թ. ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Գարաք և Գարթնք և ամենայն Ասորեստան և Խուստան, և ամենայն որ շուրջ զԲաբելոնիս, և Գեղք մինչև ցաւմանս Գդաք, մինչև ցրտք և Մագդոք, և այլ աշխարհք որ շուրջ զկողմաքն զայնոսիկ» յԱղէ կերպասագործէ յաշակերտէ Թագէի առաքելոյ, որ բշկեաց զԱրքար Թագաւոր Ուրհայի»:

Երբ ի մի ենք բերում «Վարդապետություն» Առաքելություն այս վկայութիւնները տեսնում ենք, որ ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ արեւելեան բոլոր այս երկրներում քարոզել են, եկեղեցիներ են հիմնել ու եպիսկոպոսական աթոռներ են հաստատել Ադդա կամ Թագէտ առաքելուն ու նրա աշակերտ՝ Ագգան:

Այսպէս ասորական աղբիւրները հաստատում են հայկական աւանդութիւնը, միայն այն տարբերութեամբ, որ Երեմիայի, հասկանալի պատճառներով, առաջնայինի պատիւը իրենց են սեփականացնում: Եղեմիան այդ պատճառն է ձգտել Դ. դարի երկրորդ կէտին, երբ ամբողջ քրիստոնեայ Արեւելքում բարձր հեղինակութիւն էր վայելում: Սակայն այս իրողութիւնը ոչնչով չի արժէքավորում մեզ հասած հայկական աւանդութեան ու մեր վաղ շրջանի պատմիչների՝ Ագաթանգե-

ղոսի, Փաւստոսի ու Մովսէս Խորենացու վկայութիւնները Թագէտ առաքելայի Հայաստանում քարոզելու ու նահատակելու մասին: Այնպէս որ ոչ մի հիմք ունի Հայր Կոզեանի այն յայտարարութիւնը, որ Թագէտ առաքելի Հայաստանում լիւնելու մասին ոչ սուր հեղինակները և ոչ էլ ընդհանրապէս հեղինակները վկայութիւններ են թողել⁷⁶, Գրիի նման մի հարուածով, Հայր Կոզեանը նայն ճակատագրին է արժանացնում նաև Բարթողիմէոս առաքելին. նա գրում է. «Հայ նախնական աւանդութիւն մը ի զուր կը փնտռենք հայ հնագոյն պատմագիրներում: Անոնք ոչինչ գիտեն Բարթողիմէոս առաքելի հայկական առաքելութեան մասին: Ագաթանգեղոս, Բիւզանդ, Փարպեցի, Եղիշէ — այնքան նախանձախնդիր հայ փառքերու ու անծանօթ են փառքին Բարթողիմէոսի քարոզչական գործունէութեան նայոց մէջ»⁷⁷:

Մեզ քաջածանօթ պատճառներով ու գիտակցութեամբ Հայր Կոզեանը անտեսում է մեզ հասած «Վկայաբանութիւն Սրբոյն Բարթողիմէոսի Առաքելոյ» աշխատութիւնը⁷⁸, և չի յիշատակում նաև իրեն համար «ոչ էին պատմիչ» Մովսէս Խորենացին, որի հայ փառքի նկատմամբ ունեցած նախանձախնդրութիւնը դժուար թէ մեր պատմաբանը կարողանար կատարել տակ առնել: Մովսէս Խորենացին հաստատել և գրել է. «Բայց վիճակեցաւ հայոց և Բարթողիմէոս առաքել, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեւանոս քաղաքի»⁷⁹, Այսինքն Բարթողիմէոսը եղել է Հայաստանում և այնտեղ էլ նահատակուել է: Հայր Կոզեանը ոչ միայն կարեւորութիւն չի տալիս Մովսէս Խորենացու այս վկայութեան, այլև անտեսում է մեզ հասած առաքելի վկայաբանութիւնը, ի վերջոյ Բիւզանդի, Փարպեցու, Եղիշէի լուսութիւնը հիմք չէ անտեսելու օրինակ հայկական աղբիւրներից Բարթողիմէոս առաքելի վարքը. նրանք լուել են գուցե

76 Ս. Կոզեան, Հայոց եկեղեցիին, էջ 30:

77 Նայն տողում, էջ 22:

78 Սեպեմբեր Հայկականք, ԺԺ, 1854, էջ 17:

79 Մովսէսի Թորեանցու Գաղատիկոս Հայոց, Գիրք Բ. գլ. 17, էջ 158:

75 Կանոնագիրք Հայոց, աշխատք՝ Վ. Յա. Կորեանի, հատար Ա., Երևան, 1964, էջ 62:

նկատի ունենալով այն փաստը, որ տրդէն գրուած կայ այդ մասին, և մեր պատմիչները շատ անգամ խուսափել են գրել մի նիւթի շուրջ երբ իմացել են, որ այդ մասին արդէն ուրիշը գրի է առել, առեալով դէպքում էլ նոյնը կարող էր լինել: Ի վերջոյ երկու աղբիւրների վկայութիւնը միմեք բաւական չէ Հայր կողմանին համոզելու, որ հայկական մի աւանդութիւն, ինչպէս միւս աւանդութիւնները՝ առաքեալների մասին, դոյուութիւն ունի: Եւ ինչպէս ասանք, բացի հայկականից, այն հաստատում է առօրի եկեղեցական խոշոր գործիչներից ապամիւնիւրից՝ Միքայէլ Առօրին, որը ինչպէս հայկական վկայաբանութիւնը եւ ասում, որ նա նախապատկուել խաչուել է Հայաստանում և թաղուել իր կառուցած եկեղեցում⁸⁰: Եւ եթէ այլ առաքեալներից շատերի նախապատկուել կամ մահուան վայրերը յայտնի են, ապա քրիստոնէական գրականութեան մէջ էլ Բարթողիմէոս առաքեալի գերեզմանը մասնանշուում է Հայաստանում: Ճիշտ է Եւսեբիոս կեսարացիի տեղեկութիւններ է տալիս նրա Հնդկաստան գնալու, բայց ոչինչ չի ասում նրա այնտեղ թաղուած լինելու մասին, որովհետեւ երբ նրանից շատ տարիներ յետոյ մի այլ քրիստոնէայի քառադիւ գնում է այդ երկիրը, այնտեղ գտնում է Բարթողիմէոս առաքեալի տարած Մաթթէոսի Աւետարանի երբայերէն մի օրինակը միայն, և եթէ նրա գերեզմանը եւ այնտեղ լինէր, անպայման կը յիշատակէր: Եւսեբիոսի վերոյիշեալ հաստատութիւնը. «Ձիւ էին գեա եւ ի մամանակին յայնմիկ բազում աւետարանիչք բանին Աստուծոյ, որք ըստ առաւանձային նախանձու գառաքելոց բերելով յանձնի գնմանութիւն, յանուսն է ի չիսուած բանին Աստուծոյ փութային, յորոց էր և Պանտենոս զոր և մինչև ի նդիկս հասելու և անդ գտեալ գաւառաբան Մաթթէի առ հաւատացեալս ամանս, զոր մինչև երթեալ Պանտենոս անգր՝ քարոզելով նոցա յառաջագոյն Բարթողիմէոսի՝ միայ

նիկու տասանիցն, և երբայական գրով առ նոսա թողեալ, որ և ցայն վայր անկորուստ էր պահեալ»⁸¹:

Եւ եթէ Եւսեբիոսը ոչինչ չի ասում առաքեալի Հայաստանում լինելու մասին, դա հակառակը չի նշանակում, որովհետեւ պատմիչը կարող էր այդ չիմանալ և բացի այդ, նա գրել է հիմնականում Պանտենոսի մասին, և Բարթողիմէոսին յիշատակում է ի միջի այլոց: Յամենայն դէպս նա այնտեղ քարոզել և երբայերէն Աւետարանը թողել ու վերադարձել է: Թէ՛ մեր վերադարձել, այդ մենք իմանում ենք զմեր աղբիւրներում պահուած վկայութիւնից, և փաստօրէն վերադարձից յետոյ նրա ծաւալած գործունէութեան ու ամբողջ կեանքի մասին, մինչև իր մահը տեղեկութիւններ է տալիս մեզ յայտնի վկայաբանութիւնը, և այս իրադրութիւնը ուրախացնելու, և այդ վկայաբանութեան եղակի արժէքը բարձրացնելու փոխարէն, Հայր կողմանը իր ուժով գրել ինչպէս հայկական այդ փաստաթուղթը արժէքալիկ տուեալներ գտնելու համար: Միթէ՞ աղբիւրի հայկական լինելը քաջասական երեւոյթ կարելի է համարել և այդ հիմք ընդունել ու մերժել, երբ մանաւանդ առաքեալի տեղինը գրեթե շարունակ հայ հաւատացեալների համար ուխտավայր ու պաշտամունքի աւարկայ չէ դարձել: Կարող են ինչ որ մանրամասնութիւնները ոչ ճիշտ կամ չափազանցուած լինել, բայց դա չի նշանակում ամբողջ աւանդութիւնը մի կողմ անել, երբ մանաւանդ պատմական այդ վկայութիւնները ներքոյ այլ աղբիւրներ գոյութիւն չունեն: Հայկական այդ վկայութեան համաձայն, Հնդկաստանից դաւալոց յետոյ առաքեալը լինում է Բարաւսում, Գերմանիկում և ապա զննացեալ անտի օրբոյն հասն յերկիրն Պարթևոց, և Մարաշ, և Եղիմացոց, և քարոզէր նոցա զբանն կենաց»⁸²: Այս երկրներում լինելուց յետոյ զանցեալ գնաց ի Գողթն գաւառ Հայոց, և փութացաւ հասանել ի վիճակ Թադէոսի ըստ հրամանի Հոգւոյն

80 Michel le Syrien, Chronique, t. I, p. 148. Վկայաբանութիւն Սրբոյն Բարդուղիմէոսի, էջ 30:

81 Եւսեբիոսի կեսարացոյ եկեղեցական Պատմութիւն, Գլուխ Եւ. գլ. Գ. էջ 364:

82 Վկայաբանութիւն, էջ 22:

Սրբոյ՝ Այստեղ էլ երկու առաքեալները՝ Թադէոսը և Բարթողիմէոսը հանազիպում են իրար: Այս հանդիպումը եւ պատմական երեսոյթ է և կարծում ենք, որ պատմականութեան արդիւնք է: Մեր աւստւմասիրութեան նախորդ էջերում նշել ենք, որ երկու հոգի կայսրութիւններէ միջև կայացուած փոխադարձ համաձայնութեամբ երկու կողմի առևտրական քարաւանները արեւելեան երկրորդներում ճանապարհորդելիս՝ իրաւունք ունէին Հայաստանում իրար հանդիպելու և այնտեղ էլ իրենց ապրանքները վաճառելու և կամ առևտրական գործարքները կնքելու: Արեւելեան այս երկրներում քարոզելիս աւ ճանապարհորդելիս Բարթողիմէոս առաքելն էլ գալիս է Հայաստան և երբ իմանում է, որ այնտեղ է նաև Թադէոս առաքելը, հանդիպում են: Իսկապէս էլ ընկնել սուրբ առաքելին իբրևր Արտաշու, հանդիպեցաւ այլ ամեն յերկրաստանիցն Յուդա Սահորեան, և կանգնեցին ի տեղուջն ուր պատահեցաւ միմեանց զնշան տէրունական խաչին, և հրաժարեցին ի միմեանց մեծաւ ուրախութեամբ: Այդտեղից էլ Բարթողիմէոսը անցնում է դէպի Պարսկաստանի գահմանը եղող հայկական Հեր և Զարեանը՝ գաւառները՝, եւ զնաւ Հայոց Ուրբիանոս քաղաքը և այնտեղ էլ նստասկանւմ է՝:

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդել)

83 Վկայաբանութիւն, էջ 24:

84 Առարկան բաղում ազրիւրներում Վեդալի վարդապետութիւնը, Վեդալի Ե. Կեղեցու Պատմութիւնը և այլ վարդերում, առաջնութիւններ կան այն մասին, որ Բիւրատոսի առաքելները, նրանց աշակերտները սկզբնական շրջանում ճանապարհորդում էին առևտրական քարաւանների հետ միասին: Տես սրբնակ, Լ. Միլինեան, Առարկան Ալլըրիւրներ,

85 Վկայաբանութիւն, էջ 25: [էջ 47:

86 Առաջին Վարդապետայքի Ծրդ Գաւառը՝ (այժմ իոյ): Իսկ միւսը՝ Վարդապետայքի Ծրդ Գաւառը (այժմեան Զեյթունայք գիւղի շրջափակում): Տես Ս. Յրման, Հայաստանը,

87 Վկայաբանութիւն, էջ 25: [էջ 51, 63:

88 Նոյն տեղում, էջ 26:

ԳՐԱԴՈՍԱԿԱՆ

Պաշտօնաթերթիս էջերուն մէջ, ներկայ համարէն սկսեալ, արձագանգ պիտի գտնեն խմբագրութեանս եւ Կիւլպէնկեան Մատենադարանին նուիրուած այն հատորները, որոնց հեղինակները Հայ Գրականութեան սպասը ընելու յաւակութեամբ է որ գրիչ են բռնած: Զորք են մեր նպատակները, քաջալեր հանդիսանալ նորելուկ մեր գրողներէն անոնց՝ որոնք գէթ խոստումը ունին որոշ բարձունքի մը հասնելու, եւ սրիւ ընթերցանութեան ախորժակը արտասահմանի մեր երիտասարդութեան, որուն մօտ կրօնական զգացումի ու հաւատքի գաղղութեան թոյլն ի վեր կը ծաւալի անտարբերութիւն մը հանդէպ հայ գրքին:

ԽՄԲ.

“ՊԱՆԴՌԻՏԻ ՍՈՐՍՈՔՆԵՐ”

“ՎՇՏԱՄԱՏԵԱՆ”

Հեղինակ՝ ԿԱՐՈ ՄԵԽԹԱՐ

Նոր անուն մը չէ կարօ Միխիթար (բուն անունով Մարտիրոս Ս. Թաճեան)՝ օգիւլաքանայ գրականութեան մէջ: 1946ին հրատարակած էր «Զրկուածները» խորագրուած հատոր մը (զգալիաբար մեղի կարելի չեղաւ զայն ունենալ ձեռքի տակ) և անկէ առաջ ու ետք բերած է իր հոմեոսոս տշխատակցութիւնը արտաստմանեան մեր մամուլին: Այժմ, իր կեանքի մայրամուտին, ջանքն ու փոյթը ունեցած է մէկտեղելու երկար իր տարիներու ընթացքին թերթերու մէջ ցրուած արձակ և չափածոյ իր գրութիւնները և լոյս ընծայելու զանոնք երկու հատորներով:

Յիշատակայ գրողին երկերը լոյս տեսած են Պէյրութ, առաջինը 1979ին և երկրորդը 1981ին:

Առաջինը, 182 էջերու մէջ, կը պահարանիկէ ստանաւորները ալեւոր հեղինակին (կը զգուշանանք լեզբուած բառին գործածութիւնէն, որ աւելի թէքնիկ, կատարելագործուած արուեստի մը հեռանկարը կը բանաջ ընթերցողի մտահորիզոնին): Ընդհանրապէս առանց յանգի,

չափի ու կռուոթի, անհաւատար տողերով տուններէ կազմուած 1-2 էջ (երբեմն երկ-սիւն) գրաւող կոտորներ են անոնք, տաք իր պատանուութեան օրերէն մինչև ցուրտ ալիւնայթը երկարող ձիգ շրջանին գրուած:

Հեղինակը, իր իսկ վկայութեամբ, մէկն է ճամկութիւն չունեցող մարդե-րու անբունդէն: Խորքերդի Զարսանճագ գիւղէն, սրտամմիկ աղգերու մէջ առ կու տայ սգիստկանը իր կիսակնի դժբախտ ա-րեւածագին: Մորմոքի ու դառնութեան զգացումը տաղած է իր բարի սիրտը, ու տխուր պատահարներու յաճախանքէն ձեռ-բողատուիչ չկրցող իր հոգիի պրիսմակէն անցած իր աղղերը խոր կնիքը կը կրեն հայութեան մեծ վիշտին:

Տառապանքը տակաւն չի քսեր ուժէն զգայուն անհատ օժտելու բանաստեղծա-կան ձիրքով: Վիշաք զուրկ է մարդերէն մէջ մէկ Պետրոս Դուրիան մը կամ Միա-մանթո մը կերակուել կարողութիւնէն, երբ չէ զուգուորուած նպատակով տաղարդին:

Կը ցուսինք ըսելու որ կարծիք Միսիթար մէկն է բազմաթիւ աչն գրիչ շարժողնե-րէն, որոնք սրտառուչ միամտութեամբ մը բանաստեղծութիւնը զպարապ վախտի խաղալիք: Կը դաւանին: Անչին: Ան չէ կրցած գործածել զարդը, չպարը, պո-ռուսանքը, զոր ա'յնքան շուայլօրէն (ու երբեմն ճարտարօրէն) իրենց աղղերուն կը հազցնեն քերթողներ, պարտկելու հա-մար տոնոց աղքատութիւնը: Ինչպէ՞ս չայցուել աշատեղ պարտկէն մեռններու ներսած օսկերտութիւն հակադրուած ար-տաքին զորդարանքին, Անտարաններու էջերէն միզի պատմուած:

Առաջին Աշխարհամարտը կանխող և մոտաւանդ յաջորդող տարիներուն, հայ-աշխարհի ինչպէս նաեւ ամար արիւրու վրայ ծաւալեցող լալիկան գրականու-թիւնն վերագրիով ծանօթ գրական սեռ մը, որուն հեղինակները օտարէն գութ մօլարուու անաղին և ձգտումովը ճամբայ ելան: Կան ալ որ ժպրնցան աղգին մեծ վիշտը զգաւագործելու իբրեւ պատուան-դան, նկրտելու համար գրականութեան օրբադան բարձունքին: Ու ասկուին ու-րիշներ, որոնք ջանացին իրենց վիշտէ-րէն գրադէտի համբաւ մը հիւսել իրենց անուանին շուրջ: Ծանր պիտի ըլլար ան-

շուշտ յիշեալ երեք դասակարգերու մեղ-քերովը ճնշել օրերու ու վշտի բեռան տակ ուրդէն կեանք ուսերը զղանդուխտի Մորմոքներու վշտահալած հեղինակին:

Յեղն է հոս յիշել անունը մեր ցաւի մեծ երգիչ Աւետիս Ահարոնեանի, ինչպէս նաեւ Յ. Օլապանի, որոնք կոթողական գործերու մէջ արձանացուցին մեր մեծ վիշտը ու զայն ժառանգ թողուցին մեզի, ու անունները Զարիֆեանի և, որոշ չա-փով, Ռ. Որբերեանի, որոնք զոռածելով չկրցան իրենց վիշտը — մի՛ն՝ անձնակա-ն, միւսը՝ համայնական — երգել, հանգի-նելով զայն մոգութեամբը արտեստին:

Կը թնթանայ նմանապէս մեր ճեղա-դրանքը Կ. Մխիթարի հասցէին, երբ կը խորհինք անփոխարինելի այն հրճուան-քին, զոր կ'ունենայ մէկն հեղինակ, տա-րիներու իր քերքին հատորի մը կողքէն ներս մէկտեղումին ի տես, առանց նկատի առնելու անոնց տեսակարար կշիռը: Ի վերջոյ, նուազ չէ գուրգուրանքը, զոր մենք կը տածենք տխրած ու հաշմանդամ մեր զաւակներուն նկատմամբ: Ու ար-ուեստի գործ մը — այս անմանութիւնը կը տարբերի համաձայն մեր ըմբռնութիւնը — արուեստագէտին հոգիէն փրթած մաս-նիկ մըն է մո՛էն բանէ առաջ:

Այս ախուր պատկերին դիմաց լոյսի ճառագայթ մը կը բանայ սակալի Վշտա-մատեանը, ուր 231 էջերու վրայ սեւեռ-ման ինկած են տարահալած հայուն առօր-եան կազմող վիճակներ: Հոս է որ երեւան կու գայ ճշմարտութիւն մը: Իմաստու-թիւնը՝ մեր միտքն ու սիրտը այցելող խօսերն ու զգայնութիւնները տարադնու-թիւնն յարմարադոյն հանդերձանքով: Ու-րիշ խօսքով՝ գիտեալ թէ գրական մի-տեղով պէտք է արտայայտել զանոնք:

Ոչինչ չհանելք ունի սփիւռքահայ գրականութիւնը զՊետրոսի Մորմոք-ներէն: Նայը կարիք չէ ըսել, բարե-բախտարար, Վշտամատեանի պարագա-յին: Կը կարծենք թէ այսքանն ալ բա-հական է, որպէսզի հեղինակը միսիթար-ուած զգայ ինքզինք, կեանքէն ընդունած փուշերուն ու տատակներուն դէմ:

Գ. ՃԱՐՏԱՐ:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՄՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1981 — 1982

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպօ. Տէրաէրեան,
Բարեխնամ Գաորիարք Ս. Աթոռոյ,
Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր
և յարգելի հանգիսեակներ:

Գոհութիւն Առաւելոյ, որ դպրոցա-
կան ժամկերի այս առիթով անգամ մը
ևս կեցած ենք այս բնէին, ապա 1981-
1982 դպրոցական տարեշրջանի մեր Տեա-
շական Տեղեկագիրը:

Այս տարի մեր երկուսն աշակերտու-
թեան թիւը եղաւ 180, բաժնուած հետե-
ւալ կերպով. —

Երկրորդական՝ 20 մանչ, 32 աղջիկ
համագումար՝ 52
Նախակրթարան՝ 37 մանչ, 40 աղջիկ
համագումար՝ 77
Մանկապարտէզ՝ 31 մանչ, 20 աղջիկ
համագումար՝ 51
Ընդամենը՝ 180 աշակերտ:

Մեր խօսքը մեր աշակերտութեան
մասին դարձեալ պիտի ըլլայ գնահատա-
կան. չունեցանք կարգապահական և այլ
տեսակի որեւէ դժուարութիւն: Մօտ տասն-
հոկ մը աշակերտներ իրենց ընտանիքնե-
րուն հետ արտագաղթեցին գէպի Ամերիկա
և Աւստրալիա: Կ'ըսենք ասիկա ցաւ ի
տէրտ, որովհետեւ արտագաղթը դարձած է
այլևս ցաւալի երեսոյթ երուսաղէմի Հայ
գաղութին համար: Միջադպրոցին նշանա-
կութեամբ այս քաղաքին մէջ մենք պէտք
ունինք թիւով և որակով կշիռք ունեցող
հայկական համայնքի մը:

Մեր ուսուցչական կազմը կը բաղկա-
նար 28 երկսեռ, Հայ և օտար ուսուցիչ-
ներէ, որոնցմէ հինգը անդամներն են Ս.
Յակոբեանց Միաբանութեան:

Քաղաքիս ուսուցչական լաւագոյն
տարրերն են որ համախմբած ենք մեր
կրթական գործին շուրջ: Անոնք արդիւ-
նաւոր ու խղճամիտ աշխատանք տարին,
ու այս առթիւ բոլորին համար ունինք
միայն գնահատանքի խօսքեր ու շնորհա-
կալութեան զգուցումներ:

Մեր կրթական ծրագիրը եղաւ դարձ-
եալ Անգլիական General Certificate of
Education-ի ծրագիրը: Ուսուցինք Հայե-
րէն (Աշխարհաբար և Գրաբար), Անգլի-
րէն, Արաբերէն և Եբրայեցիքէն՝ չորս
լեզուներ, Մաթեմատիք, Գիտութիւն,
Պատմութիւն՝ նոյն G. C. E.-ի մակարդա-
կով, առաւել Հայագիտական դասեր, մեր
գրականութիւնը, պատմութիւնը և կրօնը:
Ուսուցման համար զօրծածական գլխաւոր
լեզուներն էին Հայերէնը և Արաբերէնը
Նախակրթարանի մէջ, իսկ Երկրորդական
կարգերու մէջ՝ Հայերէնը և Անգլերէնը:

Անցեալ տարւոյ մեր շրջանաւարտնե-
րէն անոնք որոնք մասնակցեցան G. C.
E.-ի քննութեանց, ունեցած են հետեւեալ
յաջողութիւնները. —

Աճի Տիգրանեան յաջողած է 6 նիւթե-
րու մէջ, որոնք են՝ Հայերէն, Անգլերէն,
Արաբերէն լեզուներ, Անգլիական Գրա-
կանութիւն, Ուսողութիւն (3 ճիւղերով)
և Պատմութիւն:

Սիրայոյ Ռաճոյեան՝ Անգլերէն, Արա-
բերէն, Եբրայեցիքէն լեզուներ, Անգլիա-
կան Գրականութիւն, Կենսաբանութիւն,
Պատմութիւն:

Աճուլա Քարաասափուլօս՝ Անգլերէն
և Արաբերէն լեզուներ, Անգլիական Գրա-
կանութիւն, Ուսողութիւն (3 ճիւղերով),
Քիմիաբանութիւն և Բնագիտութիւն:

Նւա Ֆեր Վարդանեսան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ, Անգլիական Գրականութիւն, Ուսողութիւն (3 ճիւղերով), Կալիֆոնիա Օհայոյոսան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։ Անի Սեւան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլիական Գրականութիւն։ Վիլիամ Գեորգեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։ Յակոբ Սևեհրեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։ Նորա Գարեան՝ Հայերէն լեզու և Անգլիական Գրականութիւն։

Անցեալ տարւոյ մեր 11 չընթանաւորներէն հետեւեալները կը շարունակեն իրենց համալսարանական ուսումը. — Անթուլլա Գարաթափուլուս, Անի Տիգրանեան, Նւա Տէր Վարդանեան, Կալիֆոնիա Օհայոյոսան, Նորա Գարեան և Վիլիամ Օհայոյոսան։ Յակոբ Սեւեհրեան և Սիրայդ Թաճոյան այս տարի կը սկսին հետեւի համալսարանական ընթացքի։ Մնացեալ երեքը նետուած են գործի ասպարէզ։

Մեր տարուան մը զոյգ ընդհանուր քննութիւնները տեղի ունեցան Կիւսամեային (1981 Դեկտ. 28—1982 Յուն. 8) և Ամովերջին (1982 Մայիս 18—29), որուն իբր արդիւնք՝ 4 անյաջող աշակերտներ կը կրկնեն իրենց դասարանները։ Իսկ 16 աշակերտներ, յաջողութեամբ աւարտած մեր վարժարանը, այսօր, Ամովերջի այս համալսարանին ընթացքին, կը ստանան իրենց աւարտական վկայականները։ Այդ աշակերտներն են հետեւեալները. —

Արամ Գարակէօզեան
Լևան Պոյաճեան
Յակոբ Սեւան
Յարութիւն Պէքարեան
Շահան Թաճոյան
Վիգէն Սեմէրեան
Աննա Օրէմփուլուս
Ժազլին Նալպանեան
Լուսին Մէնէշեան
Մէրի Գալէֆեան
Նորա Պետրոսեան
Սեգա Թադէօսեան
Սիւլվա Փանոսեան
Սուզան Աղապէկեան
Քհարիկ Պէնէսիլեան
Ֆէտրա Տէտա

Ասոնցմէ վեցը պիտի շարունակեն իրենց ուսումնական աշխատանքները, հետեւեով համալսարանական դասընթացքներու, երկուքը պիտի հետեւին արհեստագիտական յառաջացեալ դասընթացքներու, իսկ ութը պիտի նետուին գործի ասպարէզ։

Հայաստանի Պետական Համալսարանին աշակերտելու համար երեք չընթանաւոր համար կատարուած է դիմում, իսկ երկու աշակերտ համար ալ՝ Հայաստանի արհեստագիտական դասընթացքներուն։ Անցեալ տարւոյ մեր չընթանաւոր աշակերտ Սիրայդ Թաճոյանի համար եւ կատարուած է դիմում, որպէսզի հետեւի երեւանի Համալսարանի դասընթացքներուն։ Նախորդ տարիներէն այժմ Հայաստանի մէջ ունինք 13 աշակերտներ։

Այս տարի Մանկապարտէզի աշակերտներէն 11 հոգիներ կ'անցնին Նախակրթարանի բաժին։ Անոնք իրենց վկայականները ստացան Մանկապարտէզի Ամովերջի Հանդէսին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 30 Մայիսին։

Երբ կը խօսինք վարժարանիս նախորդ տարիներու չընթանաւորներուն մասին, կ'արժէ այստեղ յտեկապէս յիշել որ անոնցմէ Օր. Ալին Տէր Վարդանեան աւարտեց Պիր Զէյթ Գոլէճը և ստացաւ Անգլ. Գրականութեան մէջ իր Բ. Ա. (Bachelor of Arts) արձանագրութեան վկայականը։ Ան 300 աշակերտներու մէջ ստացած է բարձրագոյն միջինը (90%) և այժմ կը պաշտօնավարէ նոյն հաստատութեան մէջ իբրեւ ուսուցիչ։ Դարձեալ մեր աշակերտներէն ուրիշ երկուքը՝ Պոլոս և Վահէ Գարեան եղբայրներ, բացառիկ յաջողութեամբ աւարտած են իրենց համալսարանական ընթացքը և կը պաշտօնավարեն՝ առաջինը որպէս բժիշկ և երկրորդը իբրեւ ճարտարագէտ։ Դարձեալ ուրիշ երեք աշակերտներ՝ Անի Տիգրանեան, Կալիֆոնիա Օհայոյոսան և Յալիկ Տէր Վարդանեան բացառիկ յաջողութիւններ արձանագրած են իրենց համալսարանական դասընթացքներուն մէջ։ Իսկ Պարէտ Սաֆեան գերազանց նիշերով ստացած է Մ. Տ. արձանագրութեան մասնագիտութեան (Endocrinology) մէջ։ Ան անցեալ տարի ստացած էր պատուոյ նիշերով իր

Բ.Տ.Ը նայն ճիւղին մէջ, իսկ յառաջիկայ տարի պիտի ստանայ իր Ph.D.ն:

Հոգ տարինք մեր աշակերտներու հոգևոր-կրօնական դաստիարակութեան՝ կրօնքի դասաւանդութիւններով: Տօնական առիթներով անոնք մասնակցեցան Ս. Հաղորդութեան խորհուրդին: Կիրակի օրեր խմբովին առաջնորդեցինք զանոնք եկեղեցի, իսկ տօնական առիթներով անոնք մասնակցեցան արարողութեանց, իրենց մանկական քաղցր ձայնին ու շնորհքին նպաստով:

Երկուսն աշակերտութեան համար մեր մարմնակրթութեան շտապանքները և ոչ տունակուեցան ըստ նախընթացի, ամէնօրեայ յառաւել պահերով, որոնց արդիւնքը ներկայացուեցաւ մեր հանրութեան՝ մարզական դաշտանանդէտով մը, որ տեղի ունեցաւ Մայիս 9, Կիրակի, նախկին Ժառ. վարժարանի խաղավայրին վրայ:

Նմանապէս շարունակեցինք ձեռագործի պահերը, որոնց արդիւնքը ի վաճառ դրուեցաւ Կիրակի, 16 Մայիսին, մեր տարեկան Պաշարին, որուն կ'ընկերակցէր խրախմանքի բաժին մը: Զեռ. նորակին արդիւնքը եղաւ 700.000 իսր. Լիրա, որ պիտի երևի գալիք տարւանք մեր Տեղեկագրին մէջ:

Իսկ Կիրակի, Յունուարի 10ին ունեցանք մեր Ամանորի խրախմանքի օրը, որ վարժարանին ապահովեց 150.000 իսր. Լիրայի դուժար մը:

Սոյն ձեռնարկներուն առթիւ յատուկ շնորհակալութեան պարագ ունինք մեր նստիրատակներուն և ձեռնարկները կազմակերպող ուսուցչական կազմին ու արհիւններուն:

Ուսումնական ու բարոյական այս տեղեկատուութեան կը միացնենք նաև մեր ելեմտական տեղեկագրերը, որ հեռակալն է:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՆԵՐ ԵՒ ՅԱՐԳԱՆԱԶԱՐ ԵՐԿՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

1981 Յունիս 1 — 1982 Յունիս 30

Մ Ո Ւ Յ Ր

Գաւառոս ի դրամարկդ, փոխգրեւի 1981-1982 տարեշրջանէն
Նախարարութիւններէ
Ուսումնական տարեթուականներէ
Դասագրքերէ և դաստակարներէ (ծախքեր զեղչելէ ետք)
Հանդէսներէ, ձեռնարկներէ և 1981ի Պաշարէն
Մանր մասքերէ

Ի. Լ. Ակ.
1,263,246.47
12,847,360.00
1,855,045.00
18,000.00
615,670.00
4,500.00

Ընդհ. Մուտք 16,633,821.47

Ե Լ Ք

Ամսականք պաշտօնէութեան
Դասագրք, տետրեր, տարբալուծարանի գործիքներ, հանրագիտարաններ
Գրեական պիտոյք
Թղթատարական ծախքեր
Ձեռագործի նիւթեղէնք
Մանր ծախք և մարքութիւն
Հանդիսական ծախքեր
Շինուածական ծախքեր և կահոյից նորոգութիւնք
Տպարարական ծախքեր
Քացաւիկ ծախքեր և պատուաստութիւն
Հիւանդ ուսուցչի մը հասուցում (գործի քաշուելու առթիւ)

Ի. Լ. Ակ.
11,159,100.00
192,050.00
61,120.00
72,100.00
64,800.00
22,856.00
66,700.00
66,800.00
4,905.00
34,810.00
172,200.00

Ընդհ. Ելք 11,916,601.00

Գաւառոս ի դրամարկդ, որով վճարելի են դասուցիչներու
ամսականին արձակուրդի ամսականները
Անձեռնմխելի կարօտ ուսումնական ֆոնտ

2,817,320.47
1,000 000.00
16,633,821.47

Մարգարե Թաշենան, Ամերիկայ	12,000	Օր. Ֆլորենտ Եղաշենան, Ամերիկայ	6,500
Ռեյլբլան և Աւելն Գեյլբլան, Ամերիկայ	12,000	Տիգին Ֆլորենտ Մարթին, Ամերիկայ	6,500
Տէր և Տիգին Վ. Բարդենան, Ամերիկայ	12,000	Հայկ Գալուստեան, Լոնտոն	6,500
Տէր և Տիգին Հայկ Գալուստեան, Ամեր.	12,000	Տիգին Աղջիկ Հաւքենան, Ամերիկայ	6,500
Վարդենիկ և Ռոզ Սամարեան, Ամեր.	12,000	Տիգինայք Գարսեան Գեթլի և Սոֆիա	
Ճան և Էլիանոր Բէյթ, Ամերիկայ	12,000	Գէլկին, Գաւառ	6,000
Տէր և Տիգին Վարդապետ Գոյանեան, Ամ.	12,000	Օր. Էլեն Թաղարեան, Ամերիկայ	6,000
Տեարք և Տիգինանց Արամ, Էնգլիշ, Էնգլիշ	12,000	Տիգին Աղջիկ Գլենան, Ամերիկայ	6,000
Տիգինանց Միւսթին Էնգլիշ, Էնգլիշ	12,000	Արմինէ և Գերհ Բարդ, Ամերիկայ	6,000
Ս. Գր. Լուսաւորիկ Եղաշենայ	12,000	Սարգիս և Մարթա Գոգոսեան, Ամերիկայ	6,000
Տէր և Տիգին Գ. Գրիգորեան, Լոնտոն	11,500	Տէր և Տիգին Գ. Գոգիկեան, Ամերիկայ	6,000
Օր. Էլիզապէթ Եամբերեան, Ամերիկայ	11,500	Աւագ և Ռոզ Աստղեան, Ամերիկայ	6,000
Տէր և Տիգին Գ. Գէլբլան, Լոնտոն	11,400	Սաւրեն և Թադուհի Գաւառեան, Ամեր.	6,000
Ֆելքսուրի Երէք Անգլիշ, Էնգլիշ	11,200	Գարլ և Իւստ Գաւառեան, Ամերիկայ	6,000
Գերգ Գոգոսեան, Աւստրալիա	11,000	Գերգ և Սիլվիա Ստեփան, Ամերիկայ	6,000
Օր. Անի Գերգեան, Ամերիկայ	11,000	Տէր և Տիգ. Համար Գարսեան, Ամ.	6,000
Ճէյմս և Տեյգի Անթուստեան, Ամեր.	10,000	Տիգին Ռոբերտ Գարսեան, Ամերիկայ	6,000
Վահէ Գարսեան, Ամերիկայ	10,000	Եղաշենայ և Մարգարիտ Աղաշենան, Ամ.	6,000
Համապատասխան Վարդանեան, Ս. Փաւլո	10,000	Օր. Էլեն Թարաշենան, Ամերիկայ	6,000
Փաւլո Ներսէսեան, Ս. Փաւլո	10,000	Տիգին Աննա Թաւաղեան, Ամերիկայ	6,000
Խորեն Մամեան, Ս. Փաւլո	10,000	Տիգին Սելիա Թաւաղեան, Ամերիկայ	6,000
Ճոզէ Տիգլեքենան, Ս. Փաւլո	10,000	Վարդապետ և Տիգին Գեղաշենան, Ամեր.	6,000
Ճոզէ Սերայտարեան, Ս. Փաւլո	10,000	Տէր և Տիգ. Գալուստ Գարսեան, Ամ.	6,000
Գրիգոր Արման, Ս. Փաւլո	10,000	Տէր և Տիգին Էրենթ Եարք, Ամերիկայ	6,000
Գաւառիկ Գալուստեան, Ս. Փաւլո	10,000	Արա և Աննա Եղաշենան, Ամերիկայ	6,000
Ճէթ. Արամ և Վերթին Գաւառեան, Ամ.	10,000	Ֆրանք Գէլբլան, Ամերիկայ	6,000
Արգար Զաքարեան, Հայֆա	10,000	Կիրակոսեան Գրգոր, Ս. Ֆրանչիսկո	6,000
Տիգին Լիլիան Գոյանեան, Ամերիկայ	10,000	Տիգին Մարտի Ճոնսոն, Ամերիկայ	6,000
Հայկ Լիլիանց Միւսթին, Թենիֆլայ	10,000	Տիգին Եղաշենայ Մարգարեան, Ամեր.	6,000
Գաւառիկ Վարդանեան, Ամերիկայ	10,000	Ճան Մաշեան, Ամերիկայ	6,000
The Triple X Fraternity	10,000	Օր. Ալիս Թաղարեան, Ամերիկայ	6,000
Օր. Ռոզ Վարդանեան, Ամերիկայ	9,900	Տէր և Տիգին Գաւառիկ, Աւստրալիա	6,000
Զարգարեան Հաստատութիւն, Ամերիկայ	9,500	Տիգին Սերայտար Երման, Ամերիկայ	6,000
Տիգին Բերդուհի Սիւնեան, Ամերիկայ	9,000	Ճան Կիրակոսեան, Ամերիկայ	6,000
Տիգին Եւալդ Գարսեան, Ամեր.	9,000	Տիգին Վարդուհի Սիւնեան, Ամերիկայ	6,000
Վան Երևան Կիրակոսեան Վարդարեան	8,500	Տիգին Մարթա Համաշենան, Ամերիկայ	6,000
Երման և Ալիս Մատանեան, Ամերիկայ	8,500	Տիգին Արաշենայ Տէլենեան, Ամերիկայ	6,000
Ճէթ. Միլայիկ Աւագեան, Ամերիկայ	8,500	Տէր և Տիգին Թ. Գոյանեան, Ամերիկայ	6,000
Օր. Էլեն Լանդեան, Ամերիկայ	8,500	Օր. Արմինէ Թաղարեան, Ամերիկայ	6,000
Փիթըր և Տոլորեմ Տրիվիան, Ամերիկայ	8,400	Տէր և Տիգին Թ. Մաշեան, Լոնտոն	5,700
Տէր և Տիգին Գարո Ֆարսեան, Ամեր.	8,000	Տէր և Տիգին Թ. Արթուր, Լոնտոն	5,700
Տէր և Տիգին Գեղարդեան, Ամերիկայ	8,000	Օր. Թերեզ Թարաշենան, Ամերիկայ	5,500
Հայկ Եղաշենայ Եղաշենայք, Գ. Այրէն	7,500	Ռեյնոլդս	5,400
Թաղար Եղաշենան, Ամերիկայ	7,500	Թաղար Եղաշենան, Ամերիկայ	5,000
Մամուլի Թաղարեան, Ամերիկայ	7,500	Տէր և Տիգ. Գերգ Գրիգորեան, Լոնտոն	5,000
Ալիս և Մարգարիտ Բարդեանեան, Ամ.	7,200	Տէր և Տիգ. Գրիգորեան, Լոնտոն	5,000
Եղաշենայ և Գերթա Գալուստեան, Ամեր.	7,200	Տէր և Տիգ. Մարգարիտ Գրիգորեան, Լոնտոն	5,000
Էնգլիշ Կարապետեան, Ամերիկայ	7,200	Օր. Մերթին Մարգարեան, Գաւառ	5,000
Օր. Տիգին Մարթին, Ամերիկայ	7,000	Հայկ Եղաշենայ Տիգին, Մոնթրէալ	5,000
Ճէթ. Գոգոս Գարսեան, Ամերիկայ	7,000	Տիգին Եղաշենայ Ռոզմանեան, Ամերիկայ	4,800
Տէր և Տիգին Արնի Անտոն, Ամերիկայ	7,000	Միլայիկ Մարգարեան, Ամերիկայ	4,700
Տէր և Տիգին Ֆրէնք Մալենք, Ամեր.	7,000	Գ. Ս. Թաւաղ, Լոնտոն	4,500
Տիգին Արտեմիս Մալենքեան, Ամերիկայ	7,000	Ստեփան Բաշեան, Աւստրալիա	4,200
Վարդուհի և Լուկաս Կրեյթեր, Լոնտոն	6,500	Օր. Տէղար Թաւաղեան, Ամերիկայ	4,000
Տէր և Տիգին Միլայիկ Ռիլիան, Ամեր.	6,500	Գարսեան Եղաշենայ, Ամերիկայ	3,500
Թաւաղիկ Արաշենան, Գ. Այրէն	6,500	Վահէ Մալենքեան, Ամերիկայ	3,500
Գրիգոր Արաշենան, Գ. Այրէն	6,500	Թ. Անտոն, Ամերիկայ	3,300
Յովաննէս Միլանեան, Գ. Այրէն	6,500		

Մեր Տեղեկագրի վերջնաբաժան, կը յիշատակենք շարք մը պատուական և մեծնագիտանալու թիւներ, որոնք մեծազուգար նաւերաւու թիւներով պահեցին ամբողջական դասարաններ:

Մեր բաղրին որդիական սէրը, երկրագծ յարգանքն ու երախտագիտութիւնները կը յայտնենք Ն. Ս. Օծու թիւն Տ. Տ. Վաղգէն Ա. Սրբազնագոյն կաթողիկոսին, որուն հայրական բարեհաճ կարգադրութեամբ այս տարի եւ օգոստոսեանք Արքեպիսկոպոս Աւետիկ խնամակալութենէն (Լոստան), 500 Սթերլինի նուիրաբաւութեամբ:

Մեր արտադին ու յարգալից շնորհակալութիւնները Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեանն Նախագահ Տիար Ալեքս Մանուկեանի եւ իր ազնուատիրա Տիկին՝ Մարիի, մեր կըրթական գործին նկատմամբ իրենց ցոյց տուած հոգածու եւ աշխիւ նովանաբաւութեան համար: Նորին վսեմութեան կարգադրութեամբ մեր վարժարանը ամէն տարի կը ստանայ 1000 Տոլարի նուիրաբաւութիւն մը Հ. Բ. Ը. Մ. Փիթըր եւ Էլիզապէթ Թորոսեան Հիմնադրամէն, իսկ տարւոյս ընթացքին, տնոնք մեր կըրթական գործին օժանդակեցին 3000 Տոլարի նուիրաբաւութեամբ:

Մեր խոր երախտագիտութեան խօսքը Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան (Լիւպոն), որ այս տարի 3000 Տոլարի նուիրաբաւութեամբ օժանդակեց մեր կըրթական գործին: Ասկէ դատ, 2500 Տոլարի բացառիկ նուիրաբաւութեամբ յանձն առած է կատարել կարգ մը շինարարական նորոգութիւններ մեր վարժարանէն ներս, որոնք պիտի իրադարձուին մեծ արձակուրդի ընթացքին:

Շնորհակալութեան խօսք ունինք Ամերիկայի Համասերաստանայ Վերաշինաց Միութեան (Pan Sebastian Compatriotic Union), որ 1000 Տոլարի տարեկան նուիրաբաւութեամբ դասարան մը կը պահէ մեր վարժարանէն ներս «Սերաստիոյ Ս. Նշան Վանք»ի անունով:

Երախտագիտութեան զգացումներով կը յիշատակենք անունները Հարաւային Ամերիկայէն Սէֆէրեան ընտանիքին եւ անոր զանազան հիւղաւորութիւններուն (Սէ-

ֆէրեան, Վարդապետնեան, Սարեան), որոնք կը պահեն չորս դասարաններով ամբողջ յարկաբաժին մը: Այս ընտանիքները, իրենց առատաձեռն նուիրաբաւութիւններով, չորս դրական նպաստ մը բերին մեր կըրթական գործին նիւթական մատակարարութիւններուն յարգարման: Մանրամասնելով՝

Նորոգ հանգուցեալ Տիար Կոպեւնիկ Սէֆէրեան նուիրաբերեց 4000 Տոլար, պահելու համար իր անունով ամբողջ դասարան մը:

Տիար Էտեւարտ Սէֆէրեան եւ մայրը՝ Տիկին Քէթրին նուիրաբերեցին 4000 Տոլար, բարեբարելով իրենց անունով դասարան մը:

Տէր եւ Տկ. Գէորգ եւ Աւրինէ Վարդապետնեաններ 2000 Տոլարի նուիրաբաւութեամբ պահեցին իրենց անունով դասարան մը:

Տէր եւ Տիկին Արտուշէս եւ Սօնա Սարեաններ 2000 Տոլարի նուիրաբաւութեամբ պահեցին դասարան մը իրենց ընտանիքի անունով:

Այստեղ ցաւով պէտք է յիշենք անապընկալ մահը մեր բարերարին՝ Տիար Կոպեւնիկ Սէֆէրեանի, որուն համար կատարեցինք յատուկ հոգեհանգստեան պաշտօն, իսկ այս առթիւ պէտք է խորին երախտագիտութեամբ յիշատակել որ իր քրոջ զաւակը՝ Տիար Արտուշէս Սարեան եւ իր ազնիւ Թիկինը՝ Սօնա, 10,000 Տոլարի Եւրիշ նուիրատուութիւն մը ըրին մեր վարժարանին, ի յիշատակ իրենց պատուական եւ շատ Թիքիլի մօրեղբոր: Իսկ մենք, յաւերժացնելու համար յիշատակը մեր մեծանն հանգուցեալ բարերարին, յարմար նկատեցինք սոյն գումարը պահել անձեռնմխելի, եւ անոր հասոյթը յատկացնել կարօտ ուսանողներու դաստիարակութեան, այսպէս կրկնակիբէն արժեւորելով Տէր եւ Տիկին Արտուշէս եւ Սօնա Սարեաններուն ներկիւղած սէրն ու յարգանքը հանգէպ իրենց հանգուցեալ մօրեղբոր:

Մեր արտադին շնորհակալութիւնները Տէր եւ Տիկին Զարեհ (Փոյ) Պատեկեաններուն, որոնք 2500 Տոլարի նուիրաբաւութեամբ կը տնտեսեն մեր Մանկապարտեղը, որ իրենց հանգուցեալ մօրաքրոջ ի յիշ-

շառակ, Գը կոչուի Մոնիա Տէր Մեարապը կան Մանկապարտէզ, Ան եղած է Սեբաստիայ առաջին ուսուցչունին և Մոնիա-պարտիպանունին:

Սրտագին շնորհակալութիւններ՝ Հալուային Ամերիկայէն Տիար Վարդգէս Երէցեանին, որ 8000 Տոլարի նուիրաւորութեամբ պահեց այս տարի դասարանի մը իր հանգուցեալ Տիկնոջ՝ Էլվիրի ի յիշատակ, իոր երախտագիտութեամբ պէտք է յիշատակենք այսօրէի որ Պր. Երէցեան այնքան խանդավառուած է մեր զգրուցի կրթական աշխատանքով ու յաջողութեամբով, որ այս տարի ինքնարք օրինով մը իր նուիրատուութիւնը բարձրացուց հինգէն՝ ութ հազար Տոլարի: Կ'ողթենք ի որով իր հանգուցեալ և սիրելի Տիկնոջ հոգեւոյն հանգստեան համար:

Մեր զգածուած շնորհակալութիւնները Հասուցրա Գորակէզեան Նիմուրկուն-Քան և անոր աղնուածօրոյ Նախագահուհիին՝ Օր. Լէյլա Գարակէզեանին, որ տարեկան 1000 Տոլարի նուիրաւորութեամբ այս տարի ևս պահեց ամբողջական դասարանի մը ի յիշատակ հանգուցեալ Հասուցրա Գորակէզեանին:

Շնորհակալութիւններ Տէր և Տիկին Եղուարդ և Լէյլն Մարտիկեան զոյգին, որոնք տարեկան 1000 Տոլարի նուիրաւորութեամբ դասարանի մը կը պահեն իրենց և իրենց զերգաստանի անունով:

Երախտագիտութեան խօսքեր ունինք Տէր և Տիկին Էսուրա Փանոսեաններուն, որոնք 1500 Տոլարի տարեկան նուիրաւորութեամբ ամբողջ դասարանի մը բարեբարեցին իրենց ընտանիքի անունով:

Խորին շնորհակալութեամբ կ'արձանագրենք անունները Հարաւային Ամերիկայէն Տէր և Տիկին Գերգը և Վերա Գարակէզեաններուն, որոնք ժող 2000 Տոլարի նուիրաւորութեամբ այս տարի ևս բարեբարեցին հանգիստեան իրենց անունով դասարանի մը:

Շնորհակալութիւններ Տէր և Տիկին Ճան և Ակնէս Կապրիէլին, որոնք այս տարի ևս 1000 Տոլարի նուիրաւորութեամբ բարեբարեցին դասարանի մը:

Նմանապէս Գալիֆօրնիայէն Տէր և Տիկին Ռիչըրտ և Կլորիս Մանուսեաններ 1000 Տոլարի տարեկան նուիրաւորութեամբ

Քեամբ պահեցին դասարանի մը իրենց ընտանիքի անունով: Շնորհակալութիւններ իրենց:

Տէր և Տիկին Ուոլթըր և Գերըլ Գարապեաններ ա'լ միայն 1000 Տոլարի նուիրաւորութեամբ պահեցին ամբողջական դասարանի մը, այլ և իրենց օրին ու նոյն ժակրանքը հանգէպ Սրտոց Թարգմանաց Վարժարանի գործին վերածեցին գործնական բարեբարեան՝ իրենց ընկերային խան շրջանակէն ներս: Շնորհակալութիւններ իրենց:

Շնորհակալութիւններ Կիլլապիէլի-Ալէնիան Հասուցրութեան ի Նիւ Եօրթ, որ տարիներէ ի վեր 2000 Տոլարի նուիրաւորութեամբ ամբողջական դասարանի մը կը պահէ Հասուցրութեան անունով:

Շնորհակալութիւններ Ամերիկայէն Տիար Սուրէն Ֆէռնանդէսին, որ իր և իր գերգաստանի անունով կը պահէ Ֆէռնանդէսեանը, տարեկան 1000 Տոլարի նուիրաւորութեամբ:

Տիար Ռիչըրտ Կրէկօրի 3000 Տոլարի նուիրաւորութեամբ պահեց դասարանի մը, իր սիրեցեալ մօր՝ Կապուցեալ Տիկին Ալիս Գարապեանի-Կրէկօրի անունով: Շնորհակալութիւններ իրենց, Աստուած լուսաւորէ հանգուցեալ և սիրեցեալ իր մօր հոգին:

Մեր Վարժարանի նախկին սաներէն, այժմ Ամերիկայեան Տէր և Տիկին Գրիգոր և Յասմին Մատուրեաններ տարեկան 1000 Տոլարի նուիրաւորութեամբ կը պահեն Մատուրեան դասարանի մը վարժարանէն ներս, որ եղած է իրենց ժանկարութեան առաջին բոյնը: Շնորհակալութիւններ իրենց՝ մեր երախտագէտ սաներուն:

Շնորհակալութիւններ Ամերիկայեան աղիտափայլ Տիկին Ալիս Գալուքճեանի, որ այս տարի իր հանգուցեալ մօր անունով բարեբարեց ամբողջ դասարանի մը:

Հարաւային Ամերիկայէն Տիար Մուսուկ Տիարպէրեան, տարեկան 1000 Տոլարի նուիրաւորութեամբ կը բարեբարեց Սարգիս Տիարպէրեան անունով ամբողջական դասարանի մը: Շնորհակալութիւն ուղին նուիրաւորութիւն:

Գարձեալ Հարաւային Ամերիկայէն Տիկին Մարթա Տիարպէրեան և իր

գուտարը՝ Ալէկսի Կարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի բարերար ընդհանուր արտադրանքի իրենց հանգուցեալ ամուսնոյն և հոր՝ Յովնանէն Տիարպէ-քիբեանի անունով: Ծնորակալութիւն իրենց:

Խորին շնորակալութիւններ Լսնառնէն Յակոբ և Երուանդ Էսէֆեան եղբայրներուն, որոնք Կարեկան 500 Սթերլինի նուիրատուութեամբ ինքնաբեր մը զուտով յանձն առին բարերարութիւնը գումարանի մը, ի յիշատակ իրենց հանգուցեալ հոր՝ Միհրան Էսէֆեանի: Աստուած լուսաւորէ իր հոգին:

Երախտագիտութեամբ կը յիշենք անունը նախապէս զրազեալ Գրիգոր Զօնրապի գասիր՝ Տիգրի Տօլորէս Լէյպզիտի, որ ըստ նախընթացի, այս տարի ևս օգնեց մեր վարժարանին 400 Տոլարի նուիրատուութեամբ:

Ծնորակալութիւններ Ստեփան Փիլիպպոսեան Լաստատուութեան և իր յարգելի նախադաս Տիար Ալպէրթ Մամհեանին, որ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ գումարան մը կը պահեն:

